


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ





Սույն զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ՀՏԴ 342:341(042.3)
ԳՄԴ 67.400+67.9
Հ 247

Փորձագետ՝ Վարդուհի Ավանեսյան
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Այվազյան

Հայաստանի ազդարարման համակարգի համապատասխանությունը
Հ 247 միջազգային սկզբունքներին.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ
հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024.- 185 էջ:

Չեկույցի նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը՝ բարեփոխելու ՀՀ ազդարարման համակարգը և ազդարարներին տրամադրվող իրավական պաշտպանությունը: Այն կարող է օգտակար լինել լավագույն փորձի ուսումնասիրության, ինչպես նաև ազդարարման առնչվող ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար, քանի որ կետ առ կետ վերլուծում է ազդարարման փուլերն ու բաղադրիչները ու վերջիններիս համապատասխանությունը ԵՄ օրենսդրությանն ու միջազգային ստանդարտներին:

ՀՏԴ 342:341(042.3)
ԳՄԴ 67.400+67.9

ISBN 978-9939-1-1953-3
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
www.transparency.am

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	3
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	4
ՆԱԽԱԲԱՆ.....	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	12
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ.....	14
I. Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները	14
Նյութական շրջանակ. ազդարարման ենթակա տեղեկությունը	14
Անձանց շրջանակ. հանրային և մասնավոր հատվածներ.....	15
Անձանց շրջանակ. ազդարարի սահմանումը.....	16
Անձանց շրջանակ. պաշտպանության ենթակա երրորդ կողմերը	17
Պաշտպանությունից օգտվելու պայմանները և շեմը.....	18
II. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը.....	21
Աշխատատեղում (ներքին) ազդարարում.....	22
Իրավասու մարմիններին (արտաքին) ազդարարում.....	24
Ազդարարում հանրությանը	27
III. Պաշտպանության միջոցները	29
Գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը	29
Անանունությունը	32
Հաշվեհարդարի արգելքը և դրանից պաշտպանությունը.....	35
Ապացուցման բեռը	37
Պատասխանատվությունը հաշվեհարդարի և միջամտության համար	38
Իրավաբանական օգնություն և խորհրդատվություն ստանալու իրավունք	40
IV. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները.....	41
Հանրային մասնակցությունը.....	41
Ազդարարման վերաբերյալ վիճակագրության վարում և հրապարակում	43
Խրախուսման համակարգ.....	45
Ազդարարման պատասխանատու մարմին	46
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	53
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հայաստանի ազդարարման համակարգի համապատասխանությունը միջազգային ստանդարտներին	57
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ազդարարման համակարգի հաջողված օրինակներ	178
Գրականության ցանկ	182

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԳՐԵԿՈ	Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ՁԼՄ	Չանգվածային լրատվության միջոցներ
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակական կազմակերպություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ազդարարման համակարգի հիմքերը ներդրվել են հակակոռուպցիոն քաղաքականության համատեքստում 2017 թվականի հունիսի 9-ին «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) ընդունմամբ, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ին: Չնայած ՀՀ կառավարության կողմից որդեգրած կոռուպցիայի դեմ պայքարին և այդ շրջանակում իրականացվող բազմաթիվ միջոցառումներին՝ ազդարարման համակարգը Հայաստանում պատշաճ չի գործում:

Սույն հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը՝ բարեփոխելու ՀՀ ազդարարման համակարգը և ազդարարներին տրամադրվող իրավական պաշտպանությունը: Խնդիրն է՝ գնահատել ՀՀ օրենսդրության բացերը միջազգային ստանդարտների համեմատ և վերհանել առկա իրավական խնդիրները, որոնք խոչընդոտում են ազդարարման համակարգի կայացմանը Հայաստանում:

Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքում ներկայացված քաղաքականության առաջարկների հասցեատերերը, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պատշաճ ընթացք կտան առաջարկներին՝ խթանելու ազդարարման համակարգի արդյունավետությունը և քաղաքացիների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում, որն առանցքային դեր ունի կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար տանելու համար:

Վերլուծությունն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) կազմակերպության կողմից մշակված «Ազդարարման օրենսդրության գնահատումը. ԵՄ դիրեկտիվի և լավագույն պրակտիկայի համեմատ գնահատման մեթոդաբանություն և ուղեցույց» փաստաթղթի համաձայն,¹ որի հիմքում ընկած են ԹԻ «Ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքները»,² և ԹԻ «Ազդարարման վերաբերյալ օրենսդրության լավագույն պրակտիկայի ուղեցույցը»³ և Եվրոպական Միության (ԵՄ) համապատասխան դիրեկտիվի պահանջները:⁴

¹ Transparency International, Assessing Whistleblowing Legislation, Methodology and guidelines for assessment against the EU Directive and best practice, 2020, https://images.transparencycdn.org/images/2020_Toolkit_AssessingWhistleblowingLegislation_EN.pdf (դիտված՝ 08.09.2024).

² Transparency International, International Principles for Whistleblower Legislation. Best Practices for Laws to Protect Whistleblowers and Support Whistleblowing in the Public Interest, <https://www.transparency.org/en/publications/international-principles-for-whistleblower-legislation> (դիտված՝ 11.09.2024).

³ Transparency International, A Best Practice Guide for Whistleblowing Legislation, <https://www.transparency.org/en/publications/best-practice-guide-for-whistleblowing-legislation> (դիտված՝ 08.09.2024).

⁴ EU, Directive 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law” (Whistleblower Protection Directive), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32019L1937> (դիտված՝ 11.09.2024).

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ 4 խմբերում դասակարգված 25 ցուցանիշներով՝

1. Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները (5 ցուցանիշ),
2. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը (8 ցուցանիշ),
3. Պաշտպանության միջոցները (10 ցուցանիշ),
4. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները (2 ցուցանիշ):

Յուրաքանչյուր ցուցանիշի վերլուծության համար իրականացվել է օրենսդրության և առնչվող այլ փաստաթղթերի ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն, որի արդյունքում ի մի են բերվել ազդարարման մասին ՀՀ օրենսդրության լավարկմանն ուղղված հետևյալ առաջարկությունները՝

Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները

1. Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով (օրինակ՝ մասնավոր կազմակերպություններում ազդարարման օրինակելի կարգ) սահմանել մասնավոր կազմակերպություններում ազդարարման ընդհանուր պահանջները և ընթացակարգերը աշխատողների ազդարարման իրավունքը երաշխավորելու նպատակով:
2. Ընդլայնել «ազդարարի» սահմանումը և հստակեցնել «այլ հարաբերությունների մեջ» գտնվելու եզրույթը:
3. ՀՀ օրենսդրության մեջ նույնպես հստակ նախատեսել պաշտպանության ենթակա երրորդ անձանց շրջանակը և ընդլայնել փոխկապակցված անձանց սահմանումը:
4. Առաջնորդվել «ուշադրության կենտրոնում պետք է լինի հաղորդագրությունը, այլ ոչ թե սուրհանդակը» սկզբունքով և բարեխիղճ համարել ցանկացած ազդարարում, որն անկախ առավելությունն ստանալու կամ այլ շահադիտական նպատակներից, պարունակում է ենթադրյալ ճշգրիտ տեղեկատվություն ազդարարման ենթակա անօրինական գործողության մասին:
5. Հստակ սահմանել պատասխանատվությունից ազատելու գաղտնիք պարունակող տեղեկատվության ազդարարման դեպքում՝ որպես նախապայման սահմանելով բացառությունը սուտ մատնության և կեղծ տեղեկատվության համար: Ավելին, կարևոր է ունենալ հստակ սահմանված ընթացակարգ պետական գաղտնիք պարունակող և ազգային անվտանգությանն առնչվող ազդարարման դեպքերի համար:
6. Օրենսդրության մեջ ներդնել այն սկզբունքը, որ անձը պաշտպանվում է վնասակար գործողությունների սպառնալիքից և վնասակար գործողություններից, ինչպես նաև որևէ պատասխանատվությունից, եթե կամովին հրաժարվում է անօրինական գործողություններ կատարելուց:

II. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը

7. Ներքին ազդարարման պարագայում նախատեսել պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր իրավասու մարմնի կողմից ազդարարումը ստանալու, սակայն անտեսելու, հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու ու ՀՀ դատախազություն չներկայացնելու, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելու և ազդարարին լրացուցիչ պարզաբանումներ տալու հնարավորությունից զրկելու պարագայում: Նաև

անհրաժեշտ է ունենալ հստակ դրույթ՝ ձեռնպահ մնալու ազդարարելուց այն պաշտոնատար անձանց, որոնք իրենք են ներգրավված ազդարարման առարկա հանդիսացող գործողության մեջ կամ ազդարարի ենթադրությամբ չեն կարող լինել անկողմնակալ:

8. Հետամուտ լինել ազդարարման պատասխանատուների նշանակման գործընթացին և հնարավորինս սեղմ ժամկետներում նրանց համար կազմակերպել վերապատրաստում, ինչն արդեն իսկ սահմանված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով: Նախատեսել ազդարարման պատասխանատուների գործունեության համակարգման և վերահսկման մարմին՝ վերապահելով այս գործառույթը ՀՀ արդարադատության նախարարությանը, ինչն արդեն իսկ նախատեսված է վերապատրաստումների համար:
9. Մասնավոր կազմակերպությունների համար ազդարարման ընդհանուր պահանջների և ընթացակարգերի շրջանակում նախատեսել ներքին ազդարարման մեխանիզմների առկայություն:
10. Ցանկացած պարագայում թե՛ միասնական հարթակի միջոցով, թե՛ իրավապահ մարմիններին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող հաղորդումները համարել ազդարարում և հաշվի առնել համապատասխան վիճակագրության շրջանակում: Այս առումով վերացնել Օրենքի վերոնշյալ այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:
11. Ապահովել թե՛ ներքին, թե՛ արտաքին և թե՛ հանրությանն ազդարարելու տեսակների միաժամանակյա օգտագործման հնարավորությունը:
12. Պարզաբանել «իրավասու մարմին» հասկացությունը Օրենքի 9.2-րդ հոդվածի տեսանկյունից:
13. Նախատեսել իրավական կարգավորում այն դեպքերի համար, երբ ազդարարումն իր մեջ պարունակում է պետական գաղտնիք և կապված է ազգային անվտանգության հարցերի հետ:

III. Պաշտպանության միջոցները

14. Մշակել և իրականացնել հստակ գործողությունների ծրագիր՝ ուղղված ազդարարման միասնական հարթակի՝ azdararir.am, բարելավմանը՝ միաժամանակ, սակայն, առաջարկելով այն օգտագործել ծայրահեղ դեպքերում՝ իրական վտանգների առկայության պարագայում:
15. Ազդարարման անանուն հարթակում նախատեսել դիմումների ավելի պարզ մուտքագրում, ներառել համապարփակ և մանրամասն վիճակագրության և՛ քանակական, և՛ որակական տվյալներ, որը կարող է օգտագործվել այլ շահագրգիռ կողմերի, մասնավորապես ՔՀԿ-ների կողմից ազդարարման համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը գնահատելու նպատակով:
16. Վերապահել ազդարարման հաղորդումների միասնական հարթակի ցանցային ադմինիստրատորի գործառույթի իրականացումը պետական կառույցի:
17. Վերանայել վնասակար գործողությունների սահմանումը՝ Օրենքի 2-րդ հոդվածում ներառելով այլ՝ ոչ աշխատանքային բնույթի, վնասակար գործողությունները, և նշել

հաշվեհարդարի սպառնալիքը, որի դեպքում անձը նույնպես ենթակա է պաշտպանության, իսկ 10-րդ հոդվածը համալրել այլ՝ ոչ աշխատանքային բնույթի պաշտպանության միջոցներով՝ ուղղված հաշվեհարդարից պաշտպանելուն:

18. Օրենքով հստակեցնել, թե որ իրավասու մարմինն պետք է դիմի ազդարարը հատուկ պաշտպանություն կիրառելու համար՝ ՀՀ դատախազություն, թե՛ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև հստակեցնել հատուկ պաշտպանության միջոցների կիրառման հնարավորություններն ու ընթացակարգը քրեական բնույթ չկրող ազդարարումների պարագայում:
19. Հստակեցնել քրեական վարույթից դուրս ազդարարման դեպքերում հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու դեպքերը:
20. Ներպետական օրենսդրությամբ ունենալ հստակ ընթացակարգեր, որոնք նախատեսում են ցանկացած միջամտության պարագայում կարգապահական, վարչական, քաղաքացիական, ընդհուպ քրեական պատասխանատվություն:
21. Սահմանել հոգեւոցիալական աջակցության հնարավորություն և ձեռնարկել գործուն քայլեր այդ ուղղությամբ, օրինակ՝ հաստիք նախատեսել ՄԻՊ գրասենյակում:
22. Լրացնել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը և նախատեսել հատուկ ընթացակարգ վնասների փոխհատուցման և միջանկյալ պաշտպանական միջոցներ կիրառելու համար:
23. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով անվճար իրավաբանական օգնության շահառուների ցանկում ավելացնել ազդարարներին ու ազդարարների հետ փոխկապակցված անձանց:

IV. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները

24. Հետամուտ լինել հանրային մասնակցության խրախուսմանը որոշումների ընդունման վաղ փուլերում, այդ թվում՝ նախատեսել դեմ առ դեմ հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:
25. Կատարելագործել իրավաստեղծ գործընթացում հանրային մասնակցության կարգավորումները և դրան սպասարկող՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft հարթակը: Հանրային քննարկումների իրականացման նկատմամբ սահմանել որոշակի հսկողություն/համակարգում, իսկ իրավակարգավորումների խախտմամբ ընդունված իրավական ակտերի դեպքում՝ իրավական հետևանքներ և պատասխանատվություն:
26. Կատարելագործել ազդարարման վիճակագրական համակարգը՝ ընդլայնելով իրավասու մարմինների կողմից ազդարարմանն առնչվող հավաքագրման ենթակա տվյալների ցանկը (ինչպես քանակական, այնպես էլ որակական), հստակեցնելով ընթացակարգերը, և հետամուտ լինել հավաքագրված/մշակված տվյալների հրապարակմանը իրավասու բոլոր մարմինների կայքերում և դրանց ներկայացմանը ՄԻՊ-ին՝ ապահովելով ՄԻՊ-ի կայքում և ազդարարման միասնական հարթակում համապարփակ տվյալների ներկայացում և վերլուծություն:
27. Դիտարկել որպես խրախուսման մոդել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի կարգավորումները: Առնչվող խրախուսման միջոցներ կարող են նախատեսել իրավասու մարմինները՝ նաև արտաքին ազդարարումներ ստանալու պարագայում: Դիտարկել դրամական պարգևատրումների հնարավորությունը միայն որոշակի շեմից բարձր՝ խոշոր կոռուպցիոն բացահայտումների և վնասի վերականգման դեպքում՝

Նախապես գնահատելով դրա հնարավոր հետևանքները մշակութային համատեքստում:

- 28.** Սեղմ ժամկետներում լուծել ազդարարման ոլորտի համակարգման լիազորված մարմնի հարցը, այդ թվում հստակեցնել տարբեր կառույցների գործառույթները և նախատեսելով բավարար ու պատշաճ մարդկային ռեսուրսների ներգրավում և համապատասխան պաշտոնյաների վերապատրաստում:

ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականից Հայաստանում ներդրվել է ազդարարման համակարգ, որի միջոցով շահագրգիռ քաղաքացիները և կազմակերպությունները կարող են տեղեկություններ հաղորդել կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի բախման, էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ: Չնայած ՀՀ կառավարության կողմից որդեգրած կոռուպցիայի դեմ պայքարին և այդ շրջանակում իրականացվող բազմաթիվ միջոցառումներին՝ ազդարարման համակարգը Հայաստանում պատշաճ չի գործում:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության⁵ և ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրում⁶ որպես մասնավոր նպատակ նախատեսված է «Ազդարարման համակարգի կատարելագործումն ու արդիականացումը»՝ մասնավորապես նախատեսելով մի շարք միջոցառումներ՝ ապահովելու ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը, զարգացնելու ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը, կատարելագործելու ազդարարման էլեկտրոնային հարթակը և կատարելագործելու ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

Սույն հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը՝ բարեփոխելու ՀՀ ազդարարման համակարգը և ազդարարներին տրամադրվող իրավական պաշտպանությունը: Խնդիրն է գնահատել ՀՀ օրենսդրության բացերը՝ միջազգային ստանդարտների համեմատ և վերհանել առկա իրավական խնդիրները, որոնք խոչընդոտում են ազդարարման համակարգի կայացմանը Հայաստանում:

Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքում ներկայացված քաղաքականության առաջարկների հասցեատերերը, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պատշաճ ընթացք կտան առաջարկներին՝ խթանելու ազդարարման համակարգի արդյունավետությունը և քաղաքացիների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում, որն առանցքային դեր ունի կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար տանելու համար:

⁵ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-L որոշման Հավելված 2, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը, <https://moj.am/storage/uploads/1871.2.pdf> (դիտված՝ 11.09.2024):

⁶ Նույն տեղում:

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Ազդարարման համակարգի հիմքերը Հայաստանում ներդրվել են հակակոռուպցիոն քաղաքականության համատեքստում 2017 թվականի հունիսի 9-ին «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Նաև Օրենք) ընդունմամբ, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ին:⁷

Այդ տարիներին կոռուպցիան կրում էր համակարգային բնույթ, որը տարածված էր բոլոր ոլորտներում՝ մինչև իշխանության վերին մակարդակ, և կառավարության օրակարգում կոռուպցիայի դեմ իրական և անկեղծ պայքար չէր նշմարվում: Իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները, հիմնականում իրավակարգավորումների ընդունման տեսքով, հաճախ իրականացվում էին միջազգային կազմակերպությունների ակնկալիքները բավարարելու նկատառումներով, ուստիև դրանց արդյունավետությունն առանձնապես չէր կարևորվում:

2022 թվականին, արձագանքելով միջազգային կառույցների, մասնավորապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) առաջարկներին, իրականացվեցին մի շարք փոփոխություններ, այդ թվում ավելացվեց ազդարարման երրորդ տեսակը՝ հանրությանը ազդարարելու հնարավորությունը, ինչպես նաև ազդարարման վերաբերյալ վիճակագրություն վարելու պարտավորությունը, ազդարարի նկատմամբ վնասակար գործողություններ կատարելու դեպքում ապացուցման բեռը պատասխանողի վրա դնելը: Ավելին, կատարված փոփոխություններով ազդարարման համակարգը և օրենսդրությունը սկսեցին տարածվել նաև մասնավոր կազմակերպությունների վրա:

2024 թվականին ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի հինգերորդ փուլի առաջընթացի զեկույցով⁸ նշվել է, որ թեև Օրենքը կարևոր փոփոխությունների է ենթարկվել 2022 թվականի դեկտեմբերին, այն դեռևս ունի բացեր: Հիմնական խնդիրները վերաբերում են կիրարկման բացակայությանը և հաշվետվության ուղիների և առկա պաշտպանական միջոցների նկատմամբ վստահության ձևավորման անհրաժեշտությանը: Գործնականում ազդարարների հաշվետվությունների մեծ մասը ներկայացվում է առցանց հարթակի միջոցով, որն ապահովում է անանունությունը: Հի եղել դեպք, երբ ազդարարը պահանջել է պաշտպանություն, ինչը նշանակում է, որ պաշտպանության մասին դրույթները և տարբեր ազդարարներին հասանելի միջոցները իրական գործով չեն փորձարկվել: Ներքին ազդարարման ուղիները հստակորեն սահմանված չեն օրենքում, ինչը պրակտիկան և ազդարարներին արդյունավետ պաշտպանություն տրամադրելու կարողությունը դարձնում է կասկածելի: Մարդու իրավունքների պաշտպանը (ՄԻՊ) ստանձնել է ազդարարների պաշտպանության օրենսդրության կիրարկման

⁷ ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131> (դիտված՝ 01.09.2024):

⁸ OECD, Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, 14 Mar 2024, <https://doi.org/10.1787/fb158bf9-en> (դիտված՝ 11.09.2024):

մոնիտորինգի պատասխանատվությունը, սակայն չունի հատուկ ստորաբաժանում կամ անձնակազմ, որը զբաղվեր այդ պարտականություններով:

Տարբեր դիտարկումներ և ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ Հայաստանում ազդարարման ինստիտուտը չի գործում, ինչը հաճախ վերագրվում է քաղաքացիների ցածր իրավագիտակցությանը և վատ իրազեկվածությանը կամ մշակույթին, մասնավորապես՝ խորհրդային հասարակությունում ձևավորված «գործ տվող»-ի հետ ասոցացման և դրանից խուսափելու առումով: Մինչդեռ վերլուծությունները ցույց են տալիս, որ այս խնդրից զատ կան նաև օրենսդրության բազմաթիվ բացեր, որոնք իրականում ռիսկեր են ստեղծում նույնիսկ իրավագիտակից, իրազեկ և համարձակ քաղաքացիների համար: Օրենսդրությանն ու պրակտիկային առնչվող որոշ բացեր արտացոլվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության⁹ և ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրում՝ որպես մասնավոր նպատակ նախատեսելով «Ազդարարման համակարգի կատարելագործումն ու արդիականացումը»:¹⁰ Այս փաստաթղթով նախատեսված են ազդարարման համակարգի կատարելագործմանն ու արդիականացմանը միտված քայլեր, որոնք ներառում են հետևյալը՝

- **Գործողություն 2.17.** Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը՝ նախատեսելով վերանայել ազդարարման համակարգի ներկա մոդելը՝ հաշվի առնելով նաև ազդարարման տեսակների գործնական կիրառելիությունը ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԻՊ կողմից ազդարարների իրավունքների պաշտպանության կազմակերպական կառուցակարգերը, հանրությանն ազդարարման առկա մեխանիզմները՝ ապահովելով հանրությանն ազդարարելու հնարավորությունը առանց ներքին և/կամ արտաքին ազդարարման տեսակները սպառելու այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքն անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականությունն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում: Նույն գործողությամբ նախատեսվում է նաև ազդարարման համակարգի մոդելի ընտրության արդյունքում անհրաժեշտության դեպքում ապահովել ազդարարման հարցով պատասխանատուների ընտրությունը և նշանակումը, ինչպես նաև մշակել վերջիններիս գործունեության ապահովման ուղեցույցները և մեթոդական նյութերը:
- **Գործողություն 2.18.** Չարգասել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը՝ նախատեսելով միասնական և պարտադիր կանոններ, վիճակագրության մեջ ներառվող տվյալների հստակեցում և վիճակագրություն վարողների շրջանակի ընդլայնում: Նախատեսվում է նաև ապահովել միասնական վիճակագրության հրապարակայնությունը գործող էլեկտրոնային հարթակի միջոցով:
- **Գործողություն 2.19.** Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը՝ նախատեսելով վերհանել ազդարարման հարթակի հիմնական խնդիրները, մշակել

⁹ ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 26-ի N 1871-L որոշում «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674> (դիտված՝ 11.09.2024):

¹⁰ Գործողությունների ծրագիր, մասնավոր նպատակ՝ «ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում»:

ազդարարման հարթակի նոր տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև տեխնիկական բնութագրի հիման վրա գործարկել ազդարարման նոր արդիականացված էլեկտրոնային հարթակ:

- **Գործողություն 2.20.** Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը՝ նախատեսելով հստակեցնել ազդարարման վարույթի իրավական բնույթը, ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները՝ ապահովելով դրանց պատշաճ պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև նախատեսել ազդարարման վարույթի արդյունքում ընդունվող ակտերի բողոքարկման հնարավորություն:¹¹

Սույն հետազոտությամբ վերլուծվել է ազդարարման օրենսդրության համապատասխանությունը միջազգային ստանդարտներին, վեր են հանվել ՀՀ ազդարարման համակարգը կարգավորող օրենսդրության բացերը և ներկայացվել են ազդարարման համակարգի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ՝ ապահովելու ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված՝ ազդարարման համակարգի կատարելագործման ու արդիականացման միջոցառման արդյունավետությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ազդարարման համակարգի սույն վերլուծությունն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) կազմակերպության կողմից մշակված «Ազդարարման օրենսդրության գնահատումը. ԵՄ դիրեկտիվի և լավագույն պրակտիկայի համեմատ գնահատման մեթոդաբանություն և ուղեցույց» փաստաթղթի համաձայն,¹² որի հիմքում ընկած են ԹԻ «Ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքները»,¹³ և ԹԻ «Ազդարարման վերաբերյալ օրենսդրության լավագույն պրակտիկայի ուղեցույցը»¹⁴ և Եվրոպական Միության (ԵՄ) համապատասխան դիրեկտիվի պահանջները:¹⁵

¹¹ Նույն տեղում:

¹² Transparency International, Assessing Whistleblowing Legislation, Methodology and guidelines for assessment against the EU Directive and best practice, 2020, https://images.transparencycdn.org/images/2020_Toolkit_AssessingWhistleblowingLegislation_EN.pdf (դիտված՝ 08.09.2024).

¹³ Transparency International, International Principles for Whistleblower Legislation. Best Practices for Laws to Protect Whistleblowers and Support Whistleblowing in the Public Interest, <https://www.transparency.org/en/publications/international-principles-for-whistleblower-legislation> (դիտված՝ 11.09.2024).

¹⁴ Transparency International, A Best Practice Guide for Whistleblowing Legislation, <https://www.transparency.org/en/publications/best-practice-guide-for-whistleblowing-legislation> (դիտված՝ 08.09.2024).

¹⁵ EU, Directive 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law" (Whistleblower Protection Directive), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32019L1937> (դիտված՝ 11.09.2024).

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ 4 խմբերում դասակարգված 25 ցուցանիշներով՝

1. Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները (5 ցուցանիշ),
2. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը (8 ցուցանիշ),
3. Պաշտպանության միջոցները (10 ցուցանիշ),
4. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները (2 ցուցանիշ):

Յուրաքանչյուր ցուցանիշի վերլուծության համար իրականացվել է օրենսդրության և առնչվող այլ փաստաթղթերի ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն: Բացի այդ, հետազոտական աշխատանքի մեջ հատուկ տեքստային արկղերում ներկայացվել է ազդարարման վերաբերյալ օտարերկրյա օրենսդրության օրինակներ, որոնք վերցվել են ԹԻ ուղեցույցից:

Վերլուծության են ենթարկվել ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումները, ներառյալ՝

- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը,
- «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը,
- ՀՀ քրեական օրենսգիրքը,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը,
- ՀՀ աշխատանքային օրենսգիրքը,
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1148-Ն որոշմամբ ընդունված ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը,
- ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Քրեական վարույթում և վարույթից դուրս հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 560-Ն որոշումը:

Վերլուծությունն իրականացվել է փորձագիտական եղանակով՝ գնահատելով և մեկնաբանելով յուրաքանչյուր ցուցանիշի կատարողականը: Ըստ 4 խմբերի և 25 ցուցանիշների՝ իրականացված վերլուծությունը ներկայացված է Հավելված 1-ում:

Տեղեկատվության հավաքագրման եղանակներն ու աղբյուրները

Ազդարարման համակարգի գնահատման համար պահանջվող տեղեկատվությունը հավաքագրվել է պաշտոնական հետևյալ բաց աղբյուրներից՝

- միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) ուղեցույցները, Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ)¹⁶ Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կառավարման մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում հինգերորդ գնահատման զեկույցի և ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի զեկույցները՝ Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիտորինգի հինգերորդ փուլի գնահատման արդյունքներն ու եզրակացությունները,¹⁷
- Հայաստանում ազդարարման գործընթացի առանձին բաղադրիչների մասին, մասնավորապես բարեվարքության ոլորտում նախկինում իրականացված քաղաքացիական հասարակության կառույցների հետազոտությունների արդյունքները,
- ՀՀ պետական մարմինների՝ իրավապահ մարմինների, նախարարությունների ինտերնետային կայքերը, հարթակները:

Նշված փաստաթղթերի պահանջներն ու մեթոդներն օգտագործվել են՝ գնահատելու օրենսդրության համապատասխանությունը սկզբունքներին և վերհանելու ՀՀ-ում ազդարարման գործընթացի բացերը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ

I. Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները

Նյութական շրջանակ. ազդարարման ենթակա տեղեկությունը

Թի ուղեցույցով ամրագրված սկզբունքներով սահմանվում է ազդարարման հնարավորինս լայն շրջանակ, որտեղ ազդարարումը առնվազն հետևյալ խախտումների բարձրաձայնումն է կամ հաղորդումը՝

- կոռուպցիոն քրեական հանցագործությունները,
- իրավական պարտավորությունների խախտումը,
- արդարադատության սխալները,
- հանրային առողջությանը, անվտանգությանը կամ շրջակա միջավայրին ուղղված հատուկ սպառնալիքները,
- լիազորությունների չարաշահումը,
- պետական միջոցների կամ գույքի չարտոնված օգտագործումը, կոպիտ վատնումը կամ սխալ կառավարումը,
- շահերի բախումը,

¹⁶ ԳՐԵԿՈ, Գնահատման հինգերորդ փուլ, Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կառավարման մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում զեկույց, մարտ 2024, <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680af5d34> (ղիտված 11.09.2024):

¹⁷ OECD, Baseline Report.

- վերոնշյալ արարքներից որևէ մեկը թաքցնելը:

Ըստ ԹԻ ուղեցույցի՝ սահմանումը պետք է ընդգրկի նաև ենթադրյալ կամ պոտենցիալ ապօրինությունը, ֆինանսական խարդախության վերաբերյալ ազդարարումները, որոնք արվել են պետական մարմինների/պաշտոնյաների և պետական գնումներին մասնակցող ընկերությունների կողմից, ինչպես նաև կարող է ներառել մարդու իրավունքների խախտումներ, եթե դա տեղին է ազգային համատեքստում:¹⁸

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ ազդարարումը ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում (ՏԻՄ), ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդումն է օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին: Ըստ նույն հոդվածի մաս 8-ի՝ հանրային շահերին ուղղված այլ վնասը ներառում է հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասը, պետության միջոցների կամ գույքի վատնումը, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին:

Օրենքի սահմանումից երևում է, որ ՀՀ-ն որդեգրել է ազդարարման ենթակա տեղեկությունների լայն շրջանակ:

Անձանց շրջանակ. հանրային և մասնավոր հատվածներ

Ըստ ԹԻ սկզբունքների և ուղեցույցի՝ ազդարարումները պետք է վերաբերեն թե՛ հանրային հատվածում, թե՛ մասնավոր կազմակերպություններում տեղ գտնող խախտումներին: Երկրները, որոնց ազդարարման օրենսդրությունը վերաբերում է միայն հանրային կառույցներին, անտեսում են մասնավոր կազմակերպությունների կողմից այնպիսի խախտումները, որոնք ոտնահարում են ամբողջ հանրությանն առնչվող այնպիսի իրավունք, ինչպիսին է, օրինակ, շրջակա միջավայրի պաշտպանությունը կամ կառուցապատման կանոնները խախտելու պատճառով առաջացած անբարենպաստ հետևանքները, որոնց մասին աշխատողները գիտեին, սակայն ազդարարելու լծակներ չունեին:¹⁹

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը բարելավելու և միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով 07.12.2022 թվականին կատարված փոփոխություններով ազդարարումը Հայաստանում տարածվեց նաև մասնավոր ոլորտի վրա: Մասնավորապես «հանրային նշանակության կազմակերպություններ»-ը փոխարինվեց «կազմակերպություններ» բառով, ինչպես նաև հանվեց աշխատողների կամ հաստիքների թվաքանակի սահմանափակումը: Այս առումով, ազգային օրենսդրությունը համապատասխանում է ԹԻ կողմից սահմանված միջազգային ստանդարտներին:

¹⁸ ԹԻ ուղեցույց, սկզբունք 1 և 3, էջ 7:

¹⁹ ԹԻ ուղեցույց, սկզբունք 1 և 3, էջ 10:

Այնուամենայնիվ, տվյալ սահմանումից զատ, չկան հատուկ ընթացակարգեր կամ կարգավորումներ, որոնք հստակեցնեն մասնավոր կազմակերպություններում ազդարարման առանձնահատկությունները: Մինչդեռ, ԹԻ կողմից նախանշված միջազգային ստանդարտների համաձայն, որպես միևնույն պահանջ, պարտադիր է 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում ունենալ ներքին ազդարարման գործող մեխանիզմներ և ազդարարման հարցերով պատասխանատու անձ կամ առանձին միավոր:

Անհրաժեշտ է Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով (օրինակ՝ մասնավոր կազմակերպություններում ազդարարման օրինակելի կարգ) սահմանել մասնավոր կազմակերպություններում ազդարարման ընդհանուր պահանջները և ընթացակարգերը աշխատողների ազդարարման իրավունքը երաշխավորելու նպատակով:

Անձանց շրջանակ. ազդարարի սահմանումը

ԹԻ ուղեցույցը տվել է ազդարարի (հաղորդում տվողի) լայն սահմանում. ազդարար է համարվում պետական կամ մասնավոր հատվածի ցանկացած աշխատող, որը բացահայտում է վերոնշյալ շրջանակներում ազդարարում պարունակող տեղեկատվությունը, և որը կարող է ենթարկվել հաշվեհարդարի վտանգի: Սա ներառում է նաև անհատների, որոնք դուրս են ավանդական աշխատող-գործատու հարաբերություններից, ինչպիսիք են՝ խորհրդատուները, կապալառուները, փորձնականները/պրակտիկանտները, կամավորները, ուսանող աշխատողները, ժամանակավոր աշխատողները, թափուր հաստիքի համար դիմած անձինք և նախկին աշխատողները, անհատներ, որոնք տրամադրում են օժանդակ տեղեկատվություն և նրանք, ովքեր օգնում են կամ փորձում են օգնել ազդարարին:²⁰

Սուբյեկտների շրջանակի նման լայն դիտարկումը կարևոր է, քանի որ հաճախ ազդարարման առիթներն առաջանում են հենց աշխատանքի ընդունվելիս կամ քաղաքացիաիրավական ծառայություններ մատուցելու առաջարկ ներկայացնելու ընթացքում, բացի այդ, հիմնական ազդարարներին աջակցում են տեղեկատվությունը ստանալու կամ դրանց մեջ հավաստիանալու հարցում:

Ֆրանսիայի օրենսդրությունը պահանջում է, որ անհատը «անձնապես տեղյակ լինի» հաղորդված ապօրինությունների մասին՝ առանց հստակեցնելու, թե ազդարարը որտեղ կարող էր հանդիպել այդ տեղեկատվությանը:

Մալայզիայում ազդարարը սահմանվում է որպես «յուրաքանչյուր անձ, ով բացահայտում է ոչ պատշաճ վարքագիծը հարկադիր մարմին»:²¹ Այս լայն մոտեցումը համահունչ է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 33-րդ հոդվածին, որը չի պահանջում «աշխատանքի» հետ կապված նման կապ:

²⁰ ԹԻ ուղեցույց, սկզբունք 4, էջ 11:

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանում ազդարար է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատողի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ: Օրենքի մեջ առկա այն դրույթը, որ ազդարար է համարվում նաև նշվածից բացի «այլ հարաբերությունների մեջ» գտնվող անձը, ազդարարումը ստացող մարմիններին տալիս է չափազանց լայն հայեցողություն, իսկ ազդարարներին՝ որոշակիության պակաս, թե արդյոք նրանց վրա կտարածվի պաշտպանությունը, թե՛ ոչ:

Անհրաժեշտ է ընդլայնել «ազդարարի» սահմանումը և հստակեցնել «այլ հարաբերությունների մեջ» գտնվելու եզրույթը:

Անձանց շրջանակ. պաշտպանության ենթակա երրորդ կողմերը

Ըստ ԹԻ մեթոդաբանության՝ օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն ապահովում է պաշտպանություն հետևյալ անձանց՝

- ա) օժանդակողներին (ֆիզիկական անձինք, որոնք աջակցում են ազդարարին ազդարարելու գործում, և որոնց օգնությունը պետք է գաղտնի լինի),
- բ) երրորդ անձանց, ինչպես օրինակ՝ գործընկերներ և հարազատներ, որոնք կապված են ազդարարների հետ և կարող են հաշվեհարդարի զոհ դառնալ իրենց աշխատանքային հարաբերություններում,
- գ) իրավաբանական անձանց, որոնք պատկանում են ազդարարներին, որտեղ նրանք աշխատում են կամ այլ կերպ կապված են դրանց հետ: Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության) ընդլայնել պաշտպանությունը՝ ներառելով
- դ) ազդարարներին խորհրդատվություն տրամադրող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԶՀԿ), որոնք պարտավոր են պահպանել ստացված տեղեկատվության գաղտնիությունը:²¹

Ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությանմբ կիրառելի է դրա նկատմամբ: Այսպիսի սահմանումը, ընդհանրական լինելով, լայն հայեցողություն է թողնում

²¹ԹԻ մեթոդաբանություն, էջ 26:

իրավակիրառողների համար, ինչը օրենքի որոշակիության, ինչպես նաև միջազգային փորձի տեսանկյունից խնդրահարույց է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ազդարարի հետ փոխկապակցված անձն իրավունք ունի օգտվել ազդարարի պաշտպանության միջոցներից, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ: Մինչդեռ Օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են համարվում միայն ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները, ինչը խիստ նեղ է միջազգային ստանդարտի տեսանկյունից:

Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրության մեջ նույնպես հստակ նախատեսել պաշտպանության ենթակա երրորդ անձանց շրջանակը և ընդլայնել փոխկապակցված անձանց սահմանումը:

Պաշտպանությունից օգտվելու պայմանները և շեմը

Ազդարարի բարեխիղճ գործելու պարտականություն

Ազդարարի բարեխիղճ լինելու պարտականության առումով ԹԻ կողմից մշակված ազդարարման օրենսդրության սկզբունքների ուղեցույցը նախապատվություն տալիս է ոչ թե ազդարարի մոտիվացիային, այլ հաղորդման նշանակությանը և հավաստիությանը:

Ոմանք բարեխղճության պահանջը կապում են բացահայտված տեղեկատվության հետ, ինչը նշանակում է, որ պահանջը կատարվում է, եթե բացահայտող անձը կարծում է, որ իր տրամադրած տեղեկությունը ճշմարիտ է: Մյուսները բարեխղճության պահանջը կապում են ազդարարի անձնական դրդապատճառների հետ՝ հաշվի առնելով, որ պաշտպանությունը պետք է սահմանափակվի «ազնիվ» աշխատողներով և/կամ նրանցով, ովքեր ազդարարել են, քանի որ ցանկանում են, որ ապօրինի գործողությունը հետաքննվի և ոչ այն պատճառով, որ նրանք հետապնդում են անձնական օրակարգ կամ ուզում են վրեժ լուծել:

Սրանք հասկանալի մտահոգություններ են, սակայն բարեխղճության պահանջը, տրամադրված տեղեկության արժանիքը գնահատելու փոխարեն ազդարարի դրդապատճառներին հետամուտ լինելու պարագայում, կարող է բացասական ազդեցություն ունենալ, ինչը հնարավոր է զսպող գործոն դառնալ պոտենցիալ ազդարարների համար և նրանց հետ պահել ազդարարումից: Այս հիմնավորմամբ ԹԻ կողմից մշակված սկզբունքները ոչ մի հղում չեն անում բարեխղճությանը, այլ միայն պահանջում են «ողջամիտ համոզմունք, որ տեղեկատվությունը ճշմարիտ է այն հրապարակելու պահին»: Եվրոպայի խորհուրդն էլ առաջարկում է բարեխղճության սկզբունքը կիրառվի այնպես, որ ուշադրության կենտրոնում չլինի ազդարարի շարժառիթը կամ բարեխղճությունը, այլ շեշտը դրվի ազդարարողի կողմից տրամադրվող տեղեկատվությանը:²² Ազդարարման օրենսդրության «ուշադրության կենտրոնում պետք է լինի հաղորդագրությունը, այլ ոչ թե սուրհանդակը»:²³

²² Council of Europe, Protection of Whistleblowers, Recommendation CM/Rec(2014)7 and Explanatory Memorandum, <https://rm.coe.int/16807096c7>, p. 39 (դիտված՝ 05.09.2024):

²³ ԹԻ ուղեցույց, սկզբունք 5 և 9, էջ 15:

Ըստ ԹԻ ուղեցույցի՝ եթե երկրները, այնուամենայնիվ, գտնում են, որ «բարեխղճության» տարրն անհրաժեշտ է, նրանք օրենսդրության մեջ պետք է հստակեցնեն, որ պահանջը վերաբերում է հաղորդվող տեղեկատվությանը և ոչ թե ազդարարի դրդապատճառներին:

Սլովակիայում բարեխիղճ պետք է ընկալվի գործողությունը այն անձի կողմից, որը, հաշվի առնելով հանգամանքները և իր իմացությունը զեկուցման պահին, համոզված է, որ իր կողմից ներկայացված տեղեկությունը ճշմարիտ է: Կասկածի դեպքում գործում է բարեխիղճ վարքագծի կանխավարկածը, եթե հակառակն ապացուցված չէ:

Մեծ Բրիտանիայում օրենսդրության մեջ պարունակվող բարեխղճության պահանջը 2013 թվականին հանվել է՝ համաձայն այն սկզբունքի, որ ազդարարները կարող են ունենալ մի շարք դրդապատճառներ, սակայն պետք է պաշտպանված լինեն, եթե նրանք բարձրաձայնում են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը: Մինչդեռ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազդարարը գործում է անբարեխղճորեն, եթե՝

1. բացակայում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բարեխղճորեն գործելու հատկանիշները,
2. ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա,
3. իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն,
4. այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:

Ազդարարի բարեխիղճ գործելու պահանջների առումով ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում միջազգային սկզբունքներին: Անհրաժեշտ է առաջնորդվել *«ուշադրության կենտրոնում պետք է լինի հաղորդագրությունը, այլ ոչ թե սուրհանդակը»* սկզբունքով և բարեխիղճ համարել ցանկացած ազդարարում, որն անկախ առավելություն ստանալու կամ այլ շահադիտական նպատակներից, պարունակում է ենթադրյալ ճշգրիտ տեղեկատվություն ազդարարման ենթակա անօրինական գործողության մասին:

Գաղտնի տեղեկատվության բացահայտում

Ըստ ԹԻ ուղեցույցի՝ ազդարարների օրենսդրության շրջանակներում կատարված ցանկացած բացահայտում անձեռնմխելի է կարգապահական վարույթի և քրեական, քաղաքացիական ու վարչական պատասխանատվության ենթակա լինելու առումով, ներառյալ զրպարտության, հեղինակային իրավունքների և տվյալների պաշտպանության կանոնների խախտման համար: Ազդարարի կողմից օրենքը խախտելու որևէ մտադրության ապացուցման բեռն ընկնում է ազդարարման օբյեկտի վրա:²⁴

Ըստ ԹԻ գնահատման մեթոդաբանության՝ օրենսդրությունը համարվում է «ուժեղ», եթե ազդարարման տեղեկատվությունից չի բացառում որոշ կատեգորիաներ (օրինակ՝ ազգային անվտանգության հարցեր, ծառայողական կամ ռազմական գաղտնիքներ կամ գաղտնի տեղեկատվություն): Միաժամանակ ԹԻ մեթոդաբանությունն ընդգծում է, որ ազգային օրենսդրությունը կարող է սահմանել հատուկ ընթացակարգեր և երաշխիքներ նման հարցերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման համար անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ և գործառնական անկախ մարմնի կամ համապատասխան պետական գաղտնիքին հասանելիություն ունեցող մարմինների միջոցով:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ եթե անձը ներկայացրել է առևտրային, բանկային կամ պետական գաղտնիք պարունակող հաղորդում, նա չի կարող օգտվել ազդարարի համար սահմանված պաշտպանության միջոցներից, քանի որ վերոնշյալ ոլորտների օրենսդրության համաձայն այդպիսի գաղտնիքի բացահայտումը համարվում է հանցագործություն: Սա նաև նշանակում է, որ եթե անձը աշխատանքային պարտականությունները կատարելուց իմացել է ազդարարման ենթակա որևէ տեղեկություն, որը աշխատանքային պայմանագրով պարտավորված էր չբացահայտել, նա չի ցանկանա ազդարարել, քանի որ վստահ չէ, որ այդ գործողության բացասական հետևանքները չի կրի հենց ինքը:

Ուստի նպատակահարմար կլիներ ազգային օրենսդրության մեջ ներառել այն սկզբունքը, որ կազմակերպության ցանկացած մասնավոր կանոն կամ համաձայնագիր անվավեր է, եթե այն խոչընդոտում է ազդարարների պաշտպանությունն ու իրավունքների իրացմանը: Օրինակ՝ ազդարարի իրավունքները պետք է գերակայեն աշխատողների «հավատարմության» երդումների և գաղտնիության/չիրապարակման համաձայնագրերի նկատմամբ (non-disclosure agreements):²⁵

Այս տեսանկյունից պետք է փաստել, որ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առ ոչինչ է: Սակայն, այս դրույթը, որոշակիության տեսանկյունից, ազդարարի համար բավարար չէ՝ համոզվելու, որ նա կազատվի քրեական պատասխանատվությունից գաղտնիք պարունակող տվյալներ հրապարակելու համար, քանի որ նմանատիպ բացառություն նախատեսված չէ քրեական օրենսդրությամբ:

²⁴ԹԻ ուղեցույց, սկզբունք 10, էջ 24:

²⁵Նույն տեղում, սկզբունք 12, էջ 24:

Գաղտնի տեղեկատվության բացահայտման առումով ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ազդարարների պաշտպանության ընդհանուր սկզբունքին: Անհրաժեշտ է հստակ սահմանել պատասխանատվությունից ազատելու գաղտնիք պարունակող տեղեկատվության ազդարարման դեպքում՝ որպես նախապայման սահմանելով բացառությունը սուտ մատնության և կեղծ տեղեկատվության համար: Ավելին, կարևոր է ունենալ հստակ սահմանված ընթացակարգ պետական գաղտնիք պարունակող և ազգային անվտանգությանն առնչվող ազդարարման դեպքերի համար:

Անօրինական բնույթ կրող գործողություններին մասնակցելու հանգամանք

Ըստ ԹԻ միջազգային սկզբունքների՝ աշխատողները և ծառայություն մատուցողները իրավունք ունեն հրաժարվել կոռուպցիոն, անօրինական կամ խարդախ գործողություններին մասնակցելուց: Նրանք օրինականորեն պաշտպանված են հաշվեհարդարի կամ խտրականության ցանկացած ձևից, եթե օգտվեն այդ հնարավորությունից և հրաժարվեն մասնակցելու կոռուպցիոն ու անօրինական գործողություններին:²⁶

Բազմաթիվ երկրներում ընդհանուր աշխատանքային օրենսդրությունը կամ քրեական իրավունքը պարունակում են դրույթներ, որոնք թույլ են տալիս աշխատողներին հրաժարվել անօրինական կամ վտանգավոր գործունեությանը մասնակցելուց: Բացի այդ, օրենսդրությունը պետք է սահմանի, որ նման անձինք պաշտպանված են անարդար և խտրական վերաբերմունքի բոլոր ձևերից:

Չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածը հնարավորություն է տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից, եթե անձը կամովին հրաժարվում է հանցագործությանը մասնակից լինելուց՝ այն վերաբերում է միայն քրեական պատասխանատվությունից ազատելուն, մինչդեռ ազդարարումը իր մեջ ներառում է ոչ միայն քրեական բնույթ կրող իրավախախտումների մասին ազդարարելը, այլև նախատեսված է հստակ դեպքեր, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 6-ով նախատեսված չեն, այդ թվում՝ շահերի բախումը:

Անհրաժեշտ է ՀՀ ազդարարմանն առնչվող օրենսդրության մեջ ներդնել այն սկզբունքը, որ անձը պաշտպանվում է վնասակար գործողությունների սպառնալիքից և վնասակար գործողություններից, ինչպես նաև որևէ պատասխանատվությունից, եթե կամովին հրաժարվում է անօրինական գործողություններ կատարելուց:

II. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը

Գոյություն ունի ազդարարման/հաղորդման երեք ուղի՝

- աշխատատեղում (ներքին ազդարարում)
- իրավասու մարմիններին (արտաքին ազդարարում)
- արտաքին կողմերին (ազդարարում հանրությանը)

²⁶ Նույն տեղում, սկզբունք 11, էջ 26:

Աշխատատեղում (ներքին) ազդարարում²⁷

Համաձայն ԹԻ ազդարարման օրենսդրության վերաբերյալ սկզբունքների՝ ազդարարման կանոնակարգերն ու ընթացակարգերը պետք է լինեն տեսանելի և հասկանալի, պահպանեն զաղտնիությունը կամ անանունությունը (բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտորեն հրաժարվում է դրանից), ապահովեն ազդարարների բացահայտումների մանրակրկիտ, ժամանակին և անկախ հետաքննություն, և ունենան թափանցիկ, կիրառելի մեխանիզմներ՝ արձագանքելու ազդարարների նկատմամբ հաշվեհարդարին առնչվող բողոքներին, և ներառեն հաշվեհարդար իրականացնողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթաց:

Պետական մարմինների և բաժնեմասերը հրապարակային վաճառքի հանող ընկերությունների աշխատողներին պետք է հասանելի լինի ազդարարման ուղիների և գործիքների լայն շրջանակ, ներառյալ խորհրդատվական գծերը, թեժ գծերը, առցանց պորտալները, համապատասխանության ապահովման գրասենյակները և ներքին կամ արտաքին օմբուդսմենները: Նրանց ղեկավարության և անձնակազմի համար պետք է իրականացվի համապարփակ ուսուցում: Ազդարարման մասին օրենքներն ու ընթացակարգերը պետք է հանրամատչելի տեղադրվեն հանրային և մասնավոր հատվածի աշխատավայրերում, որտեղ կիրառվում են դրանց դրույթները: Աշխատողներին խրախուսվում է օգտագործել ներքին հաշվետվության ուղիները՝ որպես առաջին քայլ, եթե դա հնարավոր է և պրակտիկ: Ազդարարները պետք է վստահեն ազդարարման մեխանիզմներին և ապահով զգան դրանք օգտագործելիս:

Միջազգային ստանդարտների համաձայն՝ որպես միևնույն պահանջ նաև նախատեսված է 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում ունենալ ներքին ազդարարման գործող մեխանիզմներ և ազդարարման հարցերով պատասխանատու անձ կամ առանձին միավոր:

Ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ ներքին ազդարարումը սկսվում է՝ ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին (բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին) հաղորդում ներկայացնելով: Եթե հաղորդումը ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ չնախատեսված անձը, ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին: Ընդ որում, առկա չէ վերապահում այն դեպքերի համար, երբ հենց այդ պաշտոնատար անձինք են ներգրավված ազդարարման առարկա հանդիսացող գործողության մեջ կամ այլ հիմնավոր պատճառով չեն կարող լինել անկողմնակալ:

Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը պարտավոր է ապահովել հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը, իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում

²⁷ Նույն տեղում, սկզբունքներ 15, 18, 27, էջ 31:

հաղորդման հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել վարույթի հարուցումը, ապահովել հարուցված վարույթի գաղտնիությունը, իր իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել հաղորդման իսկությունը ստուգելու նպատակով և հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազությանը, միջոցներ ձեռնարկել ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ազդարարի պահանջով ապահովել վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը և ազդարարին հնարավորություն տալ ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ: Օրենքը նաև ընդգծում է, որ սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն, թեև չկա որևէ պատասխանատվության մեխանիզմ, ինչը տվյալ պահանջը դարձնում է դեկլարատիվ և ոչ կիրառելի:

Ներքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից 3-օրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է: Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից 3-օրյա ժամկետում ծանուցում է ազդարարին: Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա հաղորդում ստացած անձը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազությանը: Կա վտանգ, որ եթե ազդարարը համարվում է ոչ բարեխիղճ, փաստացի հենց ինքը կարող է դառնալ իր ազդարարման զոհը:

Չնայած ՀՀ օրենսդրության մեջ ներքին ազդարարման հնարավորության առկայությանը, գործնականում այն չի կիրառվում: ԹԻՂԿ-ի կողմից 2021թվականին իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ ազդարարման ներքին համակարգը գործարկելու առումով կան մի շարք թերացումներ հենց պետական մարմինների կողմից, օրինակ՝ պատասխանատու անձանց նշանակման, նրանց կարողությունների զարգացման, մեթոդաբանական ուղեցույցների պատրաստման, վիճակագրություն վարելու, աշխատողների իրազեկման առումով:²⁸

Գործնականում առկա են ավելի լուրջ խնդիրներ: Պոտենցիալ ազդարարը հաճախ չի վստահում աշխատավայրում իրավասու անձանց՝ ազդարարման պատասխանատուներին կամ ղեկավարությանը: Նույնիսկ վստահելու պարագայում փոքր հասարակություններում ազդարարման պատասխանատուները կարող են պարզապես մտերիմ հարաբերությունների մեջ լինել ապօրինության մեջ ներգրավված աշխատակիցների հետ: Բացի այդ, ազդարարը

²⁸ ԹԻՂԿ, Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում, Եթիկայի հանձնաժողովներ Բարեվարքության հարցերով կազմակերպիչներ Ազդարարման հարցերով պատասխանատուներ, զեկույց, Երևան, 2021թ, <https://transparency.am/hy/publication/244> (դիտված՝ 07.09.2024):

կարող է ունենալ աշխատանքը կորցնելու կամ առնվազն իր գործընկերների բացասական վերաբերմունքին ու պարսավանքին արժանանալու մտավախություն:

Իսկ ինչ վերաբերում է մասնավոր կազմակերպություններին կամ պետական գնումներին մասնակցող կազմակերպություններին, ՀՀ օրենսդրությունը այդ մասով ընդհանրապես որևէ կարգավորում չի նախատեսել:

Նպատակահարմար է ներքին ազդարարման պարագայում նախատեսել պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր իրավասու մարմնի կողմից ազդարարումը ստանալու, սակայն անտեսելու, հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու ու ՀՀ դատախազություն չներկայացնելու, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելու և ազդարարին լրացուցիչ պարզաբանումներ տալու հնարավորությունից զրկելու պարագայում: Նաև անհրաժեշտ է ունենալ հստակ դրույթ՝ ձեռնպահ մնալու ազդարարելուց այն պաշտոնատար անձանց, որոնք իրենք են ներգրավված ազդարարման առարկա հանդիսացող գործողության մեջ կամ ազդարարի ենթադրությամբ չեն կարող լինել անկողմնակալ:

Հարկավոր է հետամուտ լինել ազդարարման պատասխանատուների նշանակման գործընթացին և հնարավորինս սեղմ ժամկետներում նրանց համար կազմակերպել վերապատրաստում, ինչն արդեն իսկ սահմանված է որպես գործողություն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով: Պետք է նախատեսել ազդարարման պատասխանատուների գործունեության համակարգման և վերահսկման մարմին՝ վերապահելով այս գործառույթը ՀՀ արդարադատության նախարարությանը, ինչն արդեն իսկ նախատեսված է վերապատրաստումների համար:

Մասնավոր կազմակերպությունների համար ազդարարման ընդհանուր պահանջների և ընթացակարգերի շրջանակում հարկավոր է նախատեսել ներքին ազդարարման մեխանիզմների առկայություն:

Իրավասու մարմիններին (արտաքին) ազդարարում²⁹

Համաձայն ԹԻ ուղեցույցի, եթե աշխատավայրում ազդարարում ներկայացնելը գործնական կամ հնարավոր չի թվում, ազդարարները կարող են խախտումներին առնչվող բացահայտումները ներկայացնել հատուկ մարմիններին կամ իրենց կազմակերպությունից դուրս գտնվող պատասխանատու անձանց: Այս ուղիները կարող են ներառել կարգավորող կամ վերահսկող մարմինները, իրավապահ կամ հետաքննական մարմինները, ընտրված պաշտոնյաներին կամ մասնագիտացված գործակալությունները, որոնք ստեղծված են նման հաղորդումներ ստանալու համար:

Կան բազմաթիվ հիմնավոր պատճառներ, թե ինչու ազդարարը կարող է նախընտրել ապօրինի գործողությունների մասին զեկուցել անմիջապես իրավասու մարմիններին, քան օգտագործել ներքին ազդարարման մեխանիզմները: Օրինակ՝ եթե նրանք վախենում են կամ հիմքեր ունեն ենթադրելու, որ իրենց նկատմամբ անարդար վերաբերմունք է սպասվում, որ

²⁹ ԹԻ ուղեցույց, սկզբունք 16, էջ 37:

Նրանց գաղտնիությունը/անանունությունը չի երաշխավորվի, կամ որ ապօրինությունը կարող է կոծկվել:

Նոր Ձեռնդիպում հաղորդում ստացած մարմինը կարող է գործը փոխանցել մեկ այլ մարմնի, եթե վերջինս համարում է, որ այն կարող է ավելի պատշաճ և հարմար հետաքննել այն: Այդ դեպքում նրանք պետք է անհապաղ տեղեկացնեն ազդարարողին:

Հարավային Կորեայում հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովը (ACRC) կարող է ստանալ ազդարարումներ հանրային շահերի լայն շրջանակի վերաբերյալ: Այն չի հետաքննում, բայց գործերը փոխանցում է համապատասխան մարմիններին: Այնուամենայնիվ, այն պահպանում է գործերի նկատմամբ վերահսկողությունը և հետևում է ժամկետների պահպանմանը: Այս առումով Հարավային Կորեան համարվում է լավ օրինակ:

Ահա թե ինչու լավագույն պրակտիկա է համարվում ազդարարման դեպքերում թե՛ աշխատավայրում և թե՛ արտաքին իրավասու մարմիններին հավասար հասանելիություն ապահովելը: Ոչ մի սահմանափակում կամ լրացուցիչ բեռ չպետք է լինի այն ազդարարների համար, ովքեր ցանկանում են ուղղակիորեն զեկուցել իրավասու մարմիններին և իշխանություններին: Այս մոտեցման օրինակ կարելի է գտնել Գանայում:³⁰

**Գանա, «Ազդարարների մասին» օրենք, 2006 թ.
Բաժին 3**

- 1) Ազդարարումը կարող է կատարվել ներքոնշյալներից որևէ մեկին կամ մի քանիսին.
- ա) ազդարարի գործատուին
 - բ) ոստիկանությանը
 - գ) Գլխավոր դատախազին
 - դ) Գլխավոր աուդիտորին
 - ե) հետախուզական գործակալությանը
 - զ) խորհրդարանի անդամին
 - է) հարդախությունների դեմ պայքարի գրասենյակին
 - ը) Մարդու իրավունքների և վարչական արդարադատության հանձնաժողովին
 - թ) ՉԼՄ-ների ազգային հանձնաժողովին
 - ժ) թմրամիջոցների վերահսկման խորհրդին
 - ի) ազդարարի ընտանիքի ղեկավարին կամ ավագ անդամին
 - յ) ճանաչված կրոնական մարմնի ղեկավարին
 - խ) շրջանային ժողովի անդամին
 - ծ) պետական նախարարին

³⁰ Ghana, Whistleblower Act, 2006

[https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT.%20ACT%202006%20\(ACT%20720\).pdf?sequence=1&isAllowed=y](https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT.%20ACT%202006%20(ACT%20720).pdf?sequence=1&isAllowed=y) (դիտված՝ 11.09.2024).

Միևնույն ժամանակ, ըստ ԹԻ ուղեցույցի, ազդարարման բազմակի ուղիների և պատասխանատու բազմաթիվ մարմինների առկայությունը կարող է շփոթության պատճառ դառնալ և խանգարել, որ ազդարարը կողմնորոշվի, թե ուր դիմի խախտումը հաղորդելու համար: Ի լրումն, նման համակարգերը կարող են լինել բավականին մասնատված՝ համընկնող իրավասություններով և անհասկանալի մանդատներով:

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդումներ կայացնելով: Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատողին, ապա ազդարարումը կատարվում է տվյալ կառույցի ղեկավարին: Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, ապա այն ներկայացվում է տվյալ կառույցի վերադաս մարմնի ղեկավարին: Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ) կամ համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում):

Ինչ վերաբերում է ազդարարման վարույթին, արտաքին ազդարարման վարույթի ժամկետներն ու ընթացակարգերը համապատասխանում են ներքին ազդարարման վարույթին: Ըստ էության, ազդարարման օրենսդրությունը որդեգրել է վարույթի միասնական սկզբունքներ բոլոր տեսակի ազդարարումների պարագայում:

Օրենքում նշված «իրավասու մարմին» ձևակերպումը ընդհանրական է և վերաբերում է բոլոր պետական մարմիններին, ՏԻՄ-երին և պետական (հանրային) կազմակերպություններին: Նույն սահմանումը վերաբերում է նաև այն իրավասու մարմնին, որոնք ստանում են արտաքին ազդարարումներ և ազդարարներին պաշտպանություն տրամադրելու կամ դրա հետ կապված դիմումներ: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից անհասկանալի է, թե ում պետք է ազդարարը դիմի արտաքին ազդարարման դեպքում և ումից կարող է պահանջել հատուկ պաշտպանություն, ումից կարող է ակնկալել հետադարձ կապ: Բացի այդ, արտաքին ազդարարման վարույթը ևս ունի բավականին ընդհանրական ձևակերպում և, ըստ էության, «իրավասու մարմին» է տրված լայն հայեցողություն՝ ընդունելու համապատասխան ընթացակարգեր, իսկ արտաքին ազդարարման վարույթը, որպես այդպիսին, հստակ ու մանրակրկիտ ներկայացված չէ: Պրակտիկայում արտաքին ազդարարման դեպքերը նույնպես սակավ են:

Միաժամանակ, որպես արտաքին ազդարարում է համարվում Օրենքով նախատեսված անանուն միասնական հարթակի միջոցով հաղորդումների ներկայացումը, որոնք ստանում է ՀՀ գլխավոր դատախազությունը: Վերջինս շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը վերահասցեագրում է ԿԿՀ-ին: Անանուն ազդարարմանն առնչվող հարցերը զեկույցում ներկայացված են համապատասխան բաժնում:

Պետք է նկատել, որ Օրենքը հատուկ ընդգծում է, որ նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը չի համարվում արտաքին ազդարարում: Սա փաստացի ազդարարների համար նախատեսված պաշտպանության միջոցները անհասանելի է դարձնում իրավապահ մարմիններին ուղղակիորեն հաղորդում ներկայացրած անձանց համար: Երբեմն հասկանալի չէ, թե իրավապահ մարմիններն ինչ հիմքով և տրամաբանությամբ պետք է տարբերակեն և տարբեր ընթացակարգերով վարեն այդ գործերը, հատկապես եթե անձը միաժամանակ կիրառում է հաղորդման/ազդարարման մի քանի խողովակ: Միաժամանակ հանցագործությունների մասին հաղորդումների միջոցով ներկայացվող ազդարարումը դուրս է մնում ազդարարման վերաբերյալ վարվող վիճակագրությունից կամ միախառնում է իրավապահ մարմինների ընդհանուր վիճակագրությանը:

Անհրաժեշտ է ցանկացած պարագայում թե՛ միասնական հարթակի միջոցով, թե՛ իրավապահ մարմիններին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող հաղորդումները համարել ազդարարում և հաշվի առնել համապատասխան վիճակագրության շրջանակում: Այս առումով պետք է վերացնել Օրենքի վերոնշյալ այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

Ազդարարում հանրությանը³¹

Ըստ ԹԻ միջազգային սկզբունքների՝ անհետաձգելի կամ ծանր հասարակական կամ անձնական վտանգի դեպքում կամ շարունակաբար չհասցեագրված օրինազանցության դեպքում, որը կարող է ազդել հանրային շահերի վրա, անհատները պետք է պաշտպանված լինեն արտաքին դերակատարների օգնությամբ, ինչպիսիք են՝ զանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ), ԶՀԿ-ները, իրավաբանական միավորումները, արհմիությունները և/կամ մասնագիտական կազմակերպությունները:

Հատկապես այն դեպքերում, երբ ազդարարման շրջանակներում խնդրո առարկա գումարի չափը մեծ է, ազդարարումը կարող է լինել շատ զգայուն և քաղաքական: Այսպիսով, կարևոր է, որ ազդարարները հնարավորություն ունենան դիմելու արտաքին կողմերին:

Հրապարակային բացահայտումների հնարավորությունը թույլ է տալիս հանրությանը պատասխանատու և հաշվետու պահել կազմակերպություններին և իշխանություններին: Այն կարող է վեր հանել սխալ արարքները, որոնք անտեսվել են կամ կոծկվել: Ինչպես շեշտվում է Եվրոպայի Խորհրդի կողմից,³² հանրությանը իրականացվող ազդարարումը հանրային շահը

³¹ ԹԻ ուղեցույց, սկզբունք 17, էջ 40:

³² Council of Europe, Protection of Whistleblowers, Recommendation CM/Rec(2014)7 and Explanatory Memorandum, <https://rm.coe.int/16807096c7>, p. 31 (դիտված՝ 11.09.2024).

պաշտպանելու կարևոր երաշխիք է: Դա ամրագրված է նաև խոսքի ազատության շրջանակներում:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը հանրությանն ազդարարելը՝ որպես ազդարարման առանձին տեսակ ամրագրվել է 2022 թվականի դեկտեմբերին: Օրենքի 9.2-րդ հոդվածի համաձայն՝ ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը ՉԼՄ-ներով, եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել: Հաղորդում ստացած ՉԼՄ-ներն ապահովում են ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ առկա չէ անձի գրավոր համաձայնությունը: Ազդարարին տրվող պաշտպանությունը տարածվում է ՉԼՄ-ների վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությանմբ կիրառելի է նրանց նկատմամբ:

Իրավասու մարմինն ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: Ուշագրավ է, որ հանրությանը ազդարարելու պարագայում նույնպես իրավասու մարմնի կողմից նախաձեռնվող վարույթի ժամկետներն ու սկզբունքները նույնն են, ինչ ներքին և արտաքին ազդարարումների պարագայում:

Պետք է նշել, որ այն պայմանը, որ ազդարարը պետք է սպառի ներքին և արտաքին ազդարարման ուղիները, հետո նոր ազդարարի հանրությանը, խիստ խնդրահարույց է: Հաշվի առնելով ներքին և արտաքին ազդարարման վերը նշված խնդիրները՝ ազդարարն առհասարակ կարող է հետ կանգնել ազդարարման մտադրությունից: Բացի այդ, հաճախ հանրությանը ազդարարելով՝ անձը իրեն կարող է ավելի պաշտպանված զգալ, քան ազդարարումների մյուս տեսակների պարագայում:

Հայաստանում կան նաև ազդարարման հարթակներ,³³ որոնք գործարկվում են ԶՀԿ-ների կողմից, սակայն պետության կողմից նման հարթակների միջոցով ստացված հաղորդումների ընթացքավորումը և դրա հիմքերը պարզ չեն:

Բացի այդ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում իրավական կարգավորում այն դեպքերի համար, երբ ազդարարումը իր մեջ պարունակում է պետական գաղտնիք և կապված է ազգային անվտանգության հարցերի հետ: Ըստ ԹԻ սկզբունքների³⁴ եթե ազդարարումը վերաբերում է ազգային անվտանգության, ծառայողական կամ ռազմական գաղտնիքների կամ գաղտնի տեղեկատվության, կարող են կիրառվել ազդարարման հատուկ ընթացակարգեր և երաշխիքներ, որոնք հաշվի են առնում թեմայի զգայուն բնույթը, որպեսզի նպաստեն հաջող ներքին հետևողականությանն ու լուծմանը և կանխեն անհարկի արտաքին ազդեցությունը: Այս ընթացակարգերը պետք է թույլ տան ներքին ազդարարումներ, բացահայտումներ արտաքին իրավասու ինքնավար մարմին, որը ինստիտուցիոնալ և գործառնական առումով անկախ է անվտանգության ոլորտից, կամ ազդարարումն ուղղվի համապատասխան պետական գաղտնիքի հետ աշխատելու թույլտվություն ունեցող մարմիններին: Արտաքին կողմերին ազդարարումը (այսինքն՝ ՉԼՄ-ներին, ԶՀԿ-ներին)

³³ <https://haytnir.am>; <https://www.bizprotect.am/>:

³⁴ ԹԻ ուղեցույց, սկզբունք 19, էջ 42:

արդարացված կլինի հանրային առողջությանը, անվտանգությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող հրատապ կամ լուրջ սպառնալիքների ակնհայտ դեպքերում, եթե ներքին ազդարարումը կարող էր հանգեցնել անձնական վնասի կամ ապացույցների ոչնչացման:

Անհրաժեշտ է ապահովել թե՛ ներքին, թե՛ արտաքին և թե՛ հանրությանն ազդարարելու տեսակների միաժամանակյա օգտագործման հնարավորությունը: Անհրաժեշտ է 9.2-րդ հոդվածի տեսանկյունից պարզաբանել «իրավասու մարմնի» հասկացությունը:

Նաև պետք է նախատեսել իրավական կարգավորում այն դեպքերի համար, երբ ազդարարումն իր մեջ պարունակում է պետական գաղտնիք և կապված է ազգային անվտանգության հարցերի հետ:

III. Պաշտպանության միջոցները

Գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը³⁵

Թի ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքների մեջ հատուկ տեղ է զբաղեցնում գաղտնիության պահպանումը, որը նշանակում է, որ ազդարարի ինքնությունը չի կարող բացահայտվել առանց անձի հստակ համաձայնության: Ընդ որում՝ գաղտնիությունը վերաբերում է ոչ միայն ազդարարի անվանը, այլ նաև նրա անձը «նույնականացնող տեղեկատվությանը»: Փոքր կազմակերպություններում կամ այն դեպքերում, երբ առանձին փաստեր հայտնի են միայն մի քանիսին, որոշ տեղեկություններ կարող են հնարավոր դարձնել ազդարարին բացահայտելը: Ամեն դեպքում, գաղտնիության պաշտպանության սկզբունքը բացարձակ չէ, և հաղորդումը ստացողը պետք է դա պարզ դարձնի ազդարարին:

Որոշ երկրներում կոնկրետ իրավիճակներում օրենքը կարող է պահանջել նույնականացնող տեղեկատվության բացահայտում՝ նույնիսկ առանց ազդարարի բացահայտ համաձայնության: Դա կարող է լինել, օրինակ, երբ ազդարարումը քրեական հանցագործություն է բացահայտում, և գործը գնում է դատաքննության, իսկ ազդարարը կանչվում է որպես վկա: Սա, այնուամենայնիվ, չպետք է դիտվի որպես լավ փորձ: Լավ փորձը թելադրում է, որ ազդարարի ինքնությունը չի կարող բացահայտվել առանց անհատի հստակ համաձայնության:

³⁵ Թի ուղեցույց, սկզբունք 7, էջ 18:

Եթե գաղտնիությունը հնարավոր չէ պահպանել (առայժմ գոյություն ունեցող ոչ մի օրենսդրություն ամբողջությամբ չի բավարարում այդ պահանջը), բացառությունները պետք է հստակորեն նշվեն օրենսդրության մեջ: Ամենակարևորն այն է, որ նույնականացման մասին տեղեկությունը բացահայտելու դեպքում ազդարարը պետք է նախապես բավարար ծանուցվի, և նրան տրամադրվեն լրացուցիչ պաշտպանական միջոցներ:

Սերբիայի «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքը սահմանում է հետևյալը.

Հոդված 10. Ազդարարի անձնական տվյալների պաշտպանություն

Տեղեկատվություն ստանալու համար լիազորված անձից պահանջվում է պաշտպանել ազդարարի անձնական տվյալները և ցանկացած տվյալ, որը կարող է օգտագործվել ազդարարի ինքնությունը բացահայտելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը համաձայնում է բացահայտել այդ անձնական տվյալները՝ համաձայն անձնական տվյալների պաշտպանությունը կարգավորող օրենքի:

Ցանկացած անձ, ով իմանում է սույն հոդվածի 1-ին կետում նշված տվյալների մասին, պարտավոր է պաշտպանել այդ տվյալները:

Տեղեկատվություն ստանալու համար լիազորված անձից պահանջվում է, որ նա նման հաղորդում ստանալու պահին ծանուցի ազդարարին, որ իր ինքնությունը կարող է բացահայտվել իրավասու մարմնին, եթե այդ մարմնի գործողությունները չեն կարող ձեռնարկվել առանց ազդարարի ինքնությունը բացահայտելու, և տեղեկացնել ազդարարին քրեական դատավարության մասնակիցներին հասանելի երաշխիքների մասին:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում գաղտնիությունն ու անձնական տվյալների պաշտպանությունը ներկայացված են համակցված տեսքով: Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի «ՀՀ կառավարության 2018 թվականի N 272-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1148-Ն որոշմամբ սահմանվում է ներքին և արտաքին (իրավասու մարմիններին) ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության ընթացակարգը, ինչպես նաև գաղտնիության ապահովման կարգը, ըստ որի՝ ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է իրավասու մարմնի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով:

Ազդարարի անձնական տվյալների, ինչպես նաև ազդարարման շրջանակներում ներկայացված տեղեկությունների գաղտնիության պահպանումը պարտավոր են ապահովել իրավասու մարմնի ղեկավարը, պատասխանատու անձը և ազդարարման գործընթացում օրենսդրությամբ ներգրավված այլ մարմինները և անձինք:

Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները: Այդ տվյալներին աշխատանքային, ծառայողական կամ այլ պարտականությունների բերումով ծանոթանալու իրավունք ունեցող անձինք պարտավոր են ապահովել դրանց գաղտնիությունը: Ազդարարի անձնական տվյալները ենթակա չեն բացահայտման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, որն, ըստ էության, ենթադրում է քրեական դատավարության պարագայում դատաքննության փուլում որպես վկա հանդես գալու պարտականությունը:

Գաղտնիության իրավունքը պաշտպանվում է ՀՀ քրեական օրենսգրքով³⁶, որի 502-րդ հոդվածը բացահայտ նշում է, որ ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումն այն անձի կողմից, որին այդ տվյալը վստահվել կամ հայտնի է դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 20-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ 80-150 ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

Ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումը հաղորդում ստացած ՉԼՄ ներկայացուցչի կողմից պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 10-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը 100 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով:

Ի լրումն քրեական օրենսգրքի՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի³⁷ 41.5-րդ հոդվածը սահմանում է, որ որպես վարչական իրավախախտում ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելը, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը, հարուցված վարույթի գաղտնիությունը չապահովելը, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռնելը, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունը ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝ առաջացնում են

³⁶ ՀՀ քրեական օրենսգրքի, ընդունված՝ 2021 թվականի մայիսի 5-ին,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397m> (ղիտված՝ 08.09.2024):

³⁷ ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքի, ընդունված՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196891> (ղիտված՝ 08.09.2024):

տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 100-200-ապատիկի չափով:

Ազդարարի անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնիությունը չապահովվելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ, առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 300-400-ապատիկի չափով:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ տեսական առումով օրենսդրությունը համապատասխանում է միջազգային ստանդարտներին: Այնուամենայնիվ, պրակտիկայում բացակայում են գաղտնիության ապահովման տեսանկյունից գործնական մեխանիզմները:

2021 թվականի հետազոտության տվյալներով որոշ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ չունեն ազդարարման համար պատասխանատու անձինք, իսկ որոշները համատեղության կարգով են իրականացնում այդ պարտականությունը:³⁸ Բացի այդ, ազդարարման պատասխանատուների վերապատրաստում չի իրականացվում՝ բացատրելու ընթացակարգերն ու վարույթի առանձնահատկությունները: Մասնավոր կազմակերպություններում ազդարարման պատասխանատուների և գաղտնիության մասին կարգավորումներն իսպառ բացակայում են ՀՀ օրենսդրության մեջ: Այս մասին մանրամասն հիշատակվել է սույն հետազոտության համապատասխան բաժիններում:

Ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում ազդարարման պատասխանատուների համար կազմակերպել վերապատրաստում, ինչն արդեն իսկ սահմանված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թթ. գործողությունների ծրագրով: Պետք է նախատեսել ազդարարման պատասխանատուների գործունեության համակարգման և վերահսկման գործառնություն՝ վերապահելով այն ՀՀ արդարադատության նախարարությանը, ինչն արդեն իսկ նախատեսված է վերապատրաստումների համար:

Անանունությունը³⁹

Անանուն ազդարարումը հանդիսանում է կարևոր մեխանիզմ այն անհատների համար, ովքեր վախենում են բացասական հետևանքներից կամ ենթադրում են, որ անբավարար միջոցներ կձեռնարկվեն իրենց ինքնությունը պաշտպանելու համար: Ըստ ԹԻ ուղեցույցի՝ անանուն ազդարարման հնարավորությունը հատկապես պետք է դիտարկել այն երկրներում, որտեղ իրավական համակարգը թույլ է, կամ ազդարարների ֆիզիկական անվտանգությունը մտահոգիչ է:

Անանունությունը, սակայն, ունի իր սահմանափակումները: Նախ՝ գործնականում դժվար է համապարփակ պաշտպանություն տրամադրել այն անձին, ում ինքնությունն անհայտ է:

³⁸ ԹԻՀԿ, Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում, Էթիկայի հանձնաժողովներ Բարեվարքության հարցերով կազմակերպիչներ Ազդարարման հարցերով պատասխանատուներ, զեկույց, Երևան, 2021թ, <https://transparency.am/hy/publication/244> (դիտված՝ 07.09.2024):

³⁹ ԹԻ ուղեցույց, սկզբունք 13, էջ 18:

Երկրորդ՝ հաղորդումը ստացողի և ազդարարի միջև երկխոսությունը կարևոր է այն դեպքերում, երբ բացահայտումը բավարար տեղեկատվություն չի պարունակում հետաքննություններ կատարելու և ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար, և կարող է անհրաժեշտ լինել ազդարարողից պարզաբանումներ կամ լրացուցիչ տեղեկություններ խնդրել: Երրորդ՝ ազդարարը կարող է չտեղեկացվել հետաքննության ընթացքի և արդյունքների մասին:

Այս խնդիրները շտկելու համար ազդարարները կարող են օգտագործել անանուն էլեկտրոնային փոստ: Բացի այդ, կարող են լինել առցանց հարթակներ, որոնք թույլ են տալիս անանուն հաղորդում ներկայացնել և հաղորդակցման ուղի տրամադրել ազդարարի և ազդարարումը ստացողի միջև: Ի լրումն, ազդարարները կարող են նաև օգտվել արտաքին կողմի ծառայություններից, ինչպիսիք են օմբուդսմենը կամ ԶՀԿ-ն:

Ռումինիայում Թրանսփարենսի Ինթերնեշնլ տեղական կազմակերպությունը հանդես է գալիս որպես միջնորդ Electrica-ի՝ էլեկտրաէներգիայի խոշոր մատակարարի և ազդարարող աշխատակիցների միջև: Թի Ռումինիան ստանում է և անանուն է դարձնում հաղորդումները՝ նախքան դրանք գործատուին ուղարկելը: Այնուհետև նա հանդես է գալիս որպես միջնորդ՝ ազդարարի և գործատուի միջև երկխոսություն ծավալելու համար: Ազդարարը ընդհանուր իմաստով անանուն չէ, սակայն ընկերությունը չգիտի, թե ով է նա:

Այն դեպքում, երբ դատավարության ընթացքում անհրաժեշտ է լինում բացահայտել ազդարարի ինքնությունը, ազդարարի հետ հաղորդակցման համար լիազորված անձը պարտավոր է այդ փաստի մասին տեղեկացնել ազդարարին նախքան ազդարարի ինքնությունը բացահայտելը:

Ամեն դեպքում, թեև անանուն բացահայտումները կարող են դժվարացնել հաղորդման հետաքննությունը, դա չպետք է հանդիսանա հաղորդումը ոչ լուրջ ընդունելու պատճառ: Եվ եթե բացահայտվում է անանուն ազդարարի ինքնությունը, ապա նրանց պետք է տրվեն նույն իրավունքները և պաշտպանությունը, ինչ մյուս ազդարարներին: Թի ուղեցույցը նաև հստակ սահմանում է, որ լիակատար պաշտպանություն տրամադրվի այն ազդարարներին, ովքեր տեղեկատվություն են հրապարակել անանուն և հետագայում նույնականացվել են առանց նրանց հստակ համաձայնության:

Ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ինչպես իրավասու մարմին, այնպես էլ՝ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը ինքն է բացահայտում իր անձնական տվյալները: Իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկելու անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու ուղղությամբ:

Բացի այդ, ՀՀ-ում Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված է անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ հաղորդումը azdararir.am կայքում միասնական էլեկտրոնային

հարթակ մուտքագրելու միջոցով: Այս հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս Արդարադատության նախարարության, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Այս հարթակում ազդարարի անանունությունը երաշխավորվում է նրա համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով: Միևնույն ժամանակ, բոլոր հաղորդումները ստանում է ՀՀ գլխավոր դատախազությունը, որը շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը վերահասցեագրում է ԿԿՀ-ին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» N 439 որոշմամբ հաստատված կարգի 1-ին մասի համաձայն՝ միասնական էլեկտրոնային հարթակը վարվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, որը նշանակում է հարթակի ադմինիստրատորին:⁴⁰ Տվյալ կարգի 5-րդ մասը սահմանում է ադմինիստրատորի գործառույթները, որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջինս իրականացնում է ընդամենը վարչական գործունեություն:

Հայաստանում անանուն հաղորդումների ներկայացումը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ունի մի շարք խնդրահարույց կետեր.

1. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը օգտատիրոջ համար անհարմար է և տվյալների մուտքագրման տեսանկյունից պահանջում է որոշակի համակարգչային գիտելիքներ:
2. Անանունության հարթակով ազդարարումն ինքնըստինքյան ենթադրում է, որ քաղաքացիները չեն վստահում թե՛ իրավապահ մարմիններին, թե՛ արտաքին և ներքին ազդարարման պարագայում իրավասու մարմինների համապատասխան վերադասներին: Դա կարող է նաև նշանակել, որ չկա վստահություն ազդարարման վարույթների արդյունավետության և գաղտնիության ապահովման առումով, այդ իսկ պատճառով ընձեռվում է անանուն հաղորդումների միջոցով ազդարարելու հնարավորությունը:
3. Անանուն ազդարարման պարագայում քրեական դատավարության տեսանկյունից ներկայացված տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց դատաքննության ընթացքում, ուստի ներկայացված տվյալները ստուգվում են օպերատիվ հետախուզական միջոցառումների միջոցով, ինչը և՛ ժամանակատար է, և՛ երաշխիքներ չի պարունակում, որ հնարավոր կլինի լրիվությամբ բացահայտել ու ապացուցել կոռուպցիոն բնույթ կրող հանցագործության կամ հանրության շահերի դեմ իրականացված վնասակար գործողությունը:
4. Խնդրահարույց է այն փաստը, որ միասնական հարթակի ցանցային ադմինիստրատոր է նշանակվել երրորդ անձ՝ մասնավոր կազմակերպություն,⁴¹ որն իրականացնում է

⁴⁰ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» N 439-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444> (դիտված՝ 05.09.2024):

⁴¹ ՀՀ արդարադատության նախարարության և «Վի Իբս Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի մայիսի 27-ին կնքված «Պետության կարիքների համար համակարգչային ծառայությունների մատուցման» պետական

ազդարարի IP հասցեի ծածկագրումը: Այս պարագայում մասնավոր կազմակերպությանը նման լիազորությամբ օժտելը պոտենցիալ ազդարարողների մոտ կասկածներ կարող է առաջացնել ծածկագրման իսկության կամ տվյալների արտահոսքի հավանականության տեսանկյունից:

5. Միասնական հարթակի միջոցով ստացված տեղեկատվությունը ավտոմատացված հաշվառում չի անցնում, և, ամեն դեպքում, հետագայում վիճակագրություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է լինում ձեռքով իրականացնել տվյալների ամփոփումը:
6. Բացի այդ, azdararir.am կայքի միջոցով տրամադրված վիճակագրությունը բավարար տեղեկատվություն չի պարունակում ԶՀԿ-ների կողմից մոնիտորինգ իրականացնելու համար, քանի որ պարունակում է միմիայն որոշակի թվային ցուցանիշներ:

Նպատակահարմար է մշակել և իրականացնել հստակ գործողությունների ծրագիր՝ ուղղված ազդարարման միասնական հարթակի հանդիսացող azdararir.am կայքի բարելավմանը՝ միաժամանակ, սակայն, առաջարկելով այն օգտագործել ծայրահեղ դեպքերում՝ իրական վտանգների առկայության պարագայում:

Հարթակում առաջարկվում է նախատեսել դիմումների ավելի պարզ մուտքագրում, ներառել համապարփակ և մանրամասն վիճակագրության և՛ քանակական, և՛ որակական տվյալներ, որը կարող է օգտագործվել այլ շահագրգիռ կողմերի, մասնավորապես ԶՀԿ-ների կողմից ազդարարման համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը գնահատելու նպատակով:

Ազդարարման հաղորդումների միասնական հարթակի ցանցային ադմինիստրատորի գործառույթի իրականացումը վերապահել պետական կառույցի:

Հաշվեհարդարի արգելքը և դրանից պաշտպանությունը

Թի սկզբունքների համաձայն՝ ազդարարները, որոնց կյանքը կամ անվտանգությունը վտանգված է, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներն իրավունք ունեն ստանալու անձնական պաշտպանության միջոցներ: Նման պաշտպանության համար պետք է տրամադրվեն համապատասխան ռեսուրսներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 501-րդ հոդվածով որպես հանցագործություն, նախատեսված է ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց սպանությունը, առողջությանը վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը: Տրամաբանորեն այս դրույթը պետք է բխեր «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից, մինչդեռ վերջինիս մեջ չկա հստակ դրույթ, որով արգելվում են ազդարարի նկատմամբ հաշվեհարդարի հիման վրա կատարված վնասակար գործողությունները կամ դրանց սպառնալիքը:

Օրենքը միանգամից հղում է կատարում պաշտպանության միջոցներին: Այսպես, Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց

գնման N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/13 պայմանագիրը, <https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=0bbf12e1-134e-4ddc-88b8-106e019023fe> (դիտված՝ 16.04.2024):

հետևանքներից պաշտպանելու նպատակով համապատասխան մարմինն իր իրավասության շրջանակներում՝

1. ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը,
2. ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ,
3. ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ,
4. իրականացնում է ազդարարի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված միջոցներով և կարգով,
5. ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ազդարարին տեղափոխում է այլ աշխատասենյակ, ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չձանրաբեռնելը և այլն:

Օրենքի տեքստից պարզ է դառնում, որ պաշտպանությունն ապահովվում է միայն Օրենքի իմաստով սահմանված վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից, իսկ Օրենքի իմաստով վնասակար է համարվում գործողությունը կամ անգործությունը, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ նրա գույքին վնաս պատճառելով կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները, կամ ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով: Ակնհայտ է, որ հիմնականում շեշտը դրվել է աշխատանքային ոլորտում հաշվեհարդարի վրա՝ վերջում միայն նշելով «ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ»: Միայն աշխատանքային իրավունքների հետ կապված պաշտպանության միջոցներ են սահմանվում նաև Կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշմամբ:

Օրենքը նաև սահմանում է, որ ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է ոստիկանություն օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանություն ապահովելու համար: Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով՝ այնքանով, որքանով իր էությամբ (*mutatis mutandis* - համապատասխան փոփոխություններով) կիրառելի է: Այնուամենայնիվ, թե՛ Օրենքը, թե՛ Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Քրեական վարույթում և վարույթից դուրս հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու

մասին» N 560-Ն որոշումը հստակ չէն սահմանում հատուկ պաշտպանության միջոցների կիրառման ժամկետները, երբ խոսքը վերաբերում է ոչ քրեական բնույթ կրող ազդարարման դեպքերին:

Բացի այդ, խնդրահարույց է նաև Օրենքի այն ձևակերպումը, որ «Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է Ոստիկանություն»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանվել է, որ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով վարույթն իրականացնող մարմին կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանը՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա:

Անհրաժեշտ է ունենալ վնասակար գործողությունների ավելի համապարփակ ու հստակ սահմանում՝ Օրենքի 2-րդ հոդվածում ներառելով այլ՝ ոչ աշխատանքային բնույթի վնասակար գործողությունները, և նշել հաշվեհարդարի սպառնալիքը, որի դեպքում անձը նույնպես ենթակա է պաշտպանության, իսկ 10-րդ հոդվածը համալրել այլ՝ ոչ աշխատանքային բնույթի պաշտպանության միջոցներով՝ ուղղված հաշվեհարդարից պաշտպանելուն:

Պետք է օրենքով հստակեցնել, թե որ իրավասու մարմինն պետք է դիմի ազդարարը հատուկ պաշտպանություն կիրառելու համար՝ ՀՀ դատախազություն, թե՞ ՀՀ մարդու իրավունքների պաշպանին: Պետք է նաև հստակեցնել հատուկ պաշտպանության միջոցների կիրառման հնարավորություններն ու ընթացակարգը քրեական բնույթ չկրող ազդարարումների պարագայում:

Անհրաժեշտ է հստակեցնել քրեական վարույթից դուրս ազդարարման պարագայում հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու դեպքերը:

Ապացուցման բեռը⁴²

Համաձայն ԹԻ սկզբունքների՝ հաշվեհարդարին առնչվող ապացուցման բեռը պետք է կրի գործատուն: Մասնավորապես պատժամիջոցներից կամ տույժերից խուսափելու համար գործատուն պետք է հստակ և համոզիչ կերպով ապացուցի, որ աշխատողի նկատմամբ ձեռնարկված ցանկացած միջոց որևէ կերպ կապված չէ աշխատողի ազդարարման հետ:

ԹԻ ուղեցույցը նշում է, որ աշխատողների համար կարող է դժվար լինել ցույց տալ, որ իրենք բացասական վերաբերմունքի են արժանացել ազդարարման հետևանքով: Մյուս կողմից, գործատուները սովորաբար ունեն սահմանված ընթացակարգեր աշխատողների դեմ ձեռնարկված գործողությունների հիմնավորման համար: Զանի որ գործատուն ավելի մեծ ուժ և ռեսուրսներ ունի, պատասխանատվությունը պետք է դրվի նրա վրա՝ ապացուցելու, որ ձեռնարկված գործողությունը պայմանավորված չէ ազդարարման հետ:

⁴² ԹԻ ուղեցույց, սկզբունք 8, էջ 55:

Սա նշանակում է, որ աշխատակիցը կարող է միայն հայտնել, որ 1. Նա ազդարարել է և 2. ենթարկվել է բացասական վերաբերմունքի: Այնուհետև գործատուն պետք է ապացուցի, որ վերաբերմունքն արդարացի է եղել և որևէ կերպ կապված չէ ազդարարման հետ, այսինքն, որ անկախ ազդարարումից, աշխատողը կենթարկվեր այդ պատասխանատվության միջոցին կամ աշխատողի նկատմամբ կկայացվեր այդ անբարենպաստ որոշումը: Որոշ երկրներում, այդ թվում ԵՄ-ում, նմանատիպ մոտեցում կիրառվում է նաև խտրականության դեմ օրենսդրության դեպքում:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանության մասին 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանում է, որ ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Այս պարագայում ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային ստանդարտին:

Պատասխանատվությունը հաշվեհարդարի և միջամտության համար

Համաձայն ԹԻ ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքների⁴³ ազդարարի նկատմամբ հաշվեհարդարի կամ միջամտության ցանկացած գործողություն համարվում է սխալ վարքագիծ, իսկ հաշվեհարդարի հեղինակները ենթակա են աշխատանքային/մասնագիտական պատժամիջոցների և քաղաքացիաիրավական պատասխանատվության: Բացի այդ ԹԻ սկզբունքներից է արդար դատաքննության իրավունքը այն պարագայում, երբ ազդարարի իրավունքները խախտվում են:⁴⁴

Քրեական պատիժները կարող են կիրառվել, եթե հաշվեհարդարի գործողությունը հատկապես ծանր է (այսինքն՝ ազդարարի անվտանգությունը կամ կյանքը դիտավորյալ վտանգի ենթարկելը): Սա կախված է երկրի կոնկրետ համատեքստից և պետք է դիտարկվի որպես համաչափ պատժամիջոց միայն անհրաժեշտության դեպքում:

Հաշվեհարդար, այսինքն՝ վրեժխնդրությունից դրդված վնասակար գործողությունների թողտվության դեպքում, պոտենցիալ ազդարարները խուսափելու են հաղորդում ներկայացնելուց, քանի որ առաջանալու են մեծ կասկածներ պաշտպանության մեխանիզմների և առհասարակ ազդարարման ինստիտուտի նկատմամբ, ինչպես նաև վախ, որ նրանց նկատմամբ ևս տեղի կունենա հաշվեհարդար, եթե որոշեն բարձրաձայնել որևէ դեպքի վերաբերյալ: Ուստի պոտենցիալ ազդարարների վստահությունը պահպանելու տեսանկյունից կարևոր է ներպետական օրենսդրությամբ ունենալ հստակ ընթացակարգեր, որոնք նախատեսում են ցանկացած միջամտության պարագայում կարգապահական, վարչական, քաղաքացիական, ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն:

Ավելին, ըստ ԹԻ մշակված օրենսդրության գնահատման մեթոդաբանության, ազդարարման ոլորտում ուժեղ օրենսդրություն ունենալու պայմաններից մեկն է նաև ազդարարների համար հոգեցոցիալական աջակցության հնարավորության ստեղծումը, քանի որ շատ հաճախ նման

⁴³ ԹԻ ուղեցույց, սկզբունք 30, էջ 45:

⁴⁴ ԹԻ ուղեցույց, սկզբունք 21, էջ 54:

հաղորդում ներկայացնելուց հետո հաշվեհարդարի սպառնալիքի տակ անձինք գտնվում են ծանր վիճակում:

Ըստ միջազգային ստանդարտների և ԹԻ մեթոդաբանության՝ ազդարարների և իրենց հետ փոխկապակցված երրորդ անձանց պաշտպանության տեսանկյունից կարևոր է նաև մինչև ազդարարման հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելը միջանկյալ պաշտպանական միջոցների կիրառման հնարավորությունը՝ որպես մեխանիզմ, ինչպես նաև հետագայում ազդարարման հետ կապված կրած վնասների փոխհատուցման իրավունքը:

Իտալիայում պետական հատվածում հաշվեհարդարների համար վարչական տույժեր են սպառնում:

Ավստրալիայում օրենսդրությունը նմանատիպ դեպքերի համար նախատեսում է քրեական պատժամիջոցներ:

ՀՀ ազդարարման վերաբերյալ օրենսդրությունը նախատեսում է սահմանափակ ձևակերպումներ պաշտպանության և հետագայում վնասի փոխհատուցման միջոցների վերաբերյալ, իսկ միջանկյալ պաշտպանական միջոցների հասկացությունը իսպառ բացակայում է: Դրանով իսկ պոտենցիալ ազդարարները որևէ կերպ հետաքրքրված չեն պոտենցիալ իրավախախտումը ազդարարելու հարցում:

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3.1-րդ մասի՝ ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից: Ըստ Օրենքի 12-րդ հոդվածի՝ ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ևս ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր ձևակերպում,⁴⁵ ըստ որի աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել, եթե պարզվում է, որ «աշխատանքի պայմանները փոփոխվել են, կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ ՀՀ օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ», մինչդեռ հաշվեհարդարի նպատակով աշխատանքից ազատելու պատճառներ ստեղծելը կարող է լինել նաև օրինական հիմքերով:

⁴⁵ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 9-ին, 265-րդ հոդվածի 1.1. մաս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194077> (դիտված՝ 08.09.2024):

ՀՀ ազդարարման օրենսդրության նման սահմանափակ ձևակերպումը և ընդհանրական դատական պաշտպանության իրավունքի սահմանումը, բայց և դատավարական օրենսգրքերով ազդարարման վերաբերյալ վնասների փոխհատուցման մեխանիզմների բացակայությունը դարձնում են հաշվեհարդարից պաշտպանվելու մեխանիզմները թույլ, իսկ օրենսդրությունը՝ «ոչ ազդարարակենսորոն»: Որևէ դրույթ առկա չէ ազդարարի հոգեւոցիալական աջակցության մասին:

Պոտենցիալ ազդարարների վստահությունը պահպանելու նպատակով կարևոր է ներպետական օրենսդրությամբ ունենալ հստակ ընթացակարգեր, որոնք նախատեսում են ցանկացած միջամտության պարագայում կարգապահական, վարչական, քաղաքացիական, ընդհուպ քրեական պատասխանատվություն:

Նպատակահարմար է սահմանել հոգեւոցիալական աջակցության հնարավորություն և ձեռնարկել գործուն քայլեր այդ ուղղությամբ, օրինակ՝ հաստիք նախատեսել ՄԻՊ գրասենյակում:

Անհրաժեշտ է լրացնել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը և նախատեսել հատուկ ընթացակարգ վնասների փոխհատուցման և միջանկյալ պաշտպանական միջոցներ կիրառելու համար:

Իրավաբանական օգնություն և խորհրդատվություն ստանալու իրավունք

Թեև ԹԻ ուղեցույցը իրավաբանական օգնությանը չի անդրադառնում որպես առանձին միջոց, այլ դիտարկում է այն որպես ազդարարման ոլորտում անկախ մարմնի գործառնություններից մեկը, ԹԻ մեթոդաբանությունը նշում է, որ ուժեղ օրենսդրություն ունեցող պետություններում ազդարարների համար պետք է ապահովված լինի քրեական և քաղաքացիական վարույթներում իրավաբանական օգնության հնարավորությունը:⁴⁶

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ ազդարարն ունի Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք: Նման դրույթ պարունակում է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը. դրա 30.2-րդ հոդվածի 3-րդ մասը նշում է, որ Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները: Խորհրդատվության շրջանակում ձեռք բերված տեղեկությունները և անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման առանց անձի գրավոր համաձայնության:

Այդուհանդերձ, 2022 թվականի դեկտեմբերին օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա ազդարարման ոլորտում ՄԻՊ լիազորությունները ընդլայնելուց ի վեր ՄԻՊ գրասենյակում նոր ստորաբաժանում կամ հաստիք չի ավելացել, որը կզբաղվեր

⁴⁶ ԹԻ մեթոդաբանություն, էջ 71:

խորհրդատվություն տրամադրելով կամ ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշման հիման վրա վիճակագրությունը հավաքագրելով և հրապարակելով կամ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների համաձայն ազդարարման ոլորտում մոնիտորինգ իրականացնելով:

Ազդարարների իրավունքների պաշտպանության տեսակետից, ինչպես նաև ազդարարումը խրախուսելու համար կարևոր է, որ ազդարարը կարողանա օգտվել անվճար իրավաբանական օգնությունից: ՀՀ-ում ազդարարողը չունի անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք և չի կարող օգտվել Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից, ինչը, օրինակ, ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, տրամադրվում է, ի թիվս այլոց, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:

Անհրաժեշտ է, որպեսզի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի⁴⁷ 41-րդ հոդվածով անվճար իրավաբանական օգնության շահառուների ցանկում ավելացվեն ազդարարներն ու ազդարարների հետ փոխկապակցված անձինք:

IV. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները

Հանրային մասնակցությունը

Ըստ ԹԻ ուղեցույցի՝ պետություններն ազդարարման մասին օրենքների, կանոնակարգերի և ընթացակարգերի մշակմանը և պարբերական վերանայմանը պետք է ներգրավեն հիմնական շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ արհմիություններին, բիզնեսի/գործատուների ասոցիացիաներին, ԶԿ-ներին և ակադեմիական հաստատություններին: Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը կապահովի, որ օրենսդրությունը հաշվի առնի ազդակիր համայնքի և շահառուների կարիքներն ու մտահոգությունները՝ այսպիսով ձևավորելով համաձայնություն, վստահություն այն մարմինների և կազմակերպությունների կողմից, ովքեր դերակատարություն կունենան օրենսդրության կիրարկման գործում: Վերջապես, լայն խորհրդակցությունների անցկացումը կարող է լինել հանրային իրազեկման քարոզարշավի առաջին քայլը՝ խթանելու ազդարարումը: Սա հատկապես կարևոր է այն երկրներում, որտեղ ազդարարների մշակութային ընկալումը բացասական է:

ԹԻ ուղեցույցը խորհուրդ է տալիս ապահովել հետևյալ դերակատարների մասնակցությունը՝

- համապատասխան նախարարությունները, այդ թվում՝ արդարադատության և աշխատանքի/զբաղվածության, և զգայուն ոլորտների (օրինակ՝ մաքսային, կրթություն, առողջապահություն և պետական գնումներ) համար պատասխանատու կառույցները,

⁴⁷ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110603> (դիտված՝ 08.09.2024):

- տեսչական և հարկադիր (օրինակ՝ առողջության և անվտանգության և առևտրի ստանդարտների հարցերով զբաղվող) մարմինները,
- մարդու իրավունքների անկախ մարմիններ, ինչպիսիք են՝ օմբուդսմենները,
- էթիկայի հանձնաժողովները,
- արհմիությունները,
- ԶԶ-ները,
- փաստաբանների, աուդիտորների, ինժեներների, բժիշկների և այլնի մասնագիտական կառույցները (ներառյալ կարգապահական կամ էթիկայի հանձնաժողովները),
- դատական մարմինները,
- իրավապահ մարմինները, այդ թվում՝ ոստիկանությունը, դատախազությունը,
- հանրային հաշվետվողականության մարմինները, ինչպիսիք են՝ պետական և տեղական հաշվեքննիչ/աուդիտի մարմինները:

ՀՀ ազդարարմանն առնչվող օրենսդրությունը հատուկ դրույթ չի պարունակում հանրային մասնակցության և խորհրդակցությունների վերաբերյալ, սակայն այս հարցը մասնակիորեն կարգավորվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1146-Ն որոշմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային քննարկումը սահմանվում է որպես «իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով [...] օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց»:⁴⁸

Հանրային քննարկումը կազմակերպում են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է: Հանրային քննարկումներն անցկացվում են իրավասու մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններ ներկայացնելու հետ միաժամանակ հրապարակելու միջոցով: Օրենքով նախատեսված է հրապարակել հանրային քննարկումների արդյունքները և դրանց հիման վրա լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը:⁴⁹ Հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած կառավարություն ներկայացված նախագիծը կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին:

Հայաստանում իրավաստեղծ գործընթացում առկա են բազմաթիվ բացեր՝ պայմանավորված մասնակցության ապահովման ժամանակահատվածով, իրավակիրարկման երաշխիքների, այդ թվում՝ հսկողության, պատասխանատվության և իրավական հետևանքների

⁴⁸ ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», ընդունված 2018 թվականի մարտի 21-ին, Հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187324> (դիտված՝ 08.09.2024):

⁴⁹ Նույն տեղում, Հոդված 4:

բացակայությամբ: ԹԻՅԿ-ն այս հարցի վերաբերյալ պատրաստել է առանձին զեկույց, որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվել առկա խնդիրներին:⁵⁰

Առաջարկում ենք ազդարարման օրենսդրության լավարկման տեսանկյունից հետամուտ լինել հանրային մասնակցության խրախուսմանը որոշումների ընդունման վաղ փուլերում, այդ թվում՝ նախատեսելով դեմ առ դեմ հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:

Առավել ընդհանրական առումով անհրաժեշտ է կատարելագործել իրավաստեղծ գործընթացում հանրային մասնակցության կարգավորումները և դրան սպասարկող՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft հարթակը: Պետք է հանրային քննարկումների իրականացման նկատմամբ սահմանել որոշակի հսկողություն/համակարգում, իսկ իրավակարգավորումների խախտմամբ ընդունված իրավական ակտերի դեպքում՝ իրավական հետևանքներ և պատասխանատվություն:

Ազդարարման վերաբերյալ վիճակագրության վարում և հրապարակում

Համաձայն ԹԻ միջազգային սկզբունքների՝ ազդարարման հարցերով մասնագիտացված անկախ մարմինը⁵¹ պետք է հավաքի և կանոնավոր կերպով հրապարակի (առնվազն տարին մեկ անգամ) տվյալներ և տեղեկատվություն ազդարարների մասին օրենքի և դրա կիրառելիության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը պետք է ներառի ստացված գործերի քանակը, գործերի արդյունքները (այսինքն՝ մերժված, ընդունված, հետաքննված, վավերացված), հաշվեհարդար իրականացնելու դեպքերը, ապօրինությունների տարածվածությունը պետական և մասնավոր հատվածներում, իրազեկվածությունը և վստահությունը ազդարարող մեխանիզմների նկատմամբ, գործերի քննության համար պահանջվող ժամանակը:

2022 թվականի դեկտեմբերին ընդունված փոփոխությունների համաձայն՝ Օրենքի 9.1-րդ հոդվածով նախատեսվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները վարեն ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանված կարգով: Նախատեսված է, որ վիճակագրության մեջ զետեղվեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ համապատասխան դասակարգման՝ ներքին, արտաքին, հանրությանը և միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված:

Կառավարության կողմից 2023 թվականի հուլիսի 6-ին ընդունված «2018 թվականի N 272-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1148-Ն որոշումը ՄԻՊ-ի իրավասությունների շրջանակների մեջ է ներառել միասնական վիճակագրության հրապարակումը թե՛ ազդարարման միասնական հարթակում, թե՛ իր սեփական կայքում: Ըստ այս որոշման՝ իրավասու մարմինները ներքին, արտաքին, հանրությանը, ինչպես նաև ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով արված ազդարարման

⁵⁰ ԹԻՅԿ, Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում, հետազոտական զեկույց, Երևան, 2022 թ., <https://transparency.hrwam/hy/publication/pdf/261/9465> (դիտված՝ 09.09.2024):

⁵¹ ԹԻ ուղեցույց, սկզբունք 28, էջ 58:

հաղորդումների մասին վարում են վիճակագրություն: Վիճակագրությունը վարվում է էլեկտրոնային եղանակով և հաստատվում էլեկտրոնային ստորագրությամբ իրավասու մարմնի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից: Վիճակագրության վարման աշխատանքներն իրականացվում են տվյալ որոշմամբ նախատեսված պատասխանատու անձի կողմից և հսկողության ենթարկվում իրավասու մարմնի, իրավասու մարմնի ղեկավարի կողմից: Իրավասու մարմնի կողմից վարվող վիճակագրությունն ամփոփվում է տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով, որը ներկայացված է ՀՀ կառավարության որոշմամբ:

Իրավասու մարմնի կողմից վարվող վիճակագրությունն ամփոփվում է օրացուցային տարվա կտրվածքով, բայց ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Օրացուցային տարվա հաշվման սկիզբ է համարվում հունվարի 1-ը, իսկ ավարտը՝ դեկտեմբերի 31-ը: Իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին: Բացի այդ, իրավասու մարմինը պարտավոր է մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը իր պաշտոնական ինտերնետային կայքում (ՏԻՄ-երի պաշտոնական ինտերնետային կայքերի բացակայության դեպքում՝ մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում) տեղադրել Կառավարության որոշման հավելվածի Ձևին համապատասխան ամփոփված վիճակագրական տվյալները: Իրավասու մարմինը յուրաքանչյուր տարվա վիճակագրական հաշվետվության հետ հրապարակում է նաև դրան նախորդող տարվա վիճակագրական հաշվետվության հետ համեմատական վերլուծությունը:

Հայաստանում հրապարակվող վիճակագրական տվյալները բավարար չեն ազդարարման համակարգի արդյունավետության նկատմամբ մոնիտորինգ ու գնահատում իրականացնելու, ինչպես նաև ազդարարման ոլորտում թափանցիկություն ապահովելու տեսանկյունից, ընդ որում, ոչ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ոչ էլ պետության համար:

Հայաստանում ազդարարման վերաբերյալ տեղեկատվության միակ աղբյուրը ազդարարման միասնական հարթակի միջոցով հրապարակված վիճակագրությունն է, որը պարունակում է միայն քանակական տվյալներ ազդարարումների մասին:⁵² Հարթակում տարեկան և ամսեկան կտրվածքով ներկայացված վիճակագրությունը բավականին թերի է. նույնիսկ պարզ չէ, թե արդյոք հարթակի միջոցով բոլոր ազդարարումները եղել են անանուն, թե՛ ոչ: Ներկայացված են օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների տոկոսային հարաբերակցությունն ազդարարումների ընդհանուր քանակի հետ և հարուցված քրեական գործերի տոկոսային հարաբերակցությունն օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների ընդհանուր քանակի հետ: Իսկ ինչ վերաբերում է ազդարարումների այլ տեսակների մասին վիճակագրության վարմանը, ապա տվյալները խիստ սուղ են:

Որևէ վիճակագրական տվյալ պատշաճ կերպով չի հրապարակվում իրավասու մարմինների կայքէջերում: Վիճակագրություն վարելու գործառույթն այստեղ պատկանում է

⁵² Ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակ (2019-2022) 19.04.2023-ին հրապարակած վիճակագրություն, <https://azdararir.am/am/case?content.cid=7> (դիտված՝ 11.09.2024):

ազդարարման հարցերով պատասխանատուներին, մինչդեռ պատասխանատուների համար որևէ մասնագիտական վերապատրաստում չի իրականացվում, և այդ նույն պատասխանատուները իրենց լիազորությունների շրջանակներում այդ գործառնությունները համատեղում են իրենց հիմնական գործառնությունների հետ:⁵³

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշմամբ ՄԻՊ-ին վերապահված միասնական վիճակագրության հրապարակման պահանջը նոր լիազորություն է, և առաջիկայում պարզ կլինի վերջինիս իրականացման արդյունավետությունը:

Անհրաժեշտ է կատարելագործել ազդարարման վիճակագրական համակարգը: Մասնավորապես պետք է ընդլայնել իրավասու մարմինների կողմից ազդարարման առնչվող հավաքագրման ենթակա տվյալների ցանկը (ինչպես քանակական, այնպես էլ որակական), հստակեցնել ընթացակարգերը և հետամուտ լինել հավաքագրված/մշակված տվյալների հրապարակմանը իրավասու բոլոր մարմինների կայքերում և դրանց ներկայացմանը ՄԻՊ-ին: ՄԻՊ-ի կայքում և ազդարարման միասնական հարթակում անհրաժեշտ է ապահովել համապարփակ տվյալների ներկայացում և վերլուծություն:

Խրախուսման համակարգ

Համաձայն ԹԻ ազդարարման օրենսդրության վերաբերյալ միջազգային սկզբունքների կիրառման ուղեցույցի՝ եթե տեղին է ազգային համատեքստում, ազդարարները կարող են ստանալ ազդարարման շնորհիվ վերականգնված միջոցների մի մասը կամ ազդարարման արդյունքում զանձվող տույժերը: Այլ պարգևները կարող են ներառել շնորհակալագիր կամ պարգևատրում (ըստ ազդարարի համաձայնության), պաշտոնի առաջխաղացում կամ հաշվեհարդարի համար՝ պաշտոնական ներողություն:⁵⁴

Շատ երկրներ ոչ նյութական պարգևներ են շնորհում այն անհատներին, որոնց գործողությունները զգալիորեն նպաստել են ընդհանուր բարօրությանը, կամ ովքեր իրենց վտանգի են ենթարկել՝ պաշտպանելու ուրիշներին: Լինելով հանրային շահերի պաշտպաններ՝ ազդարարները պետք է իրավասու լինեն ստանալ նման հանրային պարգևներ: Պարգևներ կարող են տրամադրվել նաև գործատուների կողմից՝ շնորհակալություն հայտնելով տվյալ կազմակերպությանը մատուցած ծառայության համար, ճանաչելի դարձնելով նրանց՝ որպես «արժանապատիվ քաղաքացիներ» կամ «լավ աշխատողներ»: Այս մոտեցումը կարող է նաև օգնել ազդարարների էմոցիոնալ վերականգնմանը՝ բարձրացնելով նրանց հեղինակությունն ու վարկանիշը: Վերջապես, դա կարող է օգնել կասեցնելու հետագա անարդար վերաբերմունքը: Նման հրապարակային մրցանակները պետք է հնարավոր լինեն միայն ազդարարի բացահայտ համաձայնությամբ՝ ազդարարի ինքնության գաղտնիության ապահովման սկզբունքին համապատասխան:

ՀՀ ազդարարման օրենսդրությունը խրախուսման որևէ մեխանիզմ չի պարունակում: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2023-2026 թթ. գործողությունների

⁵³ ԹԻՀԿ, Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում, Էթիկայի հանձնաժողովներ Բարեվարքության հարցերով կազմակերպիչներ Ազդարարման հարցերով պատասխանատուներ, զեկույց, Երևան, 2021թ., <https://transparency.am/hy/publication/244> (դիտված՝ 07.09.2024):

⁵⁴ ԹԻ ուղեցույց, սկզբունք 23, էջ 56:

ծրագրի 2.20-րդ գործողությամբ⁵⁵ նախատեսվել է կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ այդ թվում դիտարկելով ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը:

Հայաստանյան համատեքստում ազդարարումը խթանելու նպատակով ֆինանսական խրախուսումը կարող է խնդրահարույց լինել, քանի որ քաղաքացիները այդ քայլը կարող են դիտել որպես շահույթ հետապնդելու հնարավորություն, մինչդեռ ազդարարումը պետք է համարվի քաղաքացիական գիտակցության, էթիկայի, պարտքի և պատասխանատվության դրսևորում, այլ ոչ թե փող աշխատելու միջոց: Ընդ որում, պետությունը ապահովագրված չէ մեծաքանակ անհիմն ազդարարումներ ստանալու և դրանց ընթացք տալու համար ռեսուրսներ ծախսելու ռիսկերից:

Ինչ վերաբերում է խրախուսման տեսակներին, որպես տարբերակ կարող են դիտարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրության համատեքստում առկա խրախուսման միջոցները: Մասնավորապես ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ խրախուսման տեսակն ինքնուրույն ընտրելու հայեցողություն ունենալով՝ գործատուն կարող է խրախուսել աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարող աշխատողներին հետևյալ եղանակներով. 1. շնորհակալության հայտարարում, 2. միանվագ դրամական պարգևատրում, 3. հուշանվերով պարգևատրում, 4. լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում, 5. կարգապահական տույժի հանում:

Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողները կարող են ներկայացվել պետական պարգևների:

Առաջարկվում է որպես խրախուսման մոդել ընդունել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի կարգավորումները: Առնչվող խրախուսման միջոցներ կարող են նախատեսել իրավասու մարմինները նաև արտաքին ազդարարումներ ստանալու պարագայում: Դիտարկել դրամական պարգևատրումների հնարավորությունը միայն որոշակի շեմից բարձր՝ խոշոր կոռուպցիոն բացահայտումների և վնասի վերականգման դեպքում՝ նախապես գնահատելով դրա հնարավոր հետևանքները մշակութային համատեքստում:

Ազդարարման պատասխանատու մարմին

Համաձայն ԹԻ սկզբունքների՝ խորհուրդ է տրվում ընդունել ազդարարման վերաբերյալ ինքնուրույն օրենսդրություն՝ հստակ և համահունչ ընդհանուր օրենսդրական դաշտին, որը պաշտպանում է ազդարարներին: Ոլորտային կամ թեմատիկ դրույթները մեծացնում են բացերի և իրավական անհամապատասխանության վտանգը և դժվարացնում ազդարարների համար նորմերի ընկալումը, քանի որ դժվար է հասկանալ, թե արդյոք նրանք պաշտպանված են, թե՛ ոչ:

⁵⁵Գործողությունների ծրագիր, գործողություն 2.20:

Օրենսդրությունը նաև պետք է լինի հասանելի: Ազդարարները և գործատուները պետք է կարողանան հեշտությամբ հասկանալ, թե որոնք են իրենց իրավունքներն ու պարտականությունները:⁵⁶

Այս տեսանկյունից ՀՀ ազդարարման օրենսդրությունը ամփոփված է մեկ համապարփակ օրենքում, թեև առկա են այլ իրավական ակտեր, որոնք հատվածական են դարձնում օրենսդրությունը՝ առաջացնելով հակասություններ ու բացեր: Հասարակ ազդարարը, որը չունի իրավաբանական գիտելիք, պետք է կատարի հետազոտություն՝ հասկանալու, թե որն է իրավասու մարմինը, որքանով և ինչպես է ինքը պաշտպանված:

Համաձայն ԹԻ ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքների՝ անկախ մարմինը պետք է ընդունի և արձագանքի հաշվեհարդարի վերաբերյալ բողոքներին և ազդարարման տեղեկատվության ոչ պատշաճ հետաքննության դեպքերին: Տվյալ մարմինը կարող է պարտադիր հանձնարարականներ տալ և համապատասխան տեղեկատվություն ուղարկել կարգավորող, հետաքննչական կամ դատախազական մարմիններին հետագա գործողությունների համար: Այն պետք է նաև տրամադրի խորհրդատվություն և աջակցություն, վերահսկի և վերանայի ազդարարների շրջանակները, բարձրացնի հանրային իրազեկվածությունը՝ խթանելու ազդարարման երևույթի մշակութային ընդունումը: Ազդարարման պատասխանատու մարմինն նաև պետք է տրամադրվեն համապատասխան ռեսուրսներ և կարողություններ այդ գործառույթներն իրականացնելու համար:⁵⁷

Ազդարարման հարցերով անկախ մարմինը պետք է հավաքի և կանոնավոր կերպով հրապարակի (առնվազն տարեկան) տվյալներ և տեղեկություններ ազդարարումների, ինչպես նաև ազդարարման օրենսդրության արդյունավետության մասին (օրինակ՝ արդյո՞ք այն կիրառվում է՝ հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված գաղտնիության և տվյալների պաշտպանության դրույթները): Այս տեղեկատվությունը պետք է ներառի ստացված գործերի քանակը, գործերի արդյունքները (այսինքն՝ մերժված, ընդունված, հետաքննված, հաստատված)՝ հաշվեհարդարի դեպքերը, ապօրինությունների տարածվածությունը պետական և մասնավոր հատվածներում, իրազեկվածությունը և վստահությունը ազդարարող մեխանիզմների նկատմամբ և գործերի քննության համար պահանջվող ժամանակը:

Ազդարարման պատասխանատու մարմինը պետք է ունենա բավարար լիազորություններ՝ իրականացնելու բողոքի պատշաճ քննությունը: Ինչպես շեշտվում է «Կառավարության հաշվետվողականության ծրագիր» կազմակերպության կողմից, «փաստաթղթերին և ինստիտուցիոնալ պաշտոնյաներին բավարար հասանելիություն ունեցող օմբուդսմենը կարող է չեզոքացնել ռեսուրսների թերությունները և կրճատել կոնֆլիկտները արագ ուղղիչ գործողություններ իրականացնելու միջոցով»:⁵⁸ Այս մարմինը պետք է իրավասու լինի դիմելու պաշտպանական միջոցներ կիրառելու համար, երբ կա անարդար վերաբերմունք և անհրաժեշտ է կիրառել այդպիսի միջոցներ:

⁵⁶ ԹԻ ուղեցույց, սկզբունք 24, էջ 66:

⁵⁷ Նույն տեղում, սկզբունք 28, էջ 58:

⁵⁸ Նույն տեղում, էջ 59:

Թի սկզբունքների վերաբերյալ ուղեցույցն ընդգծում է, որ խորհուրդ է տրվում բուն ազդարարման հետաքննությունը տարանջատել անարդար վերաբերմունքի մասին հաղորդումների հետաքննությունից: Ինչպես ընդգծվում է ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի կողմից, դա նվազեցնում է շահերի բախման վտանգը ազդարարների հանդեպ վերաբերմունքի և ազդարարման հիմք հանդիսացող հաղորդման միջև: Անարդար վերաբերմունքի վերաբերյալ բողոքի գնահատման վրա չպետք է ազդեն ազդարարման հետաքննության արդյունքները, հատկապես այն դեպքերում, երբ ոչ մի ապօրինություն չի հայտնաբերվել:⁵⁹

Իտալիայի ազգային հակակոռուպցիոն մարմինը (ANAC) կարող է պատժել այն անձանց, ովքեր պատասխանատու են հանրային հաստատություններում ազդարարումների հետ կապված անգործության համար:

Ֆրանսիայի Կորեայում Հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովը (ACRC) կարող է տուգանք սահմանել պաշտպանական միջոցները չկատարելու համար և նույնիսկ պարտավոր է ստուգել, թե արդյոք պաշտպանական միջոցներն իրականացվել են, և ազդարարը բախվել է որևէ այլ դժվարության կամ թերի կարգավորումների:

Այնուամենայնիվ, որպեսզի ազդարարումները հետաքննվեն և անհապաղ հասցեագրվեն, Եվրոպայի խորհուրդն առաջարկում է, որ դատարանները կամ իրավասու մարմինները լիազորված լինեն փոխհատուցում վճարելու ազդարարին և պատժելու գործատուին կամ այլ պատասխանատու անձին արագ և համարժեք հետաքննություն չկատարելու համար:⁶⁰

Ազդարարման համակարգի իրավասու կառույցները Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում ազդարարմանն առնչվող գործընթացներում իրավասու մարմինները բազմաթիվ են:

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարությունը հակակոռուպցիոն քաղաքականության, այդ թվում ազդարարման ոլորտի լիազոր մարմինն է: Այն պատասխանատու է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի իրականացման համար, որը ներառում է ազդարարման համակարգի կատարելագործմանն ու արդիականացմանը միտված 2.17-2.20 գործողությունները:⁶¹

⁵⁹ United Nations Office on Drugs and Crime (UNODC), Resource Guide on Good Practice in the Protection of Reporting Persons (2015), p. 71-72, https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741_Person_Guide_eBook.pdf (դիտված՝ 11.09.2024):

⁶⁰ Council of Europe, Protection of Whistleblowers: A Brief Guide for Implementing a National Framework, January 2015, <https://rm.coe.int/16806fffb> (դիտված՝ 11.09.2024):

⁶¹ Գործողությունների ծրագիր:

Ազդարարության նախարարությունը, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշման համաձայն, ապահովում է ազդարարման միասնական հարթակի ընդհանուր վարումը և Գլխավոր դատախազության հետ համատեղ իրականացնում հարթակի գործարկման աշխատանքները:

ՀՀ գլխավոր դատախազություն

ՀՀ գլխավոր դատախազությունը, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ստանում է միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումները: Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում համապատասխան ակտի ընդունումը: Նույն հոդվածի 1.1-ին, 3-րդ և 4-րդ մասերից բխում է, որ հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կողմից վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, իսկ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը՝ ԿԿՀ: Այս պարագայում հստակ չէ նաև այն հանգամանքը, որ Օրենքով սահմանված չէ Հակակոռուպցիոն կոմիտեի դերը, որի հիմնական գործառնական դերն է կոռուպցիայի դեմ պայքարը: Հետևաբար ՀՀ գլխավոր դատախազությունը համակարգման շրջանակներում ընթացքավորում է գործը, և հետո արդեն գործը հասնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1.1-րդ մասի՝ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին անանուն հաղորդումը ՀՀ գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է ԿԿՀ-ին: Վերջինս ապահովում է իրեն վերահասցեագրված՝ իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: Սույն գործառույթը նախատեսված է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով՝ ի թիվս այլ գործառույթների:

Բացի այդ, ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, եթե արտաքին ազդարարում հանդիսացող հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, իսկ դրա վերադաս մարմնի առկա չէ, ապա հաղորդումը ներկայացվում է ԿԿՀ կամ համապատասխան մարմնի հանրային ծառայողի եթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում):

Ուշագրավ է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ ԿԿՀ-ն իրականացնում է ազդարարման վարույթ, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և դրանով սահմանված վարույթի առանձնահատկություններով, մինչդեռ այդ վարույթը որպես այդպիսին հստակ սահմանված չէ:

Իրավասու մարմիններ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ազդարարման հարցում իրավասու մարմիններ են համարվում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական և համայնքային կազմակերպությունները, հանրային նշանակության կազմակերպությունները, որոնք Օրենքով սահմանված երաշխիքների ապահովմամբ պարտավոր են ընթացք տալ ազդարարմանը: Ընդ որում, ներքին կամ արտաքին ազդարարման, ինչպես նաև հանրությանը ազդարարելու դեպքում որպես իրավասու մարմին կարող են հանդես գալ տարբեր մարմիններ և, արդյունքում, չկա հստակություն, թե որ մարմինները կարող են հանդես գալ որպես իրավասու մարմիններ և թե, օրինակ, իրավապահ մարմինները այս պայմաններում նույնպես կարող են հանդես գալ որպես իրավասու մարմիններ, թե՛ ոչ:

Ներքին ազդարարման պարագայում, ըստ Օրենքի 6-րդ հոդվածի, իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը, իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է վարույթի հարուցումը, ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը. իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով, իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է ՀՀ դատախազության, իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով, ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը, հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

Նման լիազորություններ դրված են նաև արտաքին ազդարարման դեպքում իրավասու մարմնի վրա Օրենքի 7-րդ հոդվածով, սակայն այս դեպքում խառնաշփոթ են առաջացնում հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը, ըստ որոնց, եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը Օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից 3-օրյա ժամկետում ծանուցում է ազդարարին: Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազությանը: Այս դեպքում պարզ չեն իրավասու

մարմնի կողմից տրամադրվող պաշտպանության սահմանները և կարգը, քանի որ նաև իրավասու մարմիններին այս առումով տրամադրվում են լայն հայեցողական լիազորություններ:

Հանրությանը ազդարարելու պարագայում, ըստ 9.2-րդ հոդվածի 4-րդ մասի, իրավասու մարմինն ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: Այս դեպքում պարզ չէ, եթե ազդարարումը տեղի է ունեցել լրատվամիջոցներով և առնչվում է, օրինակ, ոլորտի մի քանի պատասխանատու մարմինների, ապա ի՞նչ մարմինն է հանդիսանալու իրավասու մարմին, ի՞նչ պետք է իրականացնի ազդարարման հաշվառումը և հարուցի վարույթը, և արդյո՞ք այդպիսի իրավասու մարմին է այս դեպքում հանդիսանալու նաև ԿԿՀ-ն, թե միայն ոլորտային այն մարմինը կամ այդ մարմնի վերադաս մարմինը, որի աշխատակցի կամ պաշտոնատար անձի վերաբերյալ ազդարարվել է հանրությանը: Այս տեսանկյունից «իրավասու մարմիններ» հասկացությունը ճշգրտման կարիք ունի:

Ազդարարման հարցերով պատասխանատուներ

Հայաստանում ներքին և արտաքին ազդարարումների պարագայում իրավասու մարմիններում պետք է գործեն Օրենքով նախատեսված ազդարարման հարցերով պատասխանատուներ: Ազդարարման հարցերով պատասխանատուն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավասու մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողն է, որը Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշման համաձայն՝ իրականացնում է ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը:

Նրանք պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում են Օրենքի 9.1 հոդվածով սահմանված գործառնությունը՝ վարում են ազդարարման հետ կապված վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ:

Ներկայումս ազդարարման պատասխանատուների գործունեությունը կրում է ձևական բնույթ, և շատ հաճախ կազմակերպության ներսում աշխատողները չգիտեն, թե ով է ազդարարման հարցերով պատասխանատուն իրենց կառույցում: Իսկ ազդարարման պատասխանատուները բավարար վերապատրաստված չեն՝ պատշաճ իրականացնելու իրենց գործառնությունները:

Մարդու իրավունքների պաշտպան

Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 30.2-րդ հոդվածի՝ ՄԻՊ-ն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիտորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

ՄԻՊ-ն իրավասու է հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումներին՝

1. իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիտորինգ և գնահատում,
2. հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով,
3. իրականացնելու օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՄԻՊ-ն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները: Խորհրդատվության շրջանակում ձեռք բերված տեղեկությունները և անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման առանց անձի գրավոր համաձայնության:

ՄԻՊ-ն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա: Հաշվետվությունը և վիճակագրությունն ամփոփվում և հրապարակվում են ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում (www.azdararir.am) և ՄԻՊ-ի պաշտոնական կայքէջում (www.ombuds.am): Հաշվետվությունը և վիճակագրությունը պետք է առնվազն տեղեկատվություն պարունակեն ազդարարների կողմից իրավասու մարմիններ ներկայացվող հաղորդումների (ըստ տեսակների և ձևերի) և ազդարարներին տրամադրվող պաշտպանության վերաբերյալ:

Հիշարժան է, որ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը ՄԻՊ-ի լիազորությունների մասին համապարփակ տեղեկատվություն չի պարունակում՝ սահմանափակվելով 10-րդ հոդվածում զետեղված այն դրույթով, որ ազդարարն ունի ՄԻՊ-ից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք՝ առանց հղում կատարելու «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքին: Ավելի մանրամասն կարգավորում նախատեսված է ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման մեջ, որը լրացվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշմամբ, ըստ որի իրավասու մարմինը պարտավոր է ՄԻՊ-ի հարցումն ստանալու հիման վրա տրամադրել ազդարարների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված տեղեկատվությունը:

Իրավասու մարմինն աջակցում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված՝ ՄԻՊ-ի կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելու և դրանց վերականգնմանը նպաստելու գործառնություններին:⁶² Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի

⁶² ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180199> (դիտված՝ 11.09.2024):

3.1. մասը թույլ է տալիս ՄԻՊ-ին դիմելու իրավասու մարմին սեփական նախաձեռնությամբ կամ ազդարարի դիմումի հիման վրա՝ կիրառելու հատուկ պաշտպանության միջոցներ: Ի լրումն սույն դրույթի, վիճակագրության հետ կապված վերոնշյալ N 1148-Ն որոշումը նշում է, որ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Քանի որ սույն որոշումն ընդունվել է 2023 թվականին, ապա պրակտիկա, թե արդյոք մարմիններն իրականացնում են իրենց վերապահված պարտավորությունը ուղարկելու վիճակագրությունը ՄԻՊ-ին և ինչպես է ՄԻՊ-ն իրականացնում Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով իրեն վերապահված գործառնությունները, դեռևս առկա չէ:

Ընդհանուր առմամբ, ազդարարման ոլորտում իրավասություն ունեցող մարմինների լիազորությունների վերլուծությունից հետևում է, որ մարմինների միջև ազդարարման գործընթացի մասով լիազորությունների հստակ սահմանազատում չկա, ընդհակառակը, առկա է մի քանի մարմինների միջև գործառնությունների համընկում և շփոթմունք հենց այդ մարմինների, առավել ևս պոտենցիալ ազդարարների համար: Այս պայմաններում, ազդարարման հարցերով անկախ և կոմպետենտ մարմնի առկայության տեսանկյունից, ՀՀ օրենսդրությունը չի բավարարում միջազգային ստանդարտները:

Հարկավոր է հնարավորինս արագ լուծել ազդարարման ոլորտի համակարգման լիազորված մարմնի հարցը՝ այդ թվում՝ հստակեցնելով տարբեր կառույցների գործառնությունները և նախատեսելով բավարար ու պատշաճ մարդկային ռեսուրսների ներգրավում և համապատասխան պաշտոնյաների վերապատրաստում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համադրելով ՀՀ ազդարարման համակարգը կարգավորող օրենսդրությունը Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության մշակած ազդարարման օրենսդրության միջազգային սկզբունքներին, ինչպես նաև ազդարարների պաշտպանության ԵՄ դիրեկտիվի հիման վրա⁶³ մշակված ազդարարման օրենսդրությունների գնահատման մեթոդաբանության գործիքի հետ՝ վեր են հանվել հիմնական բացերն ու խնդիրները, որոնց համար սույն բաժնում ներկայացվում են համապատասխան առաջարկներ:

I. Շրջանակը, սահմանումները և պաշտպանության պայմանները

1. Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով (օրինակ՝ մասնավոր կազմակերպություններում ազդարարման օրինակելի կարգ) սահմանել մասնավոր կազմակերպություններում ազդարարման ընդհանուր պահանջները և

⁶³ EU, “Directive 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law” (Whistleblower Protection Directive), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32019L1937> (դիտված՝ 11.09.2024).

ընթացակարգերը աշխատողների ազդարարման իրավունքը երաշխավորելու նպատակով:

2. Ընդլայնել «ազդարարի» սահմանումը և հստակեցնել «այլ հարաբերությունների մեջ» գտնվելու եզրույթը:
3. ՀՀ օրենսդրության մեջ նույնպես հստակ նախատեսել պաշտպանության ենթակա երրորդ անձանց շրջանակը և ընդլայնել փոխկապակցված անձանց սահմանումը:
4. Առաջնորդվել «ուշադրության կենտրոնում պետք է լինի հաղորդագրությունը, այլ ոչ թե սուբհանդակը» սկզբունքով և բարեխիղճ համարել ցանկացած ազդարարում, որն անկախ առավելություն ստանալու կամ այլ շահադիտական նպատակներից, պարունակում է ենթադրյալ ճշգրիտ տեղեկատվություն ազդարարման ենթակա անօրինական գործողության մասին:
5. Հստակ սահմանել պատասխանատվությունից ազատելու գաղտնիք պարունակող տեղեկատվության ազդարարման դեպքում՝ որպես նախապայման սահմանելով բացառությունը սուտ մատնության և կեղծ տեղեկատվության համար: Ավելին, կարևոր է ունենալ հստակ սահմանված ընթացակարգ պետական գաղտնիք պարունակող և ազգային անվտանգությանն առնչվող ազդարարման դեպքերի համար:
6. Օրենսդրության մեջ ներդնել այն սկզբունքը, որ անձը պաշտպանվում է վնասակար գործողությունների սպառնալիքից և վնասակար գործողություններից, ինչպես նաև որևէ պատասխանատվությունից, եթե կամովին հրաժարվում է անօրինական գործողությունների կատարելուց:

II. Ազդարարման ուղիները և ընթացակարգերը

7. Ներքին ազդարարման պարագայում նախատեսել պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր իրավասու մարմնի կողմից ազդարարումը ստանալու, սակայն անտեսելու, հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու ու ՀՀ դատախազություն չներկայացնելու, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելու և ազդարարին լրացուցիչ պարզաբանումներ տալու հնարավորությունից զրկելու պարագայում: Նաև անհրաժեշտ է ունենալ հստակ դրույթ՝ ձեռնպահ մնալու ազդարարելուց այն պաշտոնատար անձանց, որոնք իրենք են ներգրավված ազդարարման առարկա հանդիսացող գործողության մեջ կամ ազդարարի ենթադրությամբ չեն կարող լինել անկողմնակալ:
8. Հետամուտ լինել ազդարարման պատասխանատուների նշանակման գործընթացին և հնարավորինս սեղմ ժամկետներում նրանց համար կազմակերպել վերապատրաստում, ինչն արդեն իսկ սահմանված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով: Նախատեսել ազդարարման պատասխանատուների գործունեության համակարգման և վերահսկման մարմին՝ վերապահելով այս գործառույթը ՀՀ արդարադատության նախարարությանը, ինչն արդեն իսկ նախատեսված է վերապատրաստումների համար:
9. Մասնավոր կազմակերպությունների համար ազդարարման ընդհանուր պահանջների և ընթացակարգերի շրջանակում նախատեսել ներքին ազդարարման մեխանիզմների առկայություն:
10. Ցանկացած պարագայում թե՛ միասնական հարթակի միջոցով, թե՛ իրավապահ մարմիններին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող

հաղորդումները համարել ազդարարում և հաշվի առնել համապատասխան վիճակագրության շրջանակում: Այս առումով վերացնել Օրենքի վերոնշյալ այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

11. Ապահովել թե՛ ներքին, թե՛ արտաքին և թե՛ հանրությանն ազդարարելու տեսակների միաժամանակյա օգտագործման հնարավորությունը:
12. Պարզաբանել «իրավասու մարմին» հասկացությունը Օրենքի 9.2-րդ հոդվածի տեսանկյունից:
13. Նախատեսել իրավական կարգավորում այն դեպքերի համար, երբ ազդարարումն իր մեջ պարունակում է պետական գաղտնիք և կապված է ազգային անվտանգության հարցերի հետ:

III. Պաշտպանության միջոցները

14. Մշակել և իրականացնել հստակ գործողությունների ծրագիր՝ ուղղված ազդարարման միասնական հարթակի՝ azdarar.am, բարելավմանը՝ միաժամանակ, սակայն, առաջարկելով այն օգտագործել ծայրահեղ դեպքերում՝ իրական վտանգների առկայության պարագայում:
15. Ազդարարման անանուն հարթակում նախատեսել դիմումների ավելի պարզ մուտքագրում, ներառել համապարփակ և մանրամասն վիճակագրության և՛ քանակական, և՛ որակական տվյալներ, որը կարող է օգտագործվել այլ շահագրգիռ կողմերի, մասնավորապես ԶԶ-ների կողմից ազդարարման համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը գնահատելու նպատակով:
16. Վերապահել ազդարարման հաղորդումների միասնական հարթակի ցանցային ադմինիստրատորի գործառնության իրականացումը պետական կառույցի:
17. Վերանայել վնասակար գործողությունների սահմանումը՝ Օրենքի 2-րդ հոդվածում ներառելով այլ՝ ոչ աշխատանքային բնույթի, վնասակար գործողությունները, և նշել հաշվեհարդարի սպառնալիքը, որի դեպքում անձը նույնպես ենթակա է պաշտպանության, իսկ 10-րդ հոդվածը համալրել այլ՝ ոչ աշխատանքային բնույթի պաշտպանության միջոցներով՝ ուղղված հաշվեհարդարից պաշտպանելուն:
18. Օրենքով հստակեցնել, թե որ իրավասու մարմինն պետք է դիմի ազդարարը հատուկ պաշտպանություն կիրառելու համար՝ ՀՀ դատախազություն, թե՛ ՀՀ մարդու իրավունքների պաշպանին, ինչպես նաև հստակեցնել հատուկ պաշտպանության միջոցների կիրառման հնարավորություններն ու ընթացակարգը քրեական բնույթ չկրող ազդարարումների պարագայում:
19. Հստակեցնել քրեական վարույթից դուրս ազդարարման դեպքերում հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու դեպքերը:
20. Ներպետական օրենսդրությամբ ունենալ հստակ ընթացակարգեր, որոնք նախատեսում են ցանկացած միջամտության պարագայում կարգապահական, վարչական, քաղաքացիական, ընդհուպ քրեական պատասխանատվություն:
21. Սահմանել հոգեոգնալակական աջակցության հնարավորություն և ձեռնարկել գործուն քայլեր այդ ուղղությամբ, օրինակ՝ հաստիք նախատեսել ՄԻՊ գրասենյակում:

22. Լրացնել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը և նախատեսել հատուկ ընթացակարգ վնասների փոխհատուցման և միջանկյալ պաշտպանական միջոցներ կիրառելու համար:
23. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով անվճար իրավաբանական օգնության շահառուների ցանկում ավելացնել ազդարարներին ու ազդարարների հետ փոխկապակցված անձանց:

IV. Թափանցիկությունը և հաշվետվողականության միջոցները

24. Հետամուտ լինել հանրային մասնակցության խրախուսմանը որոշումների ընդունման վաղ փուլերում, այդ թվում նախատեսել դեմ առ դեմ հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:
25. Կատարելագործել իրավաստեղծ գործընթացում հանրային մասնակցության կարգավորումները և դրան սպասարկող՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft հարթակը: Հանրային քննարկումների իրականացման նկատմամբ սահմանել որոշակի հսկողություն/համակարգում, իսկ իրավակարգավորումների խախտմամբ ընդունված իրավական ակտերի դեպքում՝ իրավական հետևանքներ և պատասխանատվություն:
26. Կատարելագործել ազդարարման վիճակագրական համակարգը՝ ընդլայնելով իրավասու մարմինների կողմից ազդարարմանն առնչվող հավաքագրման ենթակա տվյալների ցանկը (ինչպես քանակական, այնպես էլ որակական), հստակեցնելով ընթացակարգերը, և հետամուտ լինել հավաքագրված/մշակված տվյալների հրապարակմանը իրավասու բոլոր մարմինների կայքերում և դրանց ներկայացմանը ՄԻՊ-ին՝ ապահովելով ՄԻՊ-ի կայքում և ազդարարման միասնական հարթակում համապարփակ տվյալների ներկայացում և վերլուծություն:
27. Դիտարկել որպես խրախուսման մոդել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի կարգավորումները: Առնչվող խրախուսման միջոցներ կարող են նախատեսել իրավասու մարմինները նաև արտաքին ազդարարումներ ստանալու պարագայում: Դիտարկել դրամական պարգևատրումների հնարավորությունը միայն որոշակի շեմից բարձր՝ խոշոր կոռուպցիոն բացահայտումների և վնասի վերականգման դեպքում՝ նախապես գնահատելով դրա հնարավոր հետևանքները մշակութային համատեքստում:
28. Սեղմ ժամկետներում լուծել ազդարարման ոլորտի համակարգման լիազորված մարմնի հարցը, այդ թվում հստակեցնել տարբեր կառույցների գործառույթները և նախատեսելով բավարար ու պատշաճ մարդկային ռեսուրսների ներգրավում և համապատասխան պաշտոնյաների վերապատրաստում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հայաստանի ազդարարման համակարգի համապատասխանությունը միջազգային ստանդարտներին

I. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը
1.	ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՍԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ	ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԱՌՎԱԾ
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)
	Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Պարզաբանում Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա)	սահմանում է «խախտումները» որպես գործողություններ կամ անգործություն, որոնք անօրինական են կամ չարաշահող (այսինքն՝ «շրջանցում են օրենքի կարգավորման առարկան կամ նպատակը»),	5.1 <i>Այգային օրենսդրությունը պետք է ներառի ինչպես անօրինական, այնպես էլ չարաշահող վարքագիծը</i> <i>Դիրեկտիվին համապատասխանելու համար:</i>
բ)	ընդգրկում է տեղեկություն, ներառյալ ողջամիտ կասկածները, փաստացի կամ հնարավոր խախտումների մասին, որոնք տեղի են ունեցել կամ շատ հավանական է, որ տեղի ունենան աշխատանքին վերաբերող համատեքստում,	5.2 <i>Ներառում է անցյալ, ընթացիկ և «ապագա» խախտումների և խախտումների վերաբերյալ «ողջամիտ կասկածների» մասին տեղեկությունները (ուժեղ ապացույցներ/հավաստիություն և չեն պահանջում)</i>
գ)	ընդգրկում է նման խախտումները թաքցնելու փորձերի մասին տեղեկություն,	5.2

դ) ընդգրկում է ԵՄ օրենսդրության խախտումները, որոնք մտնում են Դիրեկտիվի Հավելվածում թվարկված ԵՄ ակտերի շրջանակում, որոնք վերաբերում են հետևյալ ոլորտներին՝ • պետական գնումներ, • ֆինանսական ծառայություններ, ապրանքներ և շուկաներ, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում, • արտադրանքի անվտանգություն և համապատասխանություն, • տրանսպորտի անվտանգություն • շրջակա միջավայրի պաշտպանություն, • ճառագայթային պաշտպանություն և միջուկային անվտանգություն, • սննդի և կերերի անվտանգություն, կենդանիների առողջություն և բարեկեցություն, • հանրային առողջություն, • սպառողների պաշտպանություն, • գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանություն, ցանցային և տեղեկատվական համակարգերի անվտանգություն:	2.1 (ա)	<i>Դիրեկտիվը չի ներառում թվարկված ոլորտներն ամբողջությամբ: Այն ընդգրկում է այդ ոլորտներում ԵՄ ակտերի շրջանակը, որոնք թվարկված են վերջինիս Հավելվածում:</i>	
ե) ընդգրկում է ԵՄ օրենսդրության խախտումները, որոնք ազդում են վերջինիս ֆինանսական շահերի վրա,	2.1 (բ)		

գ) ընդգրկում է ներքին շուկայի հետ կապված ԵՄ օրենսդրության խախտումները, ներառյալ ԵՄ մրցակցության և պետական օգնության կանոնների խախտումները, ինչպես նաև կորպորատիվ հարկի կանոնները:	2.1 (գ)		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ե) ընդլայնել դրա կիրառման շրջանակը չափորոշիչներով նախատեսվածից դուրս (դ) - (գ),	2.2	Սա լավագույն պրակտիկան է և խորհուրդ է տրվում: Որպես առաջնահերթություն պետք է հրախուսվի ավելի լայն և ավելի քիչ մասնատված շրջանակ, քան նկարագրված է վերը նշված (դ)-(ւ) չափորոշիչներում (լավագույն պրակտիկան «հորիզոնական» մոտեցումն է, ինչպես նկարագրված է ստորև չափորոշիչ Բ(վ)-ում):	
ը) իր շրջանակից բացառել գնումների կանոնների խախտումների մասին հաղորդումները, որոնք վերաբերում են պաշտպանության կամ անվտանգության ոլորտներին, բացառությամբ եթե դրանք չեն սահմանվում ԵՄ համապատասխան ակտերով,	3.2	Սա լավագույն պրակտիկան չէ, հետևաբար, չարժեքն ունի, եթե ձախողվում է համապատասխանության ապահովումը:	

թ) իր շրջանակից բացառել տեղեկությունը, որն ընդգրկված է հետևյալում՝ • գաղտնի տեղեկատվության պաշտպանություն, • իրավական և բժշկական մասնագիտական արտոնությունների պաշտպանություն, • դատական քննարկումների գաղտնիություն, • քրեական դատավարության կանոններ:	3.3	<i>Սա լավագույն պրակտիկան չէ, հետևաբար, չարժեքն ունի, եթե ծախսողվում է համապատասխանության ապահովումը:</i>	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) «խախտումները» սահմանվում են որպես գործողություններ կամ անգործություն, որոնք անօրինական են կամ չարաշահող (այսինքն՝ վերը նշված չափանիշը (ա)), կամ որոնք սպառնում կամ վնասում են հանրային շահին,	<i>Օրենքի չարաշահումն այն գործողություններն ու անգործությունն են, որոնք պաշտոնական տեսանկյունից անօրինական չեն թվում, բայց խախտում են օրենքի կարգավորման առարկան կամ նպատակը:</i> <i>Գործողությունների և անգործության բոլոր երեք կատեգորիաները պետք է ընդգրկվեն չափանիշին համապատասխանելու համար (ապօրինի, չարաշահող և սպառնացող/հանրային շահի</i>	Այո: Օրենքի 2-րդ հոդված: ազդարարում՝ ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին:	

	<i>վնասող):</i> <i>Եթե ազգային օրենսդրությունը նախատեսում է խախտումների տեսակների ցանկ, որոնք կհամապատասխանեն սահմանմանը, այն պետք է լինի ցուցանող/ոչ-սպառիչ:</i>	
ii) ընդգրկում է առնվազն հետևյալը՝ • Կոռուպցիա, • քրեական հանցագործություններ, • իրավական պարտավորության խախտումներ, • արդարադատության սխալներ, • հանրային առողջությանը, անվտանգությանը կամ շրջակա միջավայրին ուղղված հատուկ սպառնալիքներ, • մարդու իրավունքների խախտումներ, • լիազորությունների չարաշահում, • պետական միջոցների, գույքի կամ ռեսուրսների չարտոնված օգտագործում, • կոպիտ վատնում կամ սխալ կառավարում • շահերի բախում, • պետական մարմինների/պաշտոնյաների և կարգավորվող կորպորացիաների կողմից կատարված ֆինանսական կեղծիքների բացահայտումներ:		Ոչ: Օրենսդրությունը համապարփակ չի սահմանում ազդարարման բոլոր ոլորտները: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը ազդարարում համարում է ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդումը սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին: Սույն սահմանումից չի բխում, որ ազդարարումը ընդգրկում է սույն չափանիշով նախատեսված ոլորտները:

iii) ընդգրկում է հայտնաբերված կամ հնարավոր խախտումների մասին տեղեկությունները, որոնք կատարվել են, կատարվում են կամ կարող են կատարվել,	<i>Ներառում է անցյալ, ընթացիկ և «ապագա» խախտումների վերաբերյալ տեղեկությունները (ուժեղ ապացույցներ/ հավաստիություն չեն պահանջվում):</i>	Այո: Ընդգրկում է նաև անօրինական գործողության սպառնալիքը:
iv) ընդգրկում է խախտումները թաքցնելու և նման խախտումները թաքցնելու փորձերի մասին տեղեկությունները,		Ոչ: Ազդարարման սահմանումը նման կարգավորում չի նախատեսում, սակայն հանցափորձն ու հանցագործությունը պարտակելը նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքով, այլ է հարցը, երբ գործ ունենք քրեական բնույթ չկրող ազդարարման հետ:
v) ընդունում է «հորիզոնական» կամ միջուլորտային մոտեցում (այսինքն՝ չի կիրառվում միայն կոնկրետ ոլորտների կամ տիրույթների նկատմամբ),		Մասնակի: Ազդարարման սահմանումը տարածում է ազդարարման գործողությունը թե՛ հանրային, թե՛ մասնավոր կազմակերպությունների վրա, ու նաև նշում է, որ ցանկացած հանրային շահերի հետ կապված վնասներին է առնչվում՝ չնախատեսելով կարգավորման կոնկրետ ոլորտներ, սակայն հստակ կարգավորում չկա, թե արդյոք մասնավոր կազմակերպությունների դեպքում ինչին դա կարող է առնչվել, արդյոք հանդիսանում է միջուլորտային կարգավորում, թե նույնիսկ մասնավոր կազմակերպությունների պարագայում այն ծածկում է միայն այն դեպքերը, որոնք առնչվում են հանրային շահին վնաս պատճառելուն:

vi) չի բացառում ազդարարման ենթակա տեղեկության որոշ կատեգորիաներ (օրինակ՝ ազգային անվտանգության հարցեր, պետական կամ ռազմական գաղտնիքներ կամ գաղտնի տեղեկատվություն):	<i>Օրենքը կարող է սահմանել հատուկ ընթացակարգեր և երաշխիքներ նման հարցերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման համար՝ անվտանգության ոլորտից, ինստիտուցիոնալապես և գործառնապես անկախ մարմնի կամ համապատասխան անվտանգության թույլտվություն ունեցող մարմինների միջոցով:</i>	ՈՅ: Օրենքը հատուկ ընթացակարգեր չի նախատեսում ազգային անվտանգության, պետական և ռազմական գաղտնիքներ պարունակող տեղեկատվության հաղորդման հետ:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
vii) սահմանափակում է հատուկ սխեմաների/կանոնների օգտագործումը (օրինակ՝ ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվության համար)՝ բացահայտվող տեղեկատվության նեղ և հստակ կատեգորիաներ օգտագործելով և առանց հաշվի առնելով բացահայտումը կատարող անձին:	<i>Սա նշանակում է, որ, օրինակ, պինվորական սպան, ով մտահոգություն է հայտնում գրասենյակային պարագաների գնումների անկանոնության վերաբերյալ, չպետք է ենթարկվի ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվության հատուկ ազդարարման սխեմայի, այլ պետք է կարողանալ օգտագործել «ընդհանուր» սխեման:</i>	ՈՅ:

Համապատասխան աղբյուրներ՝
ԹԻ սկզբունքներ 1, 3, 19 և 24: ԹԻ Լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 7-10, 42-45 և 66: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 4-5:

Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...

viii)) համապատասխանում է վերը նշված (ii) – (iii) չափանիշներին և

ix) չի ընդունում լիովին հորիզոնական մոտեցում (այսինքն՝ չի համապատասխանում վերը նշված (v) չափանիշին), սակայն ունի նշանակալի և համահունչ շրջանակ՝ ընդգրկելով բազմաթիվ ոլորտներ/տիրույթներ/բնագավառներ:

Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...

x) չի համապատասխանում վերը նշված չափանիշներից առնվազն (viii) – (ix):

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը		
2.	ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿ: ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ	ԱՐԴՅՈ՞Ք ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ, ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ Դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ընդգրկում է ազդարարներին (հաղորդում տվողի) ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:		4.1		

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈԻԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) ընդգրկում է անձանց, ովքեր աշխատում են հանրային հատվածում,			Այո: Համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի՝ ազդարարում է ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի ռեպի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին:
ii) ընդգրկում է անձանց, ովքեր աշխատում են մասնավոր հատվածում:			Մասնակի: Թեև Օրենքի 2-րդ հոդվածը փոփոխության ենթարկվեց՝ ներառելով մասնավոր կազմակերպությունները, սակայն բացի ազդարարման սահմանումից մասնավոր հատվածի ազդարարման օրինակելի վարույթը, ընթացակարգերը սահմանված չեն ո՛չ օրենքներով, ո՛չ ենթաօրենսդրական ակտերով:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 1, 2, 4 և 24: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 10-11, 66:			
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...			
iii) համապատասխանում է վերը նշված (i) և (ii) չափանիշներին, բայց զգալի բացառություններով հանրային հատվածում, ինչպիսիք են՝ ոստիկանները և զինվորականները,			

iv) համապատասխանում է վերը նշված (i) և (ii) չափանիշներին, բայց միայն մասնավոր հատվածի որոշ և ոչ բոլոր ոլորտներում (օրինակ՝ ֆինանսական/բանկային հատվածը):

Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...

v) ընդգրկում է միայն հանրային հատվածում աշխատող անձանց կամ միայն մասնավոր հատվածում աշխատող անձանց, բայց՝ ոչ երկուսը,

vi) ընդգրկում է հանրային հատվածում աշխատող անձանց և մասնավոր հատվածում աշխատող անձանց, բայց երկու դեպքում էլ էական բացառություններով/սահմանափակմամբ (այսինքն՝ չի համապատասխանում վերը նշված (iii) կամ (iv) չափանիշներին):

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
3 ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿ: ԱԶԴԱՐԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ		ՈՐ ԽՄԲԻ ԱՆՎԱՏՆԵՐՆ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) սահմանում է «ազդարարին» որպես ֆիզիկական անձ, ով հայտնում կամ հրապարակայնորեն բացահայտում է իր աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում ձեռք բերված խախտումների մասին տեղեկություն (անկախ այդ գործունեության բնույթից),	5.7		
բ) վերաբերում է առնվազն հետևյալ խմբի անձանց՝ աշխատողներ (լրիվ, կես դրույքով, ժամկետային, ժամանակավոր), ներառյալ քաղաքացիական ծառայողները,	4.1 պարբ. 38	Աշխատողի մասին ԵՄ դիրեկտիվի սահմանումը բավականին լայն է (տե՛ս պարբերություն 38):	

• ինքնագրադված անձինք, • վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինն պատկանող բաժնետերերը և անձինք, • կամավորներ և վճարովի կամ չվարձատրվող վերապատրաստվողներ, • կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների հսկողության և ղեկավարության ներքո աշխատող անձինք:			
գ) վերաբերում է ազդարարներին, ովքեր տեղեկատվություն են ձեռք բերել անցյալ աշխատանքային գործունեության համատեքստում («աշխատանքի վրա հիմնված հարաբերություններում, որոնք դրանից հետո ավարտվել են»),	4.2 5.9		
դ) վերաբերում է ազդարարներին, ովքեր խախտումների մասին տեղեկություններ են ձեռք բերել հավաքագրման գործընթացի կամ այլ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում:	4.3		

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ	Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) սահմանում է «ազդարարին» որպես ֆիզիկական անձ, որը հայտնում կամ հրապարակայնորեն բացահայտում է իր աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում ձեռք բերված խախտումների մասին տեղեկություն (այսինքն՝ վերը նշված չափանիշը (ա),	<i>«Աշխատանքի հետ կապված գործունեությունը» պետք է լայնորեն մեկնաբանվի՝ ներառելով, օրինակ, կազմակերպության կորպորատիվ հավաքույթները:</i> <i>Եթե ազգային օրենսդրությունը նախատեսում է անհատների խմբերի ցանկ, որոնք կարող են ներառվել սահմանման մեջ, այն պետք է լինի ցուցիչ/ոչ սպառիչ:</i>	Այո: Համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի՝ ազդարարը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ:

ii) վերաբերում է առնվազն հետևյալ խմբի անձանց (այսինքն՝ վերը նշված չափանիշը (բ))՝ • աշխատողներ (լրիվ, կես դրույքով, ժամկետային, ժամանակավոր), ներառյալ քաղաքացիական ծառայողները, • ինքնազբաղված անձինք, • վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնին պատկանող բաժնետերերը և անձինք, • կամավորներ և վճարովի կամ չվարձատրվող վերապատրաստվողներ, • կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների հսկողության և ղեկավարության ներքո աշխատող անձինք:		Այո: Սակայն սահմանումը լիարժեք չի պարզաբանում, թե արդյոք, օրինակ, փորձնակները կամ աշխատանքի ընդունվելիս պաշտոնի թեկնածուները նույնպես ընդգրկվում են ազդարարի սահմանման մեջ, թե՛ ոչ:
iii) ընդգրկում է աշխատանքի հետ կապված նախկին գործունեությունը (այսինքն՝ վերը նշված չափանիշը (գ)),		Այո: Ըստ Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված ազդարարի սահմանման՝ ազդարար է համարվում այն անձը, որը նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ <i>նա զտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ:</i>

iv) ընդգրկում է այն անձանց, ովքեր տեղեկություններ են ձեռք բերել հավաքագրման գործընթացի կամ այլ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում (այսինքն՝ վերը նշված չափանիշը (դ)),		Այո: Օրենքի 2-րդ հոդվածով ազդարարի սահմանման մեջ մտնում է նաև այն անձը, որին դիմել են ծառայությունների մատուցման նպատակով:
v) տարածում է պաշտպանության միջոցները այն անձանց նկատմամբ, ովքեր ենթադրվում կամ կասկածվում են, որ ազդարար են, նույնիսկ սխալմամբ, և ովքեր ենթարկվել են հաշվեհարդարի,		Այո: Օրենքի 2-րդ հոդվածի սահմանմամբ ազդարար է համարվում նաև այն անձը, ով սխալմամբ է ընկալվել որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ:
vi) չի բացառում այն աշխատողների խմբին, ինչպիսիք են ոստիկանները և զինված ուժերի կամ հետախուզական ծառայությունների անդամները:		Այո: Օրենքում հատուկ բացառություն գոյություն չունի:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
vii) սահմանում է «ազդարարին» որպես ֆիզիկական անձ, ով հայտնում կամ հրապարակայնորեն բացահայտում է իր աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում ձեռք բերված խախտումների մասին, առանց որևէ պահանջի, որ անհատը պետք է ձեռք բերած լինի հաղորդված/բացահայտված տեղեկատվությունը իր աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում,		Այո: Ըստ Օրենքի՝ ազդարար է համարվում այն անձը, որը տեղեկություններ է հայտնում կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար:

viii) տարածում է պաշտպանության միջոցները այն անձանց վրա, ովքեր պատրաստվում են կամ մտադիր են ազդարարման մասին հաղորդում կամ բացահայտում անել,		Ոչ՝ » Օրենքը նման կարգավորում չի նախատեսում:
ix) տարածում է պաշտպանության միջոցները այն անձանց նկատմամբ, ովքեր հրաժարվում են մասնակցել խախտումներին (առանց դրանց պարտադիր հաղորդման):		Ոչ՝ Հստակ կարգավորում ազդարարման բոլոր դեպքերի համար գոյություն չունի: Օրենքում չկա դրույթ, որ անձը ազատվում է պատասխանատվությունից, եթե կամովին հրաժարվում է անօրինական գործողություններ կատարելուց: Քրեական օրենսգրքի 80-րդ ողվածը նախատեսում է պատասխանատվությունից ազատելը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում, սակայն դա չի տարածվում քրեական բնույթ չկրող այլ ազդարարումների վրա:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 4 և 11: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 11-14 և 26-27: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 5-6:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
x) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) – (iii) չափանիշներին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
xi) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) – (iii) չափանիշներին:		

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը		
4.	ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐՐՈՐԴ ԿՈՐՄԵՐԸ	ԱՐՅՈՐԶ ՉԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՐՄԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն տարածում է պաշտպանությունը...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) օժանդակողներին (ֆիզիկական անձինք, ովքեր օգնում են ազդարարին ազդարարելու գործում աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում, և որոնց օգնությունը պետք է գաղտնի լինի),		4.4 (ա) 5.8		
բ) երրորդ անձանց, որոնք կապված են ազդարարների հետ և ովքեր կարող են հաշվեհարդարի ենթարկվել իրենց աշխատանքային հարաբերություններում, ինչպիսիք են գործընկերները և հարազատները,		4.4 (բ)		
գ) իրավաբանական անձանց, որոնք պատկանում են ազդարարներին, աշխատում են կամ այլ կերպ կապված են նրանց հետ:		4.4 (գ)		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության) ընդլայնել պաշտպանությունը...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
դ) ազդարարներին խորհրդատվություն տրամադրող ԶՀԿ-ներին, որոնք պարտավոր են պահպանել ստացված տեղեկատվության գաղտնիությունը:		պարբ. 89	Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:	

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		
Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
  		
Օրենսդրությունը կարող է ՈԻԺԵՂ համարվել, եթե այն ներառում է	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) իրավաբանական անձանց, որոնք պատկանում են ազդարարներին, աշխատում են կամ այլ կերպ կապված են նրանց հետ (այսինքն՝ վերը նշված չափանիշները (գ)),		Այո: Օրենքի 10-րդ հոդվածը (Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության իրավունքը) սահմանում է՝ 1. Ազդարարը, սույն օրենքին համապատասխան, ունի պաշտպանության իրավունք: Ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությանմբ կիրառելի է դրա նկատմամբ:
ii) երրորդ անձանց, որոնք կապված են ազդարարների հետ և ովքեր կարող են հաշվեհարդարի ենթարկվել, ինչպիսիք են գործընկերները և հարազատները,	<i>Պաշտպանությունը չպետք է սահմանափակվի «աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստի» հաշվեհարդարով, այլ պետք է ներառի հաշվեհարդարի ցանկացած ձև, ներառյալ աշխատանքի հետ կապված գործունեությունից դուրս համատեքստը (այսինքն՝ սա ավելի լայն է, քան վերը նշված (բ) չափանիշը):</i>	Ոչ: Պաշտպանությունը տարածվում է միայն փոխկապակցված անձանց վրա, որոնք ըստ Օրենքի հանդիսանում են ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները, այն էլ եթե ապացուցեն, որ կրում են ազդարարման հետ կապված վնասակար գործողությունների հետևանքները:
iii) ֆիզիկական անձանց, ովքեր օգնում են կամ փորձում են օգնել ազդարարին,		Ոչ: Օրենսդրությունը չի պաշտպանում այն անձանց, ովքեր օգնում են կամ փորձում են օգնել ազդարարին:

iv) իրավաբանական անձանց, ներառյալ ԶՀԿ-ները, որոնք օգնում են կամ փորձում են օգնել ազդարարին:		ՈՆ: Պաշտպանության ենթակա է միայն ազդարար իրավաբանական անձը, ընդ որում ըստ Օրենքի 10-րդ հոդվածի՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությանմբ կիրառելի է դրա նկատմամբ:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
v) անհատներին, ովքեր տրամադրում են օժանդակ տեղեկատվություն (որ նրանք ողջամիտ հիմքեր ունեն հավատալու, որ ճիշտ է) գեկույցի կամ բացահայտման վերաբերյալ:		ՈՆ: Օժանդակ տեղեկատվություն հաղորդողների մասով ՀՀ օրենսդրությունը կարգավորում չի նախատեսում:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 4: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 11-14: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 5-6:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
vi) համապատասխանում է վերը նշված (i) – (iv) չորս չափանիշներից երկուսին կամ երեքին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
vii) համապատասխանում է վերը նշված (i) – (iv) չափանիշներից մեկին կամ ոչ մեկին:		

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՇԵՄԸ ՇԵՄԸ			
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) սահմանում է, որ ազդարարները որակավորվում են պաշտպանության համար, եթե բավարարվում են հետևյալ 2 պայմանները՝ • Նրանք ողջամիտ հիմքեր ունենին կարծելու, որ հայտնաբերված խախտումների մասին տեղեկատվությունը հրապարակման պահին ճշմարիտ է, • Նրանք հայտնել են ներքին ազդարարման, արտաքին ազդարարման, հրապարակային բացահայտման համար սահմանված պայմաններին համապատասխան:	6.1, պարբ. 32	Եթե օրենսդրությունը պահանջում է լրացուցիչ պայմանների պահպանում, ապա այն չի համապատասխանում Դիրեկտիվին: Մասնավորապես հաղորդագրություններ կայացնելու դրդապատճառները չպետք է դեր խաղան՝ որոշելու համար, թե արդյոք հաղորդագրություն տրամադրող անձը պետք է պաշտպանություն ստանա:	
բ) սահմանում է, որ այն անձինք, ովքեր հայտնել են կամ հրապարակայնորեն բացահայտել են խախտումների մասին տեղեկությունը անանուն կերպով և հետագայում բացահայտվել են և ենթարկվել հաշվեհարդարի, որակվում են պաշտպանության համար:	6.3	Սա անկախ նրանից, թե Օրենքը պահանջում է անանուն հաղորդումների ընդունում և հետևում, թե՛ ոչ:	

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ	Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
i) որտեղ նրանք ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու, որ արձանագրված խախտումների մասին տեղեկությունները ճշմարիտ են հրապարակման պահին,	<i>Ազդարարները պետք է պաշտպանված լինեն անկախ նրանից, թե արդյոք հետաքննությունը հայտնաբերում է ապօրինության ապացույց:</i>	Ոչ: Օրենքի 13-րդ հոդված. Ազդարարի բարեխիղճ գործելու պարտականությունը . Ազդարարը գործում է բարեխիղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը:
ii) նույնիսկ այն դեպքում, երբ նրանք անանուն կերպով են հայտնել կամ հրապարակել տեղեկատվություն (այսինքն՝ վերը նշված չափանիշը (բ)),		Ոչ: Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի՝ ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը անանուն հաղորդում ներկայացնելիս. 1. Անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ինչպես իրավասու մարմնին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտում է իր անձնական տվյալները: 2. Իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկելու անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:

		ուղղությամբ: Նաև Օրենքի Հոդված 9-ը նախատեսում է, որ անանուն ազդարարման պարագայում արտաքին ազդարարման դրույթները, այդ թվում պաշտպանությունը, տարածվում են անանուն հաղորդումների վրա այնքանով, որքանով դրանք իրենց էությանը (mutatis mutandis) կիրառելի են:
iii) առանց հաշվի առնելու ազդարարի ազդարարման դրդապատճառները (այն չպետք է դեր խաղա որոշելու համար, թե արդյոք նրանք պետք է պաշտպանություն ստանան),		Ոչ: Ըստ Օրենքի 13-րդ հոդվածի՝ ազդարարը գործում է անբարեխղճորեն, եթե՝ 1) բացակայում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բարեխղճորեն գործելու հատկանիշները, կամ 2) ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, կամ 3) իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն կամ 4) այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:
iv) չսահմանափակելով նման պաշտպանությունը «հանրային շահերից ելնելով» արված հրապարակումներով:		Ոչ: Օրենքը հստակ շեշտադրում է հանրային շահերի հետ կապը: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ 1. ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի

		վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
v) սահմանում է, որ պաշտպանությունը տարածվում է ազդարարների վրա, ովքեր հայտնում կամ բացահայտում են ոչ ճշգրիտ տեղեկատվություն՝ ոչ դիտավորյալ սխալվելով:	<i>Այն հաճախ համարվում է ենթադրյալ, սակայն նախընտրելի է հստակ դրույթը, որպեսզի նվազագույնի հասցվի սխալ մեկնաբանման ռիսկը:</i>	Ոչ: Հստակ չէ, քանի որ ազդարարը, ըստ Օրենքի, պետք է իր հնարավորությունների սահմաններում անպայման ստուգի տեղեկատվությունը մինչև ազդարարելը:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 5: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 9-10 և 14-16:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ , եթե այն...		
vi) համապատասխանում է վերը նշված (i) – (iv) չափանիշներին, սակայն ներառում է լրացուցիչ պայմաններ՝ պաշտպանություն ապահովելու համար:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ , եթե այն...		
vii) չի համապատասխանում վերը նշված (i) – (iv) չափանիշներին		

II. ԱՁԴԱՐԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը		
6	ՀԱՐՈՐԴՄԱՆ ԲԱԶՄԱԹԻՎ ՈՒՂԻՆԵՐ	ՈՐՔԱՆՈ՞Վ Ե ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ՀԱՐՈՐԴՄԱՆ ԲԱԶՄԱԹԻՎ (ՆԵՐՔԻՆ, ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՁԴԱՐԱՐՄԱՆ) ՈՒՂԻՆԵՐ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա)	Նախատեսում է ազդարարումը աշխատատեղում (ներքին ազդարարում),	8		
բ)	Նախատեսում է ազդարարումը նշանակված իրավասու մարմիններին (արտաքին ազդարարում),	11		
գ)	Նախատեսում է ազդարարում հանրությանը,	15		
դ)	Թույլ է տալիս ազդարարներին ուղղակիորեն արտաքինից զեկուցել նշանակված իրավասու մարմիններին (այսինքն՝ չի սահմանում որևէ լրացուցիչ պայմաններ արտաքին ազդարարման համար),	10		
ե)	Խրախուսում է առաջին հերթին հաղորդել ներքին ազդարարման ուղիներով, եթե խախտումը կարող է արդյունավետորեն լուծվել ներքին կարգով, և երբ ազդարարը գտնում է, որ հաշվեհարդարի վտանգ չկա:	7.2		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		(Լավագույն պրակտիկա)		
				

Օրենսդրությունը կարող է Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) Նախատեսում է ազդարարումը աշխատատեղում (ներքին ազդարարում) (այսինքն՝ վերը նշված չափանիշը (ա)),		Այո: Օրենքի 4-րդ հոդված՝ Ազդարարման տեսակները, 6-րդ հոդված՝ Ներքին ազդարարումը:
ii) Նախատեսում է ազդարարումը նշանակված իրավասու մարմիններին (արտաքին ազդարարում) (այսինքն՝ վերը նշված չափանիշը (բ)),		Այո: Օրենքի 4-րդ հոդված՝ Ազդարարման տեսակները, 7-րդ հոդված՝ Արտաքին ազդարարումը:
iii) Նախատեսում է ազդարարում հանրությանը (այսինքն՝ վերը նշված չափանիշը (գ)),		Այո: Օրենքի 9.2-րդ հոդված՝ Ազդարարում հանրությանը:
iv) թույլ է տալիս ազդարարներին ուղղակիորեն արտաքինից զեկուցել նշանակված իրավասու մարմիններին (այսինքն՝ չի սահմանում որևէ լրացուցիչ պայմաններ արտաքին ազդարարման համար) (այսինքն՝ վերը նշված չափանիշը (դ)):		Այո: Օրենքի 7-րդ Հոդվածի համաձայն՝ Արտաքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով: Օրենքը որևէ սահմանափակում ու պայման չի նախատեսում:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 15, 16 և 17: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 31 և 37-38: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 2:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
v) համապատասխանում է վերը նշված (i) – (iii) չափանիշներին, ԲԱՅՑ		
vi) պահանջում է, որ առաջին հերթին ազդարարները հաղորդեն ներքին ազդարարման ուղիներով՝ նախքան արտաքին ուղիներ օգտագործելը կամ հանրային ազդարարում կատարելը, ԿԱՍ		
vii) «խրախուսում է» ազդարարել ներքին ուղիներով նախ այնպես, որ սահմանափակի արտաքին ազդարարման հասանելիությունը և/կամ հետագայում սահմանափակի հանրային ազդարարումները:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
viii) չի համապատասխանում վերը նշված (i) – (iii) բոլոր երեք չափանիշներին:		

N		Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
7.		ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՑԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		ՈՐՔԱՆՈՎ Ե ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին				Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)	
ա) պահանջում է բոլոր պետական կառույցներից ստեղծել ուղիներ և ընթացակարգեր ներքին ազդարարման և հետաքննության համար (ներքին ազդարարման մեխանիզմներ),		8.1 8.9	10,000-ից պակաս բնակիչ ունեցող կամ 50-ից պակաս աշխատող ունեցող համայնքները կամ 50-ից պակաս աշխատող ունեցող պետական հատվածի կառույցները կարող են ապատվել: - Քաղաքապետարաններին կարող է թույլատրվել ներքին ազդարարման ուղիների համօգտագործումը:		

բ) պահանջում է 50 և ավելի աշխատող ունեցող մասնավոր կազմակերպություններից ստեղծել ազդարարման ներքին մեխանիզմներ,	8.3 8.4 8.6	• Այս շեմը չի տարածվում մասնավոր հատվածի այն կազմակերպությունների վրա, որոնք Միության այլ ակտերի համաձայն պարտավոր են ստեղծել ներքին ազդարարման ուղիներ (նշված են Դիրեկտիվի Հավելվածի I.Բ և II մասերում): • 50-ից 249 աշխատող ունեցող մասնավոր հատվածի կազմակերպությունները կարող են կիսել ռեսուրսները:	
գ) պահանջում է վերոնշյալ (ա) և (բ) չափանիշներում նշված պետական և մասնավոր կառույցներից՝ հետևել ստացված ներքին ազդարարումներին (այսինքն՝ գնահատել ազդարարման մեջ ներկայացված մեղադրանքների ճշգրտությունը և, անհրաժեշտության դեպքում, անդրադառնալ արձանագրված խախտմանը):	8.1 9.1 (դ) 5.12		

Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության) ընդլայնել պաշտպանությունը...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
դ) պահանջել, որ սոցիալական գործընկերների հետ խորհրդակցելուց և համաձայնեցվելուց հետո ստեղծվեն ներքին ազդարարման մեխանիզմներ,	8.1	<i>Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:</i>	
ե) պահանջել (որոշ) մասնավոր կազմակերպություններից, որոնք ունեն 50-ից պակաս աշխատողներ, ստեղծել ներքին ազդարարման մեխանիզմներ,	8.7, պարբ. 48	<i>Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:</i>	
զ) թույլատրել ներքին ազդարարման ուղիների ներքին կամ արտաքին շահագործումը երրորդ կողմի կողմից,	8.5		
է) ապահովել, որ ներքին ազդարարման մեխանիզմները հնարավորություն տան ոչ միայն կազմակերպությունների աշխատողներին հաղորդել խախտումների մասին տեղեկատվություն, այլ նաև այլ անձանց, ովքեր կապի մեջ են կազմակերպության հետ իրենց աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում (նրանք, որոնք նշված են հոդված 4.1(բ) կետում. 4.1(գ), 4.1(դ) և 4.2, այսինքն՝ ինքնազբաղվածները, բաժնետերերը, կամավորները, վերապատրաստվողները, կապալառուների ղեկավարությամբ աշխատողները և այլն):	8.2	<i>Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:</i>	

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) պահանջում է բոլոր պետական մարմիններից, տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, առանց բացառության և անկախ չափից, ստեղծել ազդարարման ներքին մեխանիզմներ,		<i>Որոշ պետական կառույցներ կարող է թույլատրվել համոզագործել ներքին ազդարարման ուղիները:</i>	Մասնակի: ՀՀ կառավարության 2023 թ. հուլիսի 6-ի 1148-Ն որոշմամբ սահմանվել է, որ պետական կառավարման համակարգի մարմիններին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է ապահովել պետական կառավարման համակարգի մարմիններում և նրանց ենթակա մարմիններում պատասխանատու անձանց նշանակումը և սույն որոշմամբ սահմանված կարգով սույն որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը: Առաջարկել անկախ և ինքնավար մարմինների ղեկավարներին՝ տվյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել անկախ և ինքնավար մարմիններում պատասխանատու անձանց նշանակումը և որոշմամբ սահմանված կարգով որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը: Առաջարկել համայնքների ղեկավարներին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել համայնքներում պատասխանատու անձանց նշանակումը և տվյալ որոշմամբ սահմանված կարգով որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը: Մինչդեռ, սույն կարգավորումը թերի է իրագործվում, և օրենսդրությամբ հստակ չի սահմանվում պատասխանատուների լիազորությունները և ազդարարման հետ վարվելու ընթացակարգերը:

ii)	պահանջում է 50 և ավելի աշխատող ունեցող բոլոր մասնավոր կազմակերպություններից ստեղծել ներքին ազդարարման մեխանիզմներ (այսինքն՝ վերը նշված չափանիշը (բ)),		Ոչ: Մասնավոր կազմակերպությունների մասով որևէ կարգավորում գոյություն չունի:
iii)	պահանջում է վերոնշյալ (i) և (ii) չափորոշիչներում նշված պետական և մասնավոր կառույցներից, հետևել ստացված ներքին ազդարարումներին (այսինքն՝ գնահատել ազդարարման մեջ ներկայացված մեղադրանքների ճշգրտությունը և, անհրաժեշտության դեպքում, անդրադառնալ արձանագրված խախտմանը),		Մասնակի: Մասնավոր կազմակերպությունների մասով որևէ ցուցում/որոշում չկա, իսկ պետական մարմինների մասով 6-րդ հոդվածով սահմանվում են որոշակի քայլեր:
iv)	պահանջում է բոլոր պետական և մասնավոր կառույցներից պաշտպանել ազդարարներին և պաշտպանվող երրորդ անձանց (այսինքն՝ պահանջում է գործատուից փորձել կանխել ազդարարին վնաս հասցնելը),		Մասնակի: Միայն ազդարարների մասով, իսկ երրորդ անձանց մասով նման կարգավորում գոյություն չունի:
v)	ապահովում է նվազագույն չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն ներքին ազդարարման մեխանիզմներով,	<i>Օրենքը կարող է հղել պարտադիր կարգավորմանը, եթե ազգային համատեքստում ավելի նպատակահարմար է կանոնակարգերում ունենալ նման նվազագույն չափորոշիչներ:</i>	Մասնակի: Որպես այդպիսին կարելի է դիտարկել 6-րդ հոդվածով նախատեսված ներքին ազդարարման վարույթը:
vi)	պահանջում է, որ ներքին ազդարարման մեխանիզմներ ստեղծվեն խորհրդակցություններից և համապատասխան շահագրգիռ կողմերի, ներառյալ սոցիալական գործընկերների հետ համաձայնեցված լինելուց հետո,		Ոչ: Կարգավորում գոյություն չունի:

vii) ապահովում է, որ ներքին ազդարարման մեխանիզմները հնարավորություն տան բոլոր համապատասխան անձանց հաղորդելու խախտումների մասին տեղեկատվություն, և առնվազն նրանց, ովքեր ընդգրկված են օրենսդրության սահմանված անձանց շրջանակում (խորհրդատուներ, նախկին աշխատակիցներ, աշխատանքի դիմողներ և այլն),	<i>Ներքին ազդարարման մեխանիզմները չպետք է նախատեսված լինեն միայն կառույցի աշխատակիցների համար:</i>	Ոչ: Օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումներից չի բխում, որ նախկին աշխատակիցները կամ աշխատանքի դիմողները կարող են օգտվել ներքին ազդարարման հնարավորությունից:
viii) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր՝ տվյալ ժամանակահատվածում ներքին ազդարարման մեխանիզմների սահմանման պարտավորությունը չկատարելու համար,	<i>Տույժերը պետք է կիրառվեն նաև օրենքով կամ կանոնակարգով նախատեսված նվազագույն չափորոշիչներին չհամապատասխանելու դեպքում (տես ստորև 8 և 9 գուցանիշները):</i>	Ոչ: Օրենսդրությամբ սահմանված սանկցիաների համակարգ ազդարարման առնչությամբ գոյություն չունի:
ix) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր՝ ազդարարումներին հետամուտ չլինելու համար:		Այո: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41.5-րդ հոդվածը սահմանում է, որ որպես վարչական իրավախախտում ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելը, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը, հարուցված վարույթի զադտնիությունը չապահովելը, ազդարարին

		պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռելը, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունը ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ, առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-200-ապատիկի չափով:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
x) Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարին չպաշտպանելու համար:		Այո: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 41.5-րդ հոդված, ՀՀ քրեական օրենսգրքի 501-րդ հոդվածով որպես հանցագործություն, նախատեսված է ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց սպանությունը, առողջությանը վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը: Սակայն այս դրույթը պետք է բխեր «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 15: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 32-33, 36 և 45-47: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 9-10:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		

- xi) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) - (iv) չափանիշներին, **սակայն** ազատում է ավելի շատ կառույցների/կազմակերպությունների նման մեխանիզմներ ստեղծելու պարտավորությունից (օրինակ՝ ազատում է որոշակի ոլորտների կամ 50-ից զգալիորեն ավելի մեծ թվով աշխատող ունեցող կազմակերպությունների կամ փոքր քաղաքապետարանների). **ԿԱՄ**
- xii) լիովին համապատասխանում է վերը նշված (i) - (iii) չափանիշներին, **բայց** չի համապատասխանում (iv) չափանիշին:
- Օրենսդրությունը կարող է համարվել թուֆ, եթե այն...**
- xiii) չի համապատասխանում վերը նշված (i) - (iii) չափանիշներին. **ԿԱՄ**
- xiv) չի համապատասխանում վերը նշված (xi) չափանիշին.

N		Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը		
8.		ՆԵՐՔԻՆ ԱՃՂԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ: ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ		ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՃՂԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին				Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն պահանջում է պետական և մասնավոր կառույցներից ընդունել ներքին ազդարարման մեխանիզմներ, որոնք...				Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ապահովում են ներքին ազդարարի և զեկույցում նշված ցանկացած երրորդ անձի ինքնության գաղտնիությունը և կանխում են այդ տեղեկատվության հասանելիությունը ոչ լիազորված անձնակազմի համար,				9.1 (ա)		

բ)	տրամադրում են ազդարարման ուղիներ (հոգնակի), որոնք հնարավորություն են տալիս զեկուցել գրավոր (օրինակ՝ փոստով, ֆիզիկական բողոքների տուփով, առցանց հարթակի միջոցով) և/կամ բանավոր (այսինքն՝ հեռախոսով կամ այլ ձայնային հաղորդագրությունների համակարգերի միջոցով և ֆիզիկական հանդիպման միջոցով՝ ողջամիտ ժամկետում),	9.1 (ա) 9.2. պարբ. 53		
գ)	նշանակում են անկողմնակալ անձի/գերատեսչության, որը կհետևի ազդարարումներին և կպահպանի հաղորդակցումը ազդարարի հետ, ներառյալ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկություններ խնդրելու և հետադարձ կապ ապահովելու համար,	9.1 (գ)	<i>Այս անձը կամ գերատեսչությունը կարող է լինել նույնը, ինչ ազդարարումներ ստացողը:</i>	
դ)	ապահովում են ազդարարումների ջանասիրաբար հետաքննություն (նշված անկողմնակալ անձի կամ գերատեսչության կողմից),	9.1 (դ)		
ե)	արձանագրում են յուրաքանչյուր ստացված հաղորդումը՝ պահպանելով գաղտնիության պահանջները,	18.1		
զ)	ապահովում են, որ ազդարարումները, երբ ստացվեն, պահվեն ոչ ավել, քան անհրաժեշտ է և համաչափ,	18.1		
է)	իրավունք են շնորհում կազմակերպություններին փաստաթղթավորելու բանավոր ազդարարումները և հանդիպումները	18.2 18.3		

ծայնագրության, սղագրության կամ արձանագրության միջոցով՝ ազդարարի համաձայնությամբ,	18.4		
ը) տրամադրում են հնարավորություն ազդարարին վերանայել, ուղղել և համաձայնել բանավոր ազդարարումների և հանդիպումների արձանագրություններին/սղագրություններին (նշված է վերևում (է) չափանիշում):	18.2 18.3 18.4		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
թ) պահանջել անսնուն ազդարարումների հետաքննություն:	9.1(է)	Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ			
		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻՇԵՂ համարվել, եթե այն պահանջում է պետական և մասնավոր կառույցներից ընդունել ներքին ազդարարման մեխանիզմներ, որոնք...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) ապահովում են ազդարարի ինքնության գաղտնիությունը (բացառությամբ, այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտորեն հրաժարվում է դրանից) (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),			Այո: Օրենքի Հոդված 6, Ներքին ազդարարման վարույթի ընդհանուր բնութագիրը սահմանում է, որ ազդարարումը ստացած վերադաս մարմնի ղեկավարը կամ իր լիազորած անձը ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը: Հոդված 10. 2. Ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

ii) տրամադրում են հաղորդման բազմաթիվ ուղիներ, որոնք հեշտությամբ հասանելի են և հնարավորություն են տալիս ազդարարել գրավոր և բանավոր,	Մասնակի: Համաձայն Օրենքի Հոդված 6-ի՝ 1. Ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին (բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին) հաղորդում ներկայացնելով: 2. Եթե հաղորդումն ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված անձը, ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին: Սակայն, փաստացի, պրակտիկ ուղիները սահմանված չեն, գրավոր կամ բանավոր ընթացակարգերը և ազդարարման հարցերով պատասխանատուների ինստիտուտը ոչ բոլոր իմնարկներում գոյություն ունի:
--	--

iii) նշանակում են անկողմնակալ անձի/անձանց կամ գերատեսչության՝ հաղորդումներին ընթացք տալու համար, մասնավորապես՝ • ցանկացած շահագրգիռ անձի տրամադրելու տեղեկատվություն ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ, • ընդունելու ազդարարումները, • հետամուտ լինելու ազդարարմանը, • կապ պահպանելու ազդարարի հետ, ներառյալ անհրաժեշտության դեպքում խնդրելու լրացուցիչ տեղեկություններ և ապահովելու հետադարձ կապը:		Մասնակի: ՀՀ կառավարության 6 հուլիսի 2023 թվականի N 1148-Ն որոշմամբ սահմանվում է պետական մարմիններում ազդարարման խարցերով պատասխանատուների պաշտոնին նշանակումը, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին և անկախ, ինքնավար մարմիններին առաջարկվում է նշանակել ազդարարման խարցերով պատասխանատու, ինչպես նաև սահմանվում է ազդարարումների հաշվառման կարգը:
iv) ապահովում են ազդարարման ջանասիրաբար (այսինքն՝ մանրակրկիտ, ժամանակին և անկախ) հետաքննությունը (այսինքն՝ վերը նշված (դ) չափանիշը),		Մասնակի: ՀՀ կառավարության 1148-Ն որոշումը սահմանում է միայն ազդարարումների հաշվառման կարգը և վիճակագրության վարումը, իսկ Օրենքը մեկ հոդվածով նշում է ներքին ազդարարման վարույթի ընդհանուր կարգավորումները: Սակայն ազդարարման պատասխանատուները չեն վերապատրաստվում դիմումների ընդունման և ազդարարման վարույթի մասով և Օրենքով սահմանված չէ, որ պետք է վերապատրաստվեն ազդարարման գործերը քննելու համար:
v) տրամադրում են կիրառելի մեխանիզմներ՝ թափանցիկ և ժամանակին ստանալու և հետևելու ազդարարների հաշվեհարդարի բողոքները,		Մասնակի: Օրենքը չի տրամադրում հաշվեհարդարից պաշտպանության հստակ ու կիրառելի մեխանիզմներ: Ըստ Օրենքի Հոդված 10-ի՝ ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված

		որոշումն ուղարկվում է ոստիկանություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար: Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով՝ այնքանով, որքանով իր էությանմբ (mutatis mutandis) կիրառելի է: Բացի այդ, հստակ չէ, թե ազդարարը ում պետք է դիմի հատուկ պաշտպանության միջոց ստանալու համար, քանի որ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ նման իրավունք ունի նաև ՄԻՊ-ը: Իսկ հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգի մասին ՀՀ կառավարության որոշումը չի սահմանում հստակ ընթացակարգեր ազդարարողների համար:
vi)	ապահովում են հաշվեհարդար իրականացնողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթաց,	Ոչ: Նման կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որևէ կարգավորում բացակայում է: Օրենքը առհասարակ չի անդրադառնում հաշվեհարդարի արգելքին:
vii)	թափանցիկ և ժամանակին տրամադրում են կիրառման մեխանիզմներ ազդարարներին, ովքեր ենթարկվել են հաշվեհարդարի (այսինքն՝ ապահովելու վերականգնողական միջոցառումներ և փոխհատուցում) լիարժեք փոխհատուցում	Ոչ: Օրենքը և ենթաօրենսդրական ակտերը նման կարգավորումներ չեն նախատեսում:

ապահովելու համար,		
viii) պահանջում են անանուն ազդարարումների հետաքննությունը (այսինքն՝ չափանիշ (i) վերը նշված և մասում),		Այո: Գոյություն ունի նաև անանուն եղանակով՝ ազդարարման միասնական հարթակի միջոցով հաղորդում ներկայացնելու միջոց, որը սահմանվում է Օրենքի Հոդված 8 և 9-ով: Ըստ Օրենքի Հոդված 9-ի՝ 3. Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: 4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաղորդումն ստուգելու նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:
ix) ապահովում են ազդարարման ուղի(ներ), որոնք թույլ են տալիս անանուն ազդարարումներ իրականացնել (օրինակ՝ առցանց ազդարարման հարթակի միջոցով):		Այո: Գոյություն ունի azdararir.am անանուն ազդարարումների էլեկտրոնային հարթակը, որը կարգավորվում է Օրենքի Հոդված 8 և 9-ով:

Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻՑԵՂ համարվել, եթե այն պահանջում է պետական և մասնավոր կառույցներից ընդունել ներքին ազդարարման մեխանիզմներ, որոնք...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
x) Ապահովում են, որ նշանակված անձնակազմն ունենա համապատասխան որակավորում և/կամ ստանա հատուկ վերապատրաստում՝ հաղորդումների մշակման նպատակով,		Ոչ: Օրենսդրությունը վերապատրաստումների հնարավորություն չի նախատեսում:
xi) Նախատեսում են լրացուցիչ ռազմավարություններ ազդարարի նկատմամբ հաշվեհարդարը կանխելու համար (օրինակ՝ ռիսկի գնահատում, կանխարգելիչ միջոցառումներ),		Ոչ: Նման ընթացակարգեր գոյություն չունեն:
xii) տրամադրում են անվտանգ և գաղտնի խորհրդատվության ուղիներին,		Մասնակի: Օրենքի Հոդված 10-ով սահմանվում է, որ Ազդարարն ունի ՄԻՊ-ից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք: Սակայն ՄԻՊ աշխատակազմում այդ գործառնության համար ազդարարման մասով հատուկ վարչություն կամ ընթացակարգ գոյություն չունի:
xiii) Տրամադրում են ազդարարման ուղիներ, որոնք հնարավորություն են տալիս ազդարարներին և նրանց հաղորդումը վարող անձանց հաղորդակցվել անանուն,		Այո: Անանուն ազդարարման հարթակի միջոցով հաղորդում ներկայացնողի և իրավասու մարմնի միջև հաղորդակցությունը հնարավոր է:
xiv) Ապահովում են բողոքարկման հնարավորություն՝ կապված գործընթացի արդարության և որակի հետ, ազդարարման սուբյեկտի կամ ազդարարի խնդրանքով:		Ոչ: Բողոքարկման հնարավորություն Օրենքով նախատեսված չէ:

Համապատասխան աղբյուրներ՝
ԹԻ սկզբունքներ 15 և 18: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 34-37: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 8-10:

Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...

xv) համապատասխանում է վերը նշված բոլոր հինգ չափանիշներին (i) – (v):

Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...

xvi) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) – (v) հինգ չափանիշներին:

N		Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
9.		ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ		ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին				Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)	
ա)	պահանջում է համապատասխան տեղեկատվության տրամադրում՝ կապված ներքին ազդարարման ուղիների օգտագործման հետ,	7.3			
բ)	պահանջում է հստակ և հեշտ հասանելի տեղեկատվության տրամադրում իրավասու պետական մարմիններին և, անհրաժեշտության դեպքում, ԵՄ հաստատություններին, մարմիններին, գրասենյակներին կամ գործակալություններին արտաքին ազդարարման ընթացակարգերի	9.1 (Է)			

վերաբերյալ,			
գ) պահանջում է ազդարարումը ստանալու մասին հաստատում այն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում (կամ ավելի քիչ),	9.1 (բ)		
դ) պահանջում է հաղորդումը տրամադրող անձանց հետ հետադարձ կապ ապահովել եռամսյա ժամկետում նախատեսվող կամ ձեռնարկված գործողությունների և այդ հետագա գործողությունների ընտրության հիմքերի վերաբերյալ:	5.13 9.1 (գ)		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա) ● ● ●			
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) ապահովում է, որ ներքին ազդարարման կանոնակարգերն ու ընթացակարգերը լավ տեսանելի և հասկանալի լինեն (օրինակ՝ պարբերաբար առաջխաղացում, ցուցանակ փակցված աշխատավայրում՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով),		Ոչ: Նման կարգավորում գոյություն չունի:	
ii) պահանջում է հստակ և հեշտ հասանելի տեղեկատվության տրամադրում իրավասու մարմիններին արտաքին ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ (այսինքն՝ վերը նշված		Մասնակի: Հստակ ընթացակարգեր բացի Օրենքի հոդված 6-ի ընդհանուր կանոններից գոյություն չունեն:	

(բ) չափանիշը),		
iii) պահանջում է ազդարարման ստացման հաստատում խիստ սահմանված կարճ ժամկետում,	<i>Վերոնշյալ (գ) չափանիշով նախատեսված յոթնօրյա ժամկետը որոշ համատեքստերում կարող է չափազանց երկար համարվել:</i>	Ոչ: Ստացման հաստատման վերաբերյալ կարգավորում նախատեսված չէ:
iv) պահանջում է հաղորդումը տրամադրող անձանց հետ հետադարձ կապի ապահովում նախատեսվող կամ ձեռնարկված գործողությունների և հետագա գործողությունների ընտրության հիմքերի վերաբերյալ,	<i>Վերոնշյալ (դ) չափանիշով նախատեսված եռամսյա ժամկետը որոշ համատեքստերում կարող է չափազանց երկար համարվել.</i>	Այո: Օրենքի Հոդված 6-ի 3-րդ մասի կետ 8-ով նախատեսում է հետադարձ կապի հնարավորությունը: Սակայն միայն ազդարարի պահանջով է ապահովում վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը, այսինքն առերևույթ նման պարտականություն գոյություն չունի, այլ միայն պահանջի առկայության դեպքում է անձը ծանուցվում ընթացքի վերաբերյալ:
v) տրամադրում է հնարավորություն հաղորդումը տրամադրող անձանց պարզաբանելու իրենց ազդարարումը և տրամադրելու լրացուցիչ տեղեկատվություն կամ ապացույց (թեև առանց այդ անելու պարտավորվածությամբ),		Այո: Օրենքի Հոդված 6-ի 3-րդ մասի կետ 9-ով նման հնարավորություն նախատեսված է, ըստ Հոդվածի՝ իրավասու մարմինը հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:
vi) թույլ է տալիս ազդարարին վերանայել և մեկնաբանել իր հաղորդման հետաքննության արդյունքները (օրինակ՝ հետաքննության զեկույցի նախագիծը),		Ոչ: Ըստ Օրենքի հոդված 6-ի կետ 6-ի՝ ներքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը <i>միայն</i> ծանուցվում է:
vii) պահանջում է տարեկան զեկույցի հրապարակում, որտեղ արձանագրվում են ստացված		Այո: Ըստ ՀՀ կառավարության 1148-Ն որոշման՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից

ազդարարումների քանակը, հետաքննությունները և արդյունքները:		վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել ՄԻՊ-ին: Իրավասու մարմինը պարտավոր է մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը իր պաշտոնական ինտերնետային կայքում (տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի բացակայության դեպքում՝ մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում) տեղադրել սույն հավելվածի Ձևին համապատասխան ամփոփված վիճակագրական տվյալները: Իրավասու մարմինը յուրաքանչյուր տարվա վիճակագրական հաշվետվության հետ հրապարակում է նաև դրան նախորդող տարվա վիճակագրական հաշվետվության հետ համեմատական վերլուծությունը: Այնուամենայնիվ, գործնականում այս դրույթը դեռևս չի կիրառվել:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է Հափանիշներին (Այո/Ոչ)
viii) Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարին խելամիտ ժամկետում հետագա գործողությունների վերաբերյալ հետադարձ կապ չտրամադրելու համար,		Մասնակի: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 41.5-ը, ի թիվս այլոց, նախատեսում է, որ ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունն ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով

		միջոցներ չձեռնարկելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ, առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: Սակայն համաչափությունը ու արդյունավետությունը միայն տուգանքներով ինարավոր չէ հասնել ու պարզ չէ, թե ով պետք է կիրառի այդ տուգանքը, քանի որ իրավասու մարմինը որպես այդպիսին այս հարցերով հստակ չէ ու գոյություն չունի ազդարարման հարցերով անկախ մարմին, որը սովորաբար ենթարկում է վարչական պատասխանատվության:
ix) պահանջում է համապարփակ ներքին ուսուցում ղեկավարության և անձնակազմի համար խախտումների հաղորդման վերաբերյալ:		Ոչ: Նման պահանջ օրենսդրությունը չի նախատեսում:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 15, 18, 22 և 27: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 33, 47-49: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 10:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
ix) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) - (iv) չափանիշներին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
x) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) - (iv) չափանիշներին (անկախ նրանից, թե արդյոք (v) - (vii) չափանիշները բավարարված են):		

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը		
10. ԱՐՏԱՔԻՆ ԱՃԴԱՐԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԱՃԴԱՐԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏԱՔՆՆԵԼՈՒ ԱՃԴԱՐԱՐՈՒՄԸ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա)	հստակորեն նշանակում է մարմիններ, որոնք իրավասու են ստանալ, արձագանքել և հետաքննել արտաքին ազդարարումները,	11.1 5.14	Դա կարող է արվել կարգավորման միջոցով, սակայն օրենքը պետք է հստակ սահմանի, թե ով է պատասխանատու մարմինների նշանակման համար և ներառի նման նշանակման համապարփակ չափանիշներ:	
բ)	պահանջում է նման մարմիններից ստեղծել անկախ և ինքնուրույն ուղիներ արտաքին ազդարարման համար,	11.2(ա)		
գ)	պահանջում է նման մարմիններից ջանասիրաբար հետաքննել ազդարարումը,	11.2 (գ) պարբ. 65	Ազդարարումը ջանասիրաբար հետաքննելու ինստիտուցիոնալ համար նշանակված մարմինն արդեն պետք է ունենա կամ ստանա դրա համար անհրաժեշտ կարողություններն ու լիազորությունները (կամ հետաքննելով և շտկելով	

		արձանագրված խախտումները վերականգնողական գործողությունների միջոցով, կամ գործը փոխանցելով մեկ այլ մարմնի և համոզվելով, որ վերջինիս կողմից կա պատշաճ հետաքննություն):	
դ) ապահովում է նման մարմինները համապատասխան ռեսուրսներով,	11.1	Սա էական գործոն է, սակայն հասկանալի է, որ այն, հավանաբար, չի լուծվի (միայն) ազդարարող օրենսդրության միջոցով:	
ե) պահանջում է, որ ցանկացած հաղորդումը ստացող մարմին, որը իրավասություն չունի բացահայտելու խախտումը, փոխանցի այն իրավասու մարմնին ողջամիտ ժամկետում, ապահով և անհապաղ տեղեկացնի այդ մասին ազդարարին,	11.6		
զ) պահանջում է, որ իրավասու մարմինը պատշաճ ժամկետում փոխանցի ազդարարման մեջ պարունակվող տեղեկատվությունը ԵՄ իրավասու հաստատություններին, մարմիններին, գրասենյակներին կամ գործակալություններին, անհրաժեշտության դեպքում, հետաքննության համար, եթե դա նախատեսված է օրենքով,	11.2(զ)		
է) պահանջում է իրավասու մարմիններից կանոնավոր և առնվազն երեք տարին մեկ	14		

վերանայել հաղորդումների ընդունման իրենց ընթացակարգերը և դրանց հետագա ընթացքը:			
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	
ը) Նախատեսել, որ իրավասու մարմինները կարողանան որոշել, որ հաղորդված խախտումը չի պահանջում հետաքննություն, եթե այն ակնհայտորեն անհշան է կամ կրկնվող՝ հայտնելով ազդարարին նման որոշման և դրա պատճառների մասին,	11.3 11.4	Սա լավագույն պրակտիկան է, հետևաբար, չարժեքն ունի, եթե ձախողվում է համապատասխանության ապահովումը:	
թ) Նախատեսել, որ իրավասու մարմինները կարողանան Դիրեկտիվի շրջանակում առաջնահերթության կարգով զբաղվել լուրջ խախտումների կամ հիմնական դրույթների խախտման մասին հաղորդումներով:	11.5		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) հստակորեն նշանակում է այն մարմիններին, որոնք իրավասու են ստանալու, արձագանքելու և հետաքննելու արտաքին ազդարարումները (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),			Մասնակի: Ըստ Օրենքի հոդված 7-ի՝ արտաքին ազդարարումը սկսվում է իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով, սակայն Սույն հոդվածի վերլուծությունից բխում է, որ Օրենքում նշված «իրավասու մարմին» ձևակերպումը ընդհանրական է: Ըստ էության, այն վերաբերում է բոլոր պետական մարմիններին, ՏԻՄ-երին և

		պետական (հանրային) կազմակերպություններին: Նույն սահմանումը վերաբերում է նաև այն իրավասու մարմին, որոնք ստանում են արտաքին ազդարարումներ և ազդարարներին պաշտպանություն տրամադրելու կամ դրա հետ կապված դիմումներ: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից անհասկանալի է, թե ում պետք է ազդարարը դիմի արտաքին ազդարարման դեպքում և ումից կարող է պահանջել հատուկ պաշտպանություն, ումից կարող է ակնկալել հետադարձ կապ: Բացի այդ, արտաքին ազդարարման վարույթը ձևակերպված է բավականին ընդհանրական և, ըստ էության, «իրավասու մարմին» է տրված լայն հայեցողություն՝ ընդունելու համապատասխան ընթացակարգեր, իսկ արտաքին ազդարարման վարույթը, որպես այդպիսին, հստակ ու մանրակրկիտ ներկայացված չէ: Պրակտիկայում արտաքին ազդարարման դեպքերը նույնպես սակավ են:
ii)	պահանջում է նման մարմիններից ստեղծել անկախ և ինքնուրույն ուղիներ արտաքին ազդարարման համար (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),	Մասնակի: Որպես ինքնուրույն ուղի կարող է դիտարկվել միասնական հարթակի միջոցով ազդարարումը:
iii)	պահանջում է նման մարմիններից ջանասիրաբար հետաքննել ազդարարումը (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),	Այո: Օրենքի հոդված 7-ը նախատեսում է արտաքին ազդարարման հետ կապված իրավասու մարմնի լիազորությունները, այդ թվում ազդարարման վարույթի ժամկետները:

	լիազորությունները (կամ հետաքննելով և շտկելով արձանագրված խախտումները վերականգնողական գործողությունների միջոցով, կամ գործը փոխանցելով մեկ այլ մարմնի և համոզվելով, որ վերջինիս կողմից կա պատշաճ հետաքննություն):	
iv)	պահանջում է, որ ցանկացած հաղորդումը ստացող մարմին, որը իրավասություն չունի անդրադառնալու արձանագրված խախտմանը, հեշտացնի հաղորդման փոխանցումը ճիշտ իրավասու մարմնին, բայց ոչ առանց ազդարարողի հստակ համաձայնության (օրինակ՝ նրանք, հնարավորության դեպքում, կարող են տեղեկացնել ազդարարին և կա՛մ ստանալ նրա բացահայտ համաձայնությունը՝ նախքան հաղորդումը փոխանցելը ճիշտ իրավասու մարմնին, կա՛մ նրան ուղղորդել դիմելու ճիշտ իրավասու մարմնին),	Մասնակի: Ըստ Օրենքի հոդված 7-ի՝ 5. Եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմնին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին, այլ ոչ թե նախապես ստանալով ազդարարի համաձայնությունը:
v)	ապահովում է նվազագույն չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն արտաքին ազդարարման մեխանիզմներով,	Օրենքը կարող է հղել պարտադիր կարգավորմանը, եթե ազգային համատեքստում ավելի նպատակահարմար է կանոնակարգումներում ունենալ նման նվազագույն չափորոշիչներ: Մասնակի: Այդպիսին կարող են դիտվել Օրենքի հոդված 7-ով նախատեսված կարգավորումները:

vi)	Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր՝ տվյալ ժամանակահատվածում արտաքին ազդարարման մեխանիզմների սահմանման պարտավորությունը չկատարելու համար:	<i>Տույժերը պետք է կիրառվեն նաև օրենքով կամ կանոնակարգով նախատեսված նվազագույն չափորոշիչներին չհամապատասխանելու դեպքում (տես ստորև 11 և 12 ցուցանիշները):</i>	Ոչ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ը վերաբերում է միայն ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելուն, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելուն, հարուցված վարույթի գաղտնիությունը չապահովելուն, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռնելուն, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելուն, հաղորդման իսկությունն ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելուն, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելուն:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻՑԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
vii)	սահմանում է, որ նշանակված մարմիններին պետք է տրամադրվեն համապատասխան ռեսուրսներ,	<i>Սա էական գործոն է, սակայն ընդունված է, որ այն, հավանաբար, չի լուծվի (միայն) ազդարարող օրենսդրության մեջ:</i>	Ոչ: Օրենքը ռեսուրսների մասով կարգավորում չի պարունակում:

viii) պահանջում է իրավասու մարմիններից պարբերաբար և առնվազն երեք տարին մեկ վերանայել հաղորդումների ընդունման իրենց ընթացակարգերը և դրանց հետագա ընթացքը (այսինքն՝ վերը նշված է) չափանիշը:		Ոչ: Նման պահանջ գոյություն չունի:
---	--	-----------------------------------

Համապատասխան աղբյուրներ՝

ԹԻ սկզբունքներ 16 և 30: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 37-39 և 45-47: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 10:

Օրենսդրությունը կարող է համարվել **ՄԻՋԻՆ**, եթե այն...

ix) համապատասխանում է առնվազն (i) - (iii) չափանիշներին:

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

x) չի համապատասխանում առնվազն (i) - (iii) չափանիշներին, անկախ նրանից, թե մյուս չափանիշները բավարարված են:

N 11. Ցուցանիշի անվանումը ԱՐՏԱԶԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ: ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ		Ցուցանիշին վերաբերող հարցը ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԶԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն պահանջում է արտաքին ազդարարման ուղիներ և ընթացակարգեր, որպեսզի...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ապահովվեն տեղեկատվության ամբողջականությունը, գաղտնիությունը և կանխվի իրավասու մարմնի ոչ լիազորված անձնակազմի հասանելիությունը.		12.1(ա)		

բ)	երաշխավորվի տեղեկատվության տևական պահպանումը, որը թույլ կտա իրականացնել հետագա հետազոտություններ ,	12.1(բ)		
գ)	հնարավորություն տրվի ազդարարել գրավոր և բանավոր (հեռախոսով կամ այլ ծայնային հաղորդագրությունների համակարգերով և ֆիզիկական հանդիպման միջոցով ողջամիտ ժամկետում),	12.2		
դ)	ապահովվի ազդարարման ջանասիրաբար հետաքննություն,	11.2(գ)		
ե)	Նշանակվեն անձնակազմի անդամներ (հոգևակի), որոնք պատասխանատու են հաղորդումներին ընթացք տալու համար, մասնավորապես՝ • ցանկացած շահագրգիռ անձի տրամադրելու տեղեկատվություն հաղորդումների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ, • ընդունելու հաղորդումները և հետամուտ լինելու դրանց, • կապ պահպանելու ազդարարողի հետ հետադարձ կապ ապահովելու և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ տեղեկություններ խնդրելու նպատակով	12.4	<i>ԵՄ Դիրեկտիվը չի պահանջում, որ միևնույն անձը կատարի բոլոր երեք առաջադրանքները:</i>	
զ)	ապահովվի, որ նշանակված անձնակազմը ստանա հատուկ վերապատրաստում հաղորդումներին ընթացք տալու համար,	12.5		

է) ապահովվի, որ եթե հաղորդումը ստացվում է այլ ուղիներով կամ աշխատակազմի այլ անդամների կողմից, նրանց արգելվի բացահայտել նույնականացնող որևէ տեղեկություն,	12.3		
ը) ապահովվի, որ երբ հաղորդումը ստացվում է այլ ուղիներով կամ անձնակազմի այլ անդամների կողմից, նրանք անհապաղ հաղորդումն ուղարկեն հաղորդումների մշակման համար պատասխանատու անձնակազմի անդամներին,	12.3	<i>Թեև դա ԵՄ դիրեկտիվի համաձայն պահանջ է, հաղորդման փոխանցումն առանց ազդարարի բացահայտ նախնական համաձայնության, լավագույն պրակտիկան չէ (տե՛ս ստորև բերված (x) չափանիշը:</i>	
թ) յուրաքանչյուր ստացված հաղորդումը հաշվառվի՝ պահպանելով գաղտնիության պահանջները,	18.1		
ժ) ապահովվի, որ հաղորդումները, որտեղ էլ որ դրանք ընդունվեն, պահպանվեն ոչ ավելի, քան անհրաժեշտ է և համաչափ,	18.1		
ի) իրավասու մարմինները լիազորվեն փաստաթղթավորելու բանավոր հաղորդումները և հանդիպումները ձայնագրության, սղագրության կամ արձանագրության միջոցով՝ ազդարարի համաձայնությամբ,	18.2		
	18.3		
	18.4		
լ) ազդարարին հնարավորություն տրվի վերանայելու, ուղղելու և համաձայնեցնելու բանավոր հաղորդումների և հանդիպումների վերը նշված	18.2		
	18.3		
	18.4		

արձանագրությունները/սղագրությունները:			
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) ապահովում է տեղեկատվության ամբողջականությունը, գաղտնիությունը (ներառյալ ազդարարի ինքնությունը) և կանխում իրավասու մարմնի ոչ լիազորված անձնակազմի անդամների համար հասանելիությունը (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Այո: Ըստ Օրենքի հոդված 7-ի մաս 7-ի՝ եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, ապա մարմինը, որն ստացել է ազդարարի ներկայացրած հաղորդումը և իրավասու չէ վարույթ իարուցելու, պարտավոր է մինչև հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Ազդարարի համաձայնության բացակայության դեպքում հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:	
ii) տրամադրում է ազդարարման բազմաթիվ ուղիներ, որոնք հեշտությամբ հասանելի են և հնարավորություն են տալիս ազդարարել գրավոր և բանավոր,		Մասնակի: Որպես արտաքին ազդարարման այլընտրանքային ուղի կարող է դիտարկվել ազդարարման միասնական հարթակի միջոցով անանուն ազդարարումը, սակայն դա հնարավոր է միայն գրավոր եղանակով, բանավոր ձևերով ազդարարման այլընտրանքային ուղիների մասին դրույթ չկա:	
iii) ապահովում է ազդարարման ջանասիրաբար (այսինքն՝ մանրակրկիտ, ժամանակին և անկախ)		Մասնակի: Օրենքի հոդված 7-ը ընդամենը սահմանում է մինիմալ պահանջները ազդարարման	

	հետաքննությունը (այսինքն՝ վերը նշված (դ) չափանիշը),		վարույթի հետ կապված:
iv)	նշանակում է անձնակազմի անդամներ (հոգնակի), որոնք պատասխանատու են հաղորդումների մշակման համար, մասնավորապես՝ • ցանկացած շահագրգիռ անձի տրամադրելու տեղեկատվություն հաղորդումների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ, • ընդունելու հաղորդումներ և հետամուտ լինելու, • կապ հաստատելու ազդարարողի հետ հետադարձ կապ ապահովելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկություններ խնդրելու նպատակով (այսինքն՝ վերը նշված (ե) չափանիշը):		Մասնակի: Ազդարարման պատասխանատուների ինստիտուտը կարգավորվում է ՀՀ կառավարության 1148-Ն որոշմամբ, սակայն վերջիններս հատուկ վերապատրաստում ու վարույթի մասին տեղեկատվություն չեն ստանում:
v)	ապահովում է, որ նշանակված անձնակազմն ունենա համապատասխան որակավորում և ստանա հատուկ վերապատրաստում հաղորդումների մշակման համար,		Ոչ: Նման հնարավորություններ նախատեսված չեն:
vi)	ապահովում է, որ եթե հաղորդումը ստացվում է այլ ուղիներով կամ աշխատակազմի այլ անդամների կողմից, նրանց արգելվի բացահայտել նույնականացնող որևէ տեղեկություն (այսինքն՝ վերը նշված (ե) չափանիշը),		Ոչ: Նման հատուկ կարգավորում օրենսդրության մեջ առկա չէ:
vii)	պահանջում է ընթացք տալ անանուն ազդարարումներին,		Մասնակի: Ըստ Օրենքի հոդված 9-ի՝ 3. Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ

		ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: 4. Նախատեսված հաղորդումն ստուգելու նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին: Շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Սակայն այլ ազդարարումների պարագայում, որոնք չեն վերաբերում հանցագործություններին ու շահերի բախմանը, նման պահանջ նախատեսված չէ:
viii) տրամադրում է ազդարարման ուղիներ, որոնք թույլ են տալիս անանուն հաղորդումներ ներկայացնել (օրինակ՝ առցանց ազդարարման հարթակի միջոցով),		Այո: Էլեկտրոնային azdarair.am հարթակը ծառայում է անանուն ազդարարումների ստացման համար: Սահմանված է Օրենքի հոդված 8-ով:
ix) երաշխավորում է տեղեկատվության տևական պահպանումը (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը):		Ոչ: Նման կարգավորում բացակայում է:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)

x)	ապահովում է, որ երբ ազդարարումը ստացվում է այլ ուղիներով կամ անձնակազմի այլ անդամների կողմից, ստացողն ուղղորդի ազդարարին դեպի ճիշտ ուղի կամ մարմին,	<i>Սա տարբերվում է վերը նշված (ը) չափանիշից նրանով, որ այն պահանջում է ստացողից ուղղորդել ապդարարին համապատասխան ուղի, այլ ոչ թե ուղարկել նրա հաղորդումը առանց վերջինիս համաձայնության:</i>	Այո: Օրենքի Հոդված 7-ի մաս 5-ի համաձայն՝ եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:
xi)	նախատեսում է ազդարարման ուղիներ, որոնք հնարավորություն են տալիս ազդարարներին և նրանց հաղորդումը վարող անձանց հաղորդակցվել անանուն:		Այո: Առցանց հարթակի միջոցով հնարավոր է անանուն ազդարարողի հետ պահպանել պարբերական կապը:

Համապատասխան աղբյուրներ՝
ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 10:

Օրենսդրությունը կարող է համարվել **ՄԻՋԻՆ**, եթե այն...

xii) համապատասխանում է առնվազն (i) - (iv) չափանիշներին:

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

xiii) չի համապատասխանում առնվազն (i) - (iv) չափանիշներին:

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը		
12.	ԱՐՏԱԶԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ՕՐԵՆՍԴՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԶԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն իրավասու մարմիններից պահանջում է...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)

ա) հրապարակել իրենց կայքերում առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝ • պաշտպանության համար որակավորված լինելու պայմանները, • արտաքին ազդարարման ուղիների կոնտակտային տվյալները, • խախտումների մասին հաղորդման համար կիրառելի ընթացակարգերը, ներառյալ պարզաբանման/լրացուցիչ տեղեկությունների և ազդարարի հետ հետադարձ կապվելու վերաբերյալ, • գաղտնիության ռեժիմը, • ընթացք տալու բնույթը, • հաշվեհարդարից պաշտպանվելու միջոցներն ու ընթացակարգերը և գաղտնի խորհրդատվության առկայությունը, • պայմանները, որոնց դեպքում իրավասու մարմիններին հաղորդում տվող անձինք պաշտպանված են գաղտնիությունը խախտելու համար պատասխանատվություն կրելուց, • տեղեկատվական կենտրոնի կամ առանձին անկախ վարչական մարմնի կոնտակտային տվյալները:	13		
բ) հրապարակել վերոնշյալ տեղեկատվությունը իրենց կայքերի առանձնացված, հեշտությամբ ճանաչելի և հասանելի բաժնում,	13		

զ)	հաստատել խախտումների վերաբերյալ տեղեկատվության ստացումը յոթ օրվա ընթացքում (եթե հաղորդում տվող անձը բացահայտորեն այլ բան չի պահանջել, կամ եթե իրավասու մարմինը ողջամտորեն չի կարծում, որ հաղորդման ստացման հաստատումը կվտանգի ազդարարի ինքնության պաշտպանությունը),	11.2(բ)		
դ)	տրամադրել հետադարձ կապ ազդարարին երեք ամիսը (կամ վեց ամիսը՝ պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում) չզերազանցող ողջամիտ ժամկետում,	11.2(դ)		
ե)	ազդարարին հայտնել հետաքննության վերջնական արդյունքը (ներպետական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի համաձայն):	11.2(ե)		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ			Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն իրավասու մարմիններից պահանջում է...			Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i)	իրապարակել իրենց կայքերում առնվազն հետևյալ տեղեկատվությունը. (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը) - պաշտպանության համար որակավորված լինելու պայմանները, - արտաքին ազդարարման ուղիների կոնտակտային տվյալները, - խախտումների մասին հաղորդման համար կիրառելի ընթացակարգեր, ներառյալ պարզաբանման/լրացուցիչ տեղեկությունների և			Ոչ Ոչ բոլոր իրավասու մարմիններն ունեն իրենց կայքերում նման տեղեկատվություն: Տեղեկատվության աղբյուր է «Ազդարարման մասին» ՀՀ օրենքը, որտեղ նախանշված են ընթացակարգերը, սակայն կայքերը սովորաբար նման մանրակրկիտ տեղեկատվություն չեն պարունակում:

ազդարարի հետ հետադարձ կապվելու վերաբերյալ, • գաղտնիության ռեժիմը, • ընթացք տալու բնույթը, • հաշվեհարդարից պաշտպանվելու միջոցներն ու ընթացակարգերը և գաղտնի խորհրդատվության առկայությունը, • պայմանները, որոնց դեպքում իրավասու մարմիններին հաղորդում տվող անձինք պաշտպանված են գաղտնիության խախտման համար պատասխանատվություն կրելուց, տեղեկատվական կենտրոնի կամ առանձին անկախ վարչական մարմնի կոնտակտային տվյալները:		
ii) հրապարակել վերոնշյալ տեղեկատվությունը իրենց կայքերի առանձին, հեշտությամբ ճանաչելի և հասանելի բաժնում (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Ոչ Միակ ազդարարման հետ կապված ծանուցումը, որը դրվում է կայքերում, azdararir.am-ի հղումն է:
iii) նախատեսում է հաղորդման ստացման հաստատումը խիստ սահմանված, կարճ ժամկետում,	<i>Վերոնշյալ (գ) չափանիշով նախատեսված յոթնօրյա ժամկետը որոշ համատեքստերում կարող է չափազանց երկար համարվել:</i>	Մասնակի: Օրենսդրությունն արտաքին ազդարարման պարագայում ստացման հաստատում չի նախատեսում, եթե այդ հաղորդումը չի ստացվել միասնական հարթակի միջոցով:
iv) տրամադրել ազդարարներին ժամանակին հետադարձ կապ ազդարարման համար նախատեսվող կամ ձեռնարկված քայլերի և հետագա գործողությունների ընտրության հիմքերի վերաբերյալ,	<i>Վերոնշյալ (դ) չափանիշով նախատեսված երեք- վեցամսյա ժամկետը որոշ համատեքստերում կարող է չափազանց երկար համարվել:</i>	Մասնակի: Ըստ Օրենքի հոդված 7-ի մաս 8-ի՝ իրավասու մարմինն ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը, սակայն միայն պահանջելու պարագայում:

v) ազդարարին հաղորդել հետաքննության արդյունքները և վերջնական արդյունքը,	<i>Հաղորդակցությունը կարող է սահմանափակվել իրավական պահանջների պատճառով, ինչպիսիք են քրեական դատավարության կանոնները և գաղտնիության մասին օրենքները:</i> <i>Սա լավ է այնքանով, որքանով այս սահմանափակումներն անհրաժեշտ են և համաչափ, և ազդարարը տեղեկացվում է սահմանափակ հաղորդակցության պատճառների մասին:</i>	Այո: Օրենքի հոդված 7-ի մաս 8-ի համաձայն՝ արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:
vi) տրամադրել հնարավորություն ազդարարող անձանց՝ պարզաբանելու իրենց հաղորդումը և տրամադրելու լրացուցիչ տեղեկություններ կամ ապացույցներ (թեև առանց նրանց պարտավորության),		Այո: Ըստ Օրենքի Հոդված 7-ի՝ իրավասու մարմինը հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:
vii) տրամադրել հնարավորություն ազդարարող անձանց՝ վերանայելու և մեկնաբանելու իրենց հաղորդման հետ կապված հետաքննության արդյունքները (օրինակ՝ հետաքննության զեկույցի նախագիծը),		Մասնակի: Տե՛ս նախորդ կետը:
viii) նախատեսել տարեկան զեկույցներ, որոնք կգրանցեն ստացված ազդարարումների քանակը, ձեռնարկված գործողությունները և արդյունքները:		Այո: ՀՀ կառավարության 1148-Ն որոշման համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել ՄԻՊ-ին: Իրավասու

		մարմինը պարտավոր է մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ն իր պաշտոնական ինտերնետային կայքում (տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի բացակայության դեպքում՝ մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում) տեղադրել համապատասխան ամփոփված վիճակագրական տվյալները: Իրավասու մարմինը յուրաքանչյուր տարվա վիճակագրական հաշվետվության հետ հրապարակում է նաև դրան նախորդող տարվա վիճակագրական հաշվետվության հետ համեմատական վերլուծությունը:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
ix) Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ողջամիտ ժամկետում ազդարարին հետաքննության վերաբերյալ հետադարձ կապ չտրամադրելու համար,		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ով:
x) Նախատեսում է տույժեր ազդարարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը և հեշտ հասանելիությունը չապահովելու համար:		Ոչ: Նման կարգավորում ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 22: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 47-49: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 10:		
Օրենսդրությունը կարող է համարվել Միջին, եթե այն...		
x) համապատասխանում է վերը նշված (iii) – (v) չափանիշներին և		

xi) մասամբ կամ ամբողջությամբ համապատասխանում է վերը նշված (i) չափանիշին (այսինքն իրավասու մարմիններից պահանջում է հրապարակել վերը նշված (i) չափանիշում թվարկված տեղեկատվության առնվազն մի մասը):

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

xii) չի համապատասխանում վերը նշված (x) և (xi) չափանիշներին:

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
13. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ		ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն պաշտպանում է այն անձին, ով հրապարակային բացահայտումներ է անում, որտեղ...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում
			Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) անձը առաջին հերթին հաղորդել է ներքին և արտաքին ուղիներով կամ ուղղակիորեն արտաքին ուղիով, սակայն համապատասխան գործողություն չի ձեռնարկվել,	15.1(ա)		
բ) անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ խախտումը կարող է անմիջական կամ ակնհայտ վտանգ հանդիսանալ հանրային շահի համար, կամ անդամնալի վնասի սպառնալիք, ներառյալ անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը,	15.1(բ) (i)		

գ) արտաքին ազդարարման դեպքում անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ կա հաշվեհարդարի վտանգ կամ առկա է խախտման արդյունավետ լուծման փոքր հեռանկար գործի հատուկ հանգամանքների պատճառով (օրինակ՝ երբ ապացույցները կարող են թաքցվել կամ ոչնչացվել, կամ երբ մարմինը կարող է դավադրության մեջ լինել խախտման հեղինակի հետ կամ ներգրավված լինել խախտման մեջ):	15.1(բ) (ii)		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն պաշտպանում է այն անձին, ով հրապարակային բացահայտումներ է անում, որտեղ...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) անձը առաջին հերթին հաղորդել է ներքին և արտաքին ուղիներով կամ ուղղակիորեն արտաքին ուղիով, սակայն համապատասխան գործողություն չի ձեռնարկվել (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Այո: Ըստ Օրենքի հոդված 9.2-ի՝ եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով:	
ii) անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ խախտումը կարող է անմիջական կամ ակնհայտ վտանգ հանդիսանալ հանրային շահի համար, կամ անդամնալի վնասի սպառնալիք, ներառյալ անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Մասնակի: Թեև նման հատուկ կարգավորում առկա չէ, սակայն դա բխում է ազդարարի ընդհանուր սահմանումից:	
iii) արտաքին ազդարարման դեպքում կա հաշվեհարդարի վտանգ կամ առկա է խախտման արդյունավետ լուծման		Ոչ: Նման կարգավորում առկա չէ:	

փոքր հեռանկար գործի հատուկ հանգամանքների պատճառով (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը):			
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 17: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 40-41:			
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ , եթե այն...			
iv) համապատասխանում է վերը նշված (i) և (ii) չափանիշներին, բայց ոչ (iii) չափանիշին:			
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ , եթե այն...			
v) չի համապատասխանում վերը նշված (i) և (ii) չափանիշներին:			
III. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ			
N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
14. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ապահովում է, որ ազդարարի ինքնությունը չի կարող բացահայտվել որևէ մեկի կողմից, բացի այն լիազորված անձնակազմից, որը իրավասու է ստանալ կամ հետևել ազդարարումներին, առանց այդ անձի հստակ համաձայնության,	16.1		
բ) ապահովում է, որ (ա) չափանիշը կիրառելի է նաև ցանկացած այլ տեղեկատվության	16.1		

նկատմամբ, որից կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարզվել ազդարարի ինքնությունը,			
գ) թույլ է տալիս բացահայտել ազդարարի ինքնությունը, միայն • Եթե այն անհրաժեշտ և համաչափ պարտավորություն է..., • Եթե սահմանված է Միության կամ ազգային օրենսդրությամբ..., • Ինտաքենության կամ դատական վարույթի համատեքստում, այդ թվում ազդարարման սուբյեկտի պաշտպանության իրավունքները պաշտպանելու նպատակով..., • Եթե ապահովվում են համապատասխան երաշխիքներ: <i>(Վերոնշյալ նախադասությունը բաժանվել է կետերի՝ շեղման տարբեր տարրերն ընդգծելու համար):</i>	16.2 16.3		
դ) պահանջում է, որ երբ բացահայտվի ազդարարի ինքնությունը, վերջինս նախապես տեղեկացվի (բացատրությունն ուղարկվի գրավոր)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկատվությունը կվտանգի համապատասխան ինտաքենությունը կամ դատական վարույթը,	16.3		
ե) երաշխավորում է, որ իրավասու մարմինները, որոնք տեղեկատվություն են ստանում առևտրային գաղտնիք պարունակող խախտումների վերաբերյալ, չեն	16.4		

օգտագործում կամ բացահայտում այդ առևտրային գաղտնիքները այն նպատակների համար, որոնք ավելին են, քան անհրաժեշտ է պատշաճ ընթացք տալու համար,			
զ) Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր կիրառելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք խախտում են ազդարարող անձանց ինքնության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը:	23.1(դ)		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
ի) ապահովում է, որ ազդարարի ինքնությունը չի կարող բացահայտվել որևէ մեկի, բացի այն լիազորված անձնակազմից, որը իրավասու է ստանալ կամ հետևել ազդարարումներին՝ առանց այդ անձի հստակ համաձայնության (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Այո: Բոլոր ազդարարումների պարագայում Օրենքը իրավասու մարմնի վրա դնում է պարտավորություն ապահովել ազդարարի գաղտնիությունը: Իսկ արտաքին ազդարարման պարագայում նշում է, որ եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, ապա մարմինը, որն ստացել է ազդարարի ներկայացրած հաղորդումը և իրավասու չէ վարույթ հարուցելու, պարտավոր է մինչև հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Ազդարարի համաձայնության բացակայության դեպքում հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:	

ii) սահմանում է, որ (i) չափանիշը կիրառելի է նաև ցանկացած այլ տեղեկատվության նկատմամբ, որից կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարզվել հաշվետու անձի ինքնությունը, այսինքն՝ նույնականացնող ցանկացած տեղեկատվություն (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Ոչ: Նման կարգավորում գոյություն չունի:
iii) հստակ և նեղ սահմանում է գաղտնիության շատ քիչ բացառությունները: Ազդարարի ինքնությունը կարող է բացահայտվել միայն այն դեպքում, երբ դրա համար կա իրավական պարտավորություն, և այդպիսի պարտավորությունը պետք է սահմանափակվի ազգային իշխանությունների կամ դատական գործընթացների հետաքննության համատեքստով և պետք է լինի անհրաժեշտ ու համաչափ, այդ թվում ազդարարման սուբյեկտի պաշտպանության իրավունքները պաշտպանելու նպատակով,		Ոչ: Նման կարգավորում գոյություն չունի:
iv) սահմանում է, որ երբ անձը հաստատող տեղեկատվությունը պետք է բացահայտվի, ազդարարող անձինք պետք է նախապես տեղեկացվեն (բացատրությունը գրավոր ուղարկվի)՝ բավարար ծանուցմամբ,		Ոչ: Նման կարգավորում գոյություն չունի:
v) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարի ինքնության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը խախտելու համար (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը):		Այո: ՀՀ քրեական օրենսգրքով, որի Հոդված 502-ը բացահայտ նշում է, որ ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումն այն անձի կողմից, որին այդ տվյալը վստահվել կամ հայտնի է դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 20-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ 80-150 ժամ տևողությամբ, կամ

		որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումը հաղորդում ստացած ՉԼՄ ներկայացուցչի կողմից՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 10-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը 100 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով: Ի լրումն քրեական օրենսգրքի, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 41.5-ը սահմանում է, որ որպես վարչական իրավախախտում ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելը, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը, իարուցված վարույթի գաղտնիությունը
--	--	---

		չապահովելը, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռելը, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունը ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-200-ապատիկի չափով:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
vi) սահմանում է, որ երբ նույնականացման տեղեկատվությունը պետք է բացահայտվի, ազդարարող անձանց, անհրաժեշտության դեպքում, պետք է տրամադրվեն լրացուցիչ պաշտպանության միջոցներ,		Մասնակի: Հստակ կարգավորում նախատեսված չէ, իսկ հատուկ պաշտպանության միջոցներ տրամադրելու ընթացակարգերը նախատեսված են Օրենքի Հոդված 10-ով, ըստ որի՝ ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է ոստիկանություն օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար: Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից Հայաստանի

		Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով այնքանով, որքանով իր եւությամբ (mutatis mutandis) կիրառելի է:
vii) հնարավորություն է տալիս ազդարարին բողոքարկել իր ինքնությունը բացահայտելու որոշումը:		Ոչ ։ Նման հնարավորություն օրենսդրությամբ իստակ սահմանված չէ:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 7: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 18-20:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ , եթե այն...		
viii) Կիրառելի չէ: Հաշվի առնելով խիստ գաղտնիության պահպանման կարևորությունը՝ գաղտնիության ռեժիմի ցանկացած բաց կարող է եապես թուլացնել ազդարարների պաշտպանության օրենսդրությունը, և, հետևաբար, այս ցուցանիշի համար ՄԻՋԻՆ գնահատական տալու տարբերակը բացառվում է:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ , եթե այն...		
ix) չի համապատասխանում վերը նշված (i) - (v) բոլոր չափանիշներին		

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
15. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		ՈՐՔԱՆՈ՞Վ Ե ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑԶ ՏԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) պահանջում է անձնական տվյալներին ընթացք տալը, ներառյալ անձնական տվյալների փոխանակումը կամ փոխանցումը, որը պետք է իրականացվի ԵՄ համապատասխան օրենսդրության համաձայն,	17	ԵՄ համապատասխան օրենսդրությունը ներառում է 2016/679 Կանոնակարգը (ԵՄ), 2016/680 Դիրեկտիվը (ԵՄ) և 2018/1725 Կանոնակարգը (ԵՄ):	
բ) արգելում է այնպիսի անձնական տվյալների հավաքագրումը, որոնք ակնհայտորեն չեն առնչվում կոնկրետ ազդարարմանը ընթացք տալուն (կամ հավաքագրվելու դեպքում պահանջում են դրանք ջնջել առանց անհարկի ուշացման),	17		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
գ) սահմանափակել ազդարարման սուբյեկտների տվյալների պաշտպանության որոշակի իրավունքների իրականացումը՝ կանխելու և հասցեագրելու ազդարարող անձանց ինքնությունը պարզելու փորձերը կամ	Պարբ. 84	Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:	

ազդարարմանը խոչընդոտելու կամ դրանց հետամուտ լինելուն, մասնավորապես՝ հետաքննություններին խանգարելու, խափանելու կամ դանդաղեցնելու գործողությունները:		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		
Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) հստակորեն ձևակերպում է ազդարարների պաշտպանության օրենսդրության և տվյալների պաշտպանության կանոնների միջև հարաբերությունն այնպես, որ թույլ է տալիս արդյունավետորեն կիրառել ազդարարների պաշտպանության մասին օրենսդրությունը,		Այո: Կարգավորվում է Օրենքի հոդված 10 և 11-ով:
ii) սահմանափակում է ազդարարման սուբյեկտների տվյալների պաշտպանության որոշակի իրավունքների իրականացումը՝ կանխելու և հասցեագրելու ազդարարող անձանց ինքնությունը պարզելու փորձերը կամ ազդարարումը խոչընդոտելու կամ դրանց հետամուտ լինելուն, մասնավորապես՝ հետաքննություններին խանգարելու, խափանելու կամ դանդաղեցնելու գործողությունները (այսինքն՝ վերոնշյալ (գ) չափանիշը):		Ոչ: Օրենքով հստակ կարգավորում նախատեսված չէ:
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻԶԻՆ, եթե այն...		
iii) համապատասխանում է (i) - (ii) չափանիշներից մեկին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		

iv) չի համապատասխանում (i) կամ (ii) չափանիշներից ոչ մեկին:

Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
16. ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅԱՆՋՈՒՄ ԱՆԱՆՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) սահմանում է, որ այն անձինք, ովքեր ազդարարում կամ հրապարակայնորեն բացահայտում են խախտումների մասին տեղեկությունն անանուն եղանակով և հետագայում հայտնաբերվում են և ենթարկվում հաշվեհարդարի, որակավորվում են պաշտպանության համար:	6.3	<i>Սա անկախ է նրանից, թե օրենքը պահանջում է մասնավոր և պետական կառույցներից և իրավասու մարմիններից ընդունել և հետևել անանուն ազդարարումներին (որը լուրաբանչուր անդամ պետության հայեցողությամբ է):</i>	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)	
ի) սահմանում է, որ այն անձինք, ովքեր ազդարարում կամ հրապարակայնորեն բացահայտում են խախտումների մասին տեղեկություններն անանուն և հետագայում բացահայտվում են, որակավորվում են	<i>Հայտնաբերված անանուն ազդարարը չպետք է հաշվեհարդարի ենթարկվի պաշտպանությանը</i>	Մասնակի: Օրենքն այս առումով հստակ դրույթ չի պարունակում, սակայն ըստ Հոդված 9-ի կետ 5-ի՝ Օրենքի Հոդված 7-ի դրույթները, այդ թվում պաշտպանությունը, տարածվում են անանուն	

պաշտպանության համար,	որակավորվելու համար:	հաղորդումների վրա այնքանով, որքանով դրանք իրենց էությանը (mutatis mutandis) կիրառելի են:
ii) պահանջում է մասնավոր և պետական կառույցներից և իրավասու մարմիններից ընդունել և հետևել անանուն ազդարարումներին,		Մասնակի: Մասնավոր կազմակերպությունների մասին նման դրույթ չկա:
iii) պահանջում է, որ ներքին և արտաքին ազդարարման ուղիները հնարավորություն տան անանուն ազդարարումներին (օրինակ՝ առցանց ազդարարման հարթակի միջոցով):		Մասնակի: Դա փաստացի հնարավոր է միայն միասնական հարթակի միջոցով:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻՇԵՆ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
iv) պահանջում է անանուն ազդարարման ուղիների ստեղծում, որոնք հնարավորություն են տալիս ազդարարին և ազդարարումը վարող անձին հաղորդակցվել:		Այո: Միասնական հարթակի միջոցով պարբերական կապ պահպանել անանուն ազդարարի հետ հնարավոր է:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 13: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 20-21: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 8-9:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻԶԻՆ, եթե այն...		
v) համապատասխանում է վերը նշված (i) և (ii) չափանիշներին, բայց ոչ (iii) չափանիշին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
vi) չի համապատասխանում (i) և (ii) երկու չափանիշներին:		

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
17. ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԱՐԳԵԼԵ		ՈՐՔԱՆՈՎ Ե ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՈՒՄ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) արգելում է ազդարարի և պաշտպանության ենթակա երրորդ անձանց դեմ հաշվեհարդարի ցանկացած ձև,	19	<i>Եթե ազգային օրենսդրությունը նախատեսում է հաշվեհարդարի ձևերի ցանկ, այն պետք է լինի ցուցիչ/ոչ սպառիչ:</i>	
բ) • հաշվեհարդարը սահմանվում է որպես ցանկացած ուղղակի կամ անուղղակի գործողություն կամ անգործություն, որը տեղի է ունենում աշխատանքի հետ կապված համատեքստում..., • դրդված է ներքին կամ արտաքին ազդարարումներով կամ հրապարակային բացահայտմամբ, և... • առաջացնում է կամ կարող է չհիմնավորված վնաս պատճառել ազդարարին: <i>(Վերոնշյալ նախադասությունը բաժանվել է կետերի սահմանման տարբեր տարրերն ընդգծելու համար):</i>	5.11 պարբ. 89	<i>Ինչպես բացատրվում է 89-րդ պարբերության մեջ, այն ներառում է ազդարարող անձի գործատուի, ինչպես նաև նրանց հաճախորդի կամ ծառայություններ ստացողի, ինչպես նաև վերջինիս անունից աշխատող կամ նրա անունից գործող անձանց, այդ թվում՝ նույն կազմակերպության, ինչպես նաև այլ կազմակերպությունների գործընկերների և ղեկավարների կողմից, որոնց հետ ազդարարը կապի մեջ է</i>	

		իրենց աշխատանքի հետ կապված գործունեության համատեքստում, ձեռնարկված, խրախուսված կամ հանդուրժված հաշվեհարդարը: (այսինքն՝ այն ներառում է այն իրավիճակները, երբ ապդարարը ինքնապաշտպանված է կամ աշխատում է կապալառուի, ենթակապալառուի կամ հաշվեհարդարի մատակարարի մոտ):	
գ) ներառում է հաշվեհարդարի սպառնալիքները և պատասխան գործողությունների փորձերը,	19		
դ) ապահովում է, որ փոխհատուցվեն հաշվեհարդարի առնվազն հետևյալ ձևերը՝ • աշխատանքի կասեցում, աշխատանքից ազատում, • պաշտոնի իջեցում կամ պաշտոնի բարձրացման կասեցում, • պարտականությունների փոխանցում, աշխատավայրի փոփոխություն, աշխատավարձի կրճատում, աշխատանքային ժամերի փոփոխություն, • վերապատրաստման դադարեցում, • գործունեության բացասական գնահատական կամ տեղեկանք, • կարգապահական միջոցներ,	19	Այգային օրենսդրությունը կարիք չունի նախատեսելու օրինակների ցանկ, սակայն այն պետք է ձևակերպվի այնպես, որ անհերքելիորեն ներառի այստեղ թվարկված հաշվեհարդարի ձևերը: Եթե ցուցակը տրամադրվում է, այն պետք է լինի հստակ ցուցիչ և ոչ սպառնիչ:	

	• նկատողություն կամ այլ տույժեր, • հարկադրանք, ահաբեկում, ոտնձգություն կամ արտաքսում, • խտրականություն, անբարենպաստ կամ անարդար վերաբերմունք, • որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը անորոշի չվերափոխում կամ չերկարաձգում կամ վաղաժամկետ դադարեցում, • վնաս, ներառյալ հեղինակությանը, կամ ֆինանսական կորուստը, • ներառում սև ցուցակում, • ապրանքների կամ ծառայությունների պայմանագրի վաղաժամկետ դադարեցում, • լիցենզիայի կամ թույլտվության չեղարկում, • հոգեբուժական կամ բժշկական ուղեգրեր:			
ե)	Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող պատիժներ կիրառելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ազդարարներին և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար են տեսնում:	23.1(բ)		

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i)	արգելում է ազդարարի և պաշտպանության ենթակա երրորդ անձանց դեմ հաշվեհարդարի ցանկացած ձև (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Մասնակի: Երրորդ անձինք չեն հավակնում օգտվել պաշտպանությունից:
ii)	լայնորեն սահմանում է հաշվեհարդարը՝ ներառելով ցանկացած գործողություն կամ անգործություն, որն առաջացնում է կամ կարող է վնաս պատճառել (օրինակ՝ «հաշվեհարդարի բոլոր ձևերը, անբարենպաստ պայմանները կամ խտրականությունը») (այսինքն՝ վերը նշված (բ2) և (բ5) չափանիշները),	Տրամադրված հաշվեհարդարի ձևերի ցանկացած ցանկ պետք է լինի ցուցիչ/ոչ սպառիչ:	Այո: Օրենքի Հոդված 2-ի իմաստով հաշվեհարդար կարելի է համարել վնասակար գործողությունները՝ 6) վնասակար գործողություն՝ գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ նրա գույքին վնաս պատճառելով կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ ազդարարումից հետ պահելուն

		ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով:
iii) ընդգրկում է հաշվեհարդարը բոլոր ազդարարների դեմ՝ անկախ նրանից՝ գեկուցել են ներքին կամ արտաքին ազդարարմամբ, թե հրապարակային բացահայտում են արել (այսինքն՝ վերը նշված (բ4) չափանիշը),		Այո: Վնասակար գործողություններից պաշտպանության իրավունք ունեն բոլոր ուղիներով ազդարարած ազդարարները:
iv) ընդգրկում է հաշվեհարդարի ուղղակի և անուղղակի ձևերը, օրինակ՝ թիրախավորել ընտանիքին կամ ընկերներին (այսինքն՝ վերը նշված (բ1) չափանիշը),		Մասնակի: Հաշվեհարդարի ձևերի վերաբերյալ օրենսդրական կարգավորում չկա:
v) ընդգրկում է ազդարարող անձի՝ գործատուից բացի (օրինակ՝ հաճախորդ, ծառայություններ ստացող) այլ կազմակերպությունների կողմից կամ դրանց շրջանակներում կատարված հաշվեհարդարը,		Ոչ: Ազդարարման օրենսդրությունը վնասակար գործողությունների հեղինակին չի անդրադառնում:
vi) ընդգրկում է հաշվեհարդարի սպառնալիքները և հաշվեհարդարի փորձերը (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),		Մասնակի: Օրենքում նման հստակ կարգավորում չկա, բայց Քրեական օրենսգրքի Հոդված 501-ով որպես հանցագործություն նախատեսված է ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց սպանությունը, առողջությանը վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը: Սակայն այս դրույթը պետք է բխեր «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից, մինչդեռ Օրենքի մեջ չկա հստակ սահմանում, որով արգելվում են ազդարարի նկատմամբ հաշվեհարդարի հիման վրա կատարված վնասակար գործողությունները կամ դրանց սպառնալիքը:
vii) ընդգրկում է հաշվեհարդարը, որը տեղի է ունենում աշխատանքի հետ կապված համատեքստից դուրս,	Սա տարբերվում է վերը նշված (բ3) չափանիշից:	Ոչ: Հստակ կարգավորում չկա, սակայն դա ենթադրվում է:

viii) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարի և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու համար (այսինքն՝ վերը նշված (ե) չափանիշը):		Մասնակի: Երրորդ անձանց պաշտպանության հարցը չի կարգավորվում:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
ix) պահանջում է բոլոր պետական և մասնավոր կազմակերպություններից պաշտպանել ազդարարող անձանց և պաշտպանության ենթակա երրորդ անձանց (այսինքն՝ պահանջում է գործատուից փորձել կանխել ազդարարին վնաս հասցնելը),		Մասնակի: Ազդարարման բոլոր տեսակների համար սահմանված է, որ իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով, սակայն սա չի վերաբերում մասնավոր հատվածին:
x) հստակորեն ներառում է հատուկ հաշվեհարդարի ձևեր ազդարարների համար, որոնք աշխատող չեն (օրինակ՝ սև ցուցակում ներառելը, ապրանքների կամ ծառայությունների պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, լիցենզիայի կամ թույլտվության չեղարկումը, որը նշված է վերոնշյալ (դ) չափանիշում),	<i>Դրանք սովորաբար ներառում են հաշվեհարդարի լայն սահմանումներ: Այնուամենայնիվ, նախընտրելի է հստակ դրույթը.</i>	Ոչ: Նման կարգավորում բացակայում է:
xi) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարին չպաշտպանելու համար:		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի Հոդված 41.5-ով:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 6 և 29: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 21-23, 28-30 և 36-37: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 9-10:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
xii) համապատասխանում է վերը նշված (i) – (iii) և (viii) չափանիշներին, սակայն չի համապատասխանում (iv) – (vii) բոլոր չափանիշներին:		

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

xiii) չի համապատասխանում վերը նշված (i) – (iii) և (viii) չափանիշներին:

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		ՈՐՔԱՆՈՎ Ե ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՈՂ ԱՆՁԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ապահովում է, որ ազդարարող անձանց (և պաշտպանության ենթակա երրորդ անձանց) հասանելի լինեն հաշվեհարդարից պաշտպանվելու ընթացակարգերի և միջոցների, ազդարարման սուբյեկտի իրավունքների վերաբերյալ համապարփակ, անկախ, հեշտությամբ հասանելի հանրությանը և անվճար տեղեկատվությունը և խորհրդատվությունը:	20.1(ա)		

բ) ապահովում է, որ ազդարարներին հասանելի լինի արդյունավետ պաշտպանություն իրավասու մարմինների կողմից (այսինքն՝ արտաքին ազդարարումներին ընթացք տվողներից) նախքան մեկ այլ համապատասխան մարմնի ներգրավվածությունը իրենց պաշտպանությանը (այսինքն՝ մեկ այլ մարմնի կամ դատարանի կողմից): Այն ներառում է իրավասու մարմինները, որոնք հաստատում են, որ արտաքին ազդարարումը տեղի է ունեցել,	20.1(բ), պարբ. 90		
գ) ապահովում է ազդարարող անձանց համար իրավաբանական օգնության հասանելիությունը քրեական և միջսահմանային քաղաքացիական դատավարություններում ԵՄ օրենսդրությանը համապատասխան,	20.1(գ)		
դ) ապահովում է ազդարարող անձանց հասանելիությունը հետագա վարույթում իրավաբանական օգնություն ստանալու և իրավական խորհրդատվության կամ այլ իրավական օգնության համար՝ ազգային օրենսդրության համապատասխան,	20.1(գ)	«Ազգային օրենսդրության համապատասխան» այս համատեքստում նշանակում է, որ եթե իրավաբանական օգնությունը նախատեսված է ազգային օրենսդրությամբ, այն պետք է հասանելի լինի ազդարարին:	

Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ե) տրամադրում է դրամական օգնություն դատական վարույթների շրջանակներում,	20.2		
զ) տրամադրում է ազդարարներին այլ պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ հոգեբանական աջակցություն՝ դատական գործընթացների շրջանակներում,	20.2		
է) ապահովում է վերոնշյալ պաշտպանության միջոցների հասանելիությունը տեղեկատվական կենտրոնի կամ մեկ անկախ վարչական մարմնի միջոցով,	20.3		
ը) նախատեսում է ազդարարների պաշտպանության որակավորման համար հավաստագրում:	20.1(բ), պարբ. 90	<i>Նման դեպքերում ազդարարող անձինք պետք է արդյունավետ հասանելիություն ունենան այդ հավաստագրման դատական վերանայմանը:</i>	

Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
ի) ապահովում է, որ ազդարարող անձանց (և պաշտպանության ենթակա երրորդ անձանց) հասանելի լինեն հաշվեհարդարից պաշտպանվելու ընթացակարգերի և միջոցների, ազդարարման սուբյեկտի իրավունքների վերաբերյալ համապարփակ, անկախ, հեշտությամբ հասանելի հանրությանը և անվճար տեղեկատվությունը և խորհրդատվությունը (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Մասնակի: Վերաբերում է միայն ազդարարներին և Օրենքի շրջանակներում փոխկապակցված անձանց, այսինքն երրորդ անձանց չի վերաբերում: Անվճար խորհրդատվության միակ ձևը ՄԻԴ-ի խորհրդատվությանը դիմելն է՝ համաձայն Օրենքի հոդված 10-ի մաս 2.1-ի: Հանրությանը հեշտ հասանելի լինելու առումով միայն azdarir.am խարթակն է հեշտ հասանելի, իսկ ընթացակարգերի	

		մասին տեղեկատվությունը մատչելի ու հասանելի չէ: Չնայած անձը կամ ՄԻՊ-ը կարող են դիմել իրավասու մարմինն հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հիմքով, այնուամենայնիվ, ըստ Օրենքի հոդված 10-ի մաս 5-ի՝ ազդարարի հետ փոխկապակցված անձն ազդարարի պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք ունի, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ: Անհասկանալի է, թե ինչ է ենթադրում ողջամիտ հիմնավորումը: Ամեն դեպքում, ըստ նույն Օրենքի հոդված 12-ի՝ ազդարարն ու փոխկապակցված անձինք վնասակար գործողություններից պաշտպանվելու համար ունեն դատական պաշտպանության իրավունք, սակայն չեն կարող օգտվել հանրային պաշտպանի անվճար օգնության իրավունքից, եթե չեն ապացուցում, որ վճարունակ չեն, իսկ ՄԻՊ-ը դատարանում չի կարող ներկայացնել ազդարարի կամ փոխկապակցված անձանց շահերը:
ii) ապահովում է, որ ազդարարներին հասանելի լինի արդյունավետ պաշտպանություն իրավասու մարմինների կողմից (այսինքն՝ արտաքին ազդարարումներին ընթացք տվողներից) նախքան մեկ այլ համապատասխան մարմնի ներգրավվածությունը իրենց պաշտպանությանը, այսինքն՝ մեկ այլ մարմնի կամ դատարանի կողմից (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Մասնակի: Այս առումով օրենսդրությունը հստակ չէ: Ըստ Օրենքի Հոդված 7-ի մաս 6-ի՝ իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով, սակայն գործնականում, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում և ինչպես է իրականացվում պաշտպանություն բացի աշխատանքային հարաբերությունների հետ

		կապված վնասակար գործողություններից, հստակ չէ (ՀՀ կառավարության 1148-Ն որոշումը նախատեսում է իրավասու մարմնի կողմից հիմնականում աշխատանքային բնույթի պաշտպանության միջոցներ, սակայն վերջում նշում է, որ կարող է ըստ անհրաժեշտության կիրառել պաշտպանության այլ միջոցներ): Իսկ հատուկ պաշտպանության միջոցները, վերջին հաշվով, վերաբերում են հանցավոր բնույթ կրող դեպքերի վերաբերյալ ազդարարումներից պաշտպանությանը, և դրանք իրականացվում են ըստ այս չափանիշի՝ այլ մարմնի կողմից, այլ ոչ թե իրավասու մարմնի միջոցով:
iii) ապահովում է, որ ազդարարներին հասանելի լինի իրավական օգնությունը, ներառյալ դատական գործընթացների շրջանակներում իրավական կամ ֆինանսական աջակցությունը (այսինքն՝ վերը նշված (ե) չափանիշը),		Ոչ: Օրենքի Հոդված 12-ով նախատեսվում է ազդարարների և փոխկապակցված անձանց դատական պաշտպանության իրավունքը, սակայն անվճար իրավաբանական օգնության հնարավորությունը ազդարարների համար թե՛ խնդրո առարկա Օրենքով, թե՛ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ, եթե իհարկե ազդարարը չի տրամադրում ապացույցներ, որ վճարունակ չէ ու այդ դեպքում, ընդհանուր կանոնի համաձայն, որը նախատեսված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, կարող է օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից:

iv) տրամադրում է անվճար անհատական գաղտնի խորհրդատվության հասանելիություն ազդարարներին, ներառյալ նրանց դեպի համապատասխան մարմիններ ուղղորդելը,		Մասնակի: Համաձայն Օրենքի հոդված 10-ի մաս 2.1-ի՝ ազդարարն ունի ՄԻՊ-ից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք: Մինչդեռ ՄՊ գրասենյակում այս առնչությամբ հատուկ ստորաբաժանում գոյություն չունի:
v) տրամադրում է ազդարարներին և այլ պաշտպանված անձանց հասանելիություն բոլոր վերոհիշյալ պաշտպանության միջոցներին մեկ անկախ մարմնի միջոցով:		Ոչ: Նման անկախ մարմին գոյություն չունի ՀՀ օրենսդրությամբ:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
vi) նախատեսում է աջակցության հիմնադրամ իրավական ընթացակարգերի և ֆինանսական լուրջ կարիքներ ունեցող ազդարարների աջակցության համար,	<i>Այդ թվում՝ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը դատական գործընթացների շրջանակից դուրս:</i>	Ոչ: Նման հնարավորություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:
vii) նախատեսում է հոգեբանական աջակցություն ազդարարների համար:		Ոչ: Նման հնարավորություն ազդարարների համար նախատեսված չէ:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 20 և 28: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 54 և 58-61:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		
viii) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) – (iii) չափանիշներին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...		
ix) չի համապատասխանում վերը նշված (i) – (iii) չափանիշներին:		

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
19. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԴԵՄ.ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆԴԳՐԿԵԼՈՎ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԲՈԼՈՐ ՈՒՂԱԿԻ, ԱՆՈՒՂԱԿԻ ԵՎ ԱՊԱԳԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ			
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) ապահովում է իրավական պաշտպանության միջոցների (այսինքն՝ իրավական գործողությունների) հասանելիությունը ազդարարներին և պաշտպանության ենթակա երրորդ անձանց,	21.8, պարբ. 95	<i>Ինչպես բացատրվում է 95-րդ պարբերության մեջ, թեև իրավական համակարգերի միջև իրավական գործողությունների տեսակները կարող են տարբեր լինել, դրանք պետք է ապահովեն, որ փոխհատուցումը կամ հատուցումը լինի իրական և արդյունավետ, համաչափ կրած վնասին և համոզիչ:</i>	
բ) ապահովում է, որ ազդարարներին և պաշտպանության ենթակա երրորդ կողմերին հասանելի լինեն վերականգնողական միջոցառումները,	21.6, պարբ. 94	<i>Բոլոր տեսակի հաշվեհարդարների համար պետք է լինեն վերականգնողական միջոցառումներ: 94-րդ պարբերության մեջ նշվում է, օրինակ, աշխատանքից ապատվելու, տեղափոխման</i>	

		կամ պաշտոնի իջեցման դեպքում աշխատանքի վերականգնումը և չեղյալ հայտարարված թույլտվության, լիցենզիայի կամ պայմանագրի վերականգնումը:	
գ) ապահովում է, որ ազդարարը և պաշտպանության ենթակա երրորդ անձինք ունենան միջանկյալ օգնության իրավունք և հասանելիություն մինչև դատական վճիռը (սպառնալիքները, փորձերը կամ շարունակական հաշվեհարդարի գործողությունները դադարեցնելու նպատակով),	21.6, պարբ. 96		
դ) ապահովում է, որ ազդարարը և պաշտպանության ենթակա երրորդ անձինք ունենան կրած վնասի ամբողջական փոխհատուցման իրավունք և հասանելիություն,	21.8, պարբ. 94	« Ամբողջական փոխհատուցում » նշանակում է, որ այն չպետք է սահմանափակվի օրենսդրությամբ և պետք է ներառի 94-րդ պարբերության հետևյալ օրինակները՝ փաստացի և ապագա ֆինանսական կորուստների փոխհատուցում, այլ տնտեսական վնասների փոխհատուցում, ինչպիսիք են՝ իրավական ծախսերը և բուժման	

		<i>ծախսերը, փոխհատուցում ոչ նյութական վնասի համար, ինչպիսիք են՝ գալն ու տառապանքը:</i>	
ե) երաշխավորում է, որ իրավունքներից և պաշտպանության միջոցներից հնարավոր չի զրկել կամ դրան սահմանափակել (օրինակ՝ պաշտպանությունը մերժելով կամ ազդարարին պատժելով) որևէ պայմանագրով, քաղաքականությամբ, զբաղվածության ձևով կամ պայմանով, ներառյալ նախավեճային արբիտրաժային համաձայնագրերը,	24, պարբ. 91	<i>Այն ընդգրկում է պայմանագրերում և գաղտնիության կամ չբացահայտման համաձայնագրերում սահմանված հավատարմության դրույթները:</i>	
զ) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժերի կիրառում ֆիզիկական կամ իրավաբանական այն անձանց նկատմամբ, որոնք ազդարարի և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար են տեսնում,	23.1(բ)		
է) չի ազդում աշխատողների կողմից իրենց ներկայացուցիչների կամ արհմիությունների հետ խորհրդակցելու իրենց իրավունքների իրականացման, ինչպես նաև նման խորհրդակցությունների արդյունքում առաջացած ցանկացած չարդարացված վնասակար միջոցից պաշտպանվելու, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունքի վրա:	3.4		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	

Օրենսդրությունը կարող է ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) ապահովում է, որ ցանկացած հաշվեհարդար չեղյալ համարվի: Մասնավորապես ազդարարները և պաշտպանության ենթակա երրորդ անձինք պետք է ունենան աշխատանքի վերականգնման իրավունք և հասանելիություն, օրինակ՝ տեղափոխման, պաշտոնանկության կամ պաշտոնի իջեցման դեպքում:		Այո: ՀՀ կառավարության 1148-Ն որոշման համաձայն՝ իրավասու մարմինը ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները, ինչպես նաև սպառիչ խորհրդատվություն է տրամադրում ազդարարին աշխատանքային օրենսգրքով աշխատողի կողմից պաշտպանության այլ միջոցներից օգտվելու կարգի և պայմանների մասին:
ii) ապահովում է, որ ազդարարները և պաշտպանության ենթակա երրորդ անձինք ունենան կրած վնասի համար լիարժեք ֆինանսական փոխհատուցման իրավունք և հասանելիություն (այսինքն՝ այն չսահմանափակվի օրենսդրությամբ, այլ սահմանվի տվյալ գործի հանգամանքներից ելնելով), ներառյալ՝ • փաստաբանական և միջնորդական վճարները, • անցյալ, ներկա և ապագա եկամուտների կորուստը և կարգավիճակը, • ցավը և տառապանքը (ինարավորության դեպքում, ներառյալ բժշկական ծախսերը, տեղափոխման ծախսերը կամ ինքնության պաշտպանությունը):	<i>ՈՒԺԵՂ վարկանիշ ձեռք բերելու համար օրենսդրությունը պետք է ապահովի ցանկացած հաշվեհարդարի բոլոր ուղղակի, անուղղակի և ապագա հետևանքների ամբողջական փոխհատուցումը, որը ապդարարող անձանց վերադարձնում է այն իրավիճակին, որում իրենք կլինեին, եթե չենթարկվեին հաշվեհարդարի:</i>	Մասնակի: Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 3.1 մասի՝ ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից: Իսկ ըստ հոդված 12-ի՝ ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու

		պարտականությունը կրում է պատասխանողը: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր ձևակերպում, ըստ որի աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել, եթե պարզվում է, որ «աշխատանքի պայմանները փոփոխվել են, կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ ՀՀ օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ»: Մինչդեռ հաշվեհարդարի տեսանկյունից աշխատանքից ազատելու պատճառներ ստեղծելը կարող է լինել նաև օրինական հիմքերով: ՀՀ ազդարարման օրենսդրության նման սահմանափակ ձևակերպումը և ընդհանրական դատական պաշտպանության իրավունքի սահմանումը, բայց և դատավարական օրենսգրքերով ազդարարման վերաբերյալ վնասների փոխհատուցման մեխանիզմների մասով նորմերի բացակայությունը դարձնում են հաշվեհարդարից պաշտպանվելու մեխանիզմները թույլ, իսկ օրենսդրությունը՝ «ոչ ազդարարակենտրոն»:
iii)	ապահովում է, որ ազդարարները և պաշտպանության ենթակա երրորդ անձինք իրավունք և հասանելիություն ունենան արդար դատաքննության անկողմնակալ հարթակի (այսինքն՝ դատարանի, ազդարարների մարմնի կամ վեճերի այլընտրանքային	Մասնակի: Միակ հարթակն, ըստ օրենսդրության, դատարաններն են: Համաձայն Օրենքի Հոդված 12-ի՝ ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի

լուծման մարմնի)՝ բողոքարկման լիիրավ իրավունքով,		իետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի իետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք, որից չեն օգտվում երրորդ անձինք: Բացի այդ, դատավարական օրենսգրքերը հատուկ կարգավորում ազդարարների գործերով չեն նախատեսում:
iv) ապահովում է, որ ազդարարները և պաշտպանության ենթակա երրորդ անձինք ունենան միջանկյալ օգնության իրավունք և հասանելիություն՝ մինչև դատական գործընթացի լուծումը սպառնալիքները, փորձերը կամ շարունակական հաշվեհարդարի գործողությունները դադարեցնելու նպատակով (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),	<i>Միջանկյալ օգնության տրամադրման պայմանները չպետք է չափազանց դժվար լինեն (ներառյալ կիրառելու որոշամիտ ժամկետը):</i>	Այո: Հատուկ պաշտպանության միջոցների կիրառումը և կարգը նախատեսված է Օրենքի հոդված 10-ով, և ընդհանուր կարգավորումը բխում է նաև ՀՀ կառավարության 560-Ն և 1148-Ն որոշումներից:
v) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր ազդարարի և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու դեպքում (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),		Մասնակի: Հստակ կարգավորում նախատեսված է միայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 501-ով, սակայն դա վերաբերում են միայն հանցագործություններին: Այլ համաչափ ու զսպող տույժեր Օրենքով հստակ սահմանված չեն:
vi) երաշխավորում է, որ իրավունքներից և պաշտպանության միջոցներից հնարավոր չլինի զրկել կամ դրանք սահմանափակել (օրինակ՝ պաշտպանությունը մերժելով կամ ազդարարին պատժելով) որևէ պայմանագրով, քաղաքականությամբ, զբաղվածության ձևով կամ պայմանով, ներառյալ նախավեճային արբիտրաժային համաձայնագրերը, պայմանագրերում կամ գաղտնիության կամ չբացահայտման համաձայնագրերում սահմանված հավատարմության դրույթները (այսինքն՝ վերը նշված (ե) չափանիշը):		Ոչ: Հստակ սահմանված չէ: Ըստ Օրենքի Հոդված 7-ի՝ եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին: Իսկ նույն հոդվածի մաս 10-ի համաձայն՝ եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության

		հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազությանը: Սա հստակ ու հասկանալի ձևով չի բացառում գաղտնիք պարունակող ազդարարման/բացահայտման պարագայում պատասխանատվության չենթարկելու իրավունք, մինչդեռ գաղտնիքի հրապարակումը և/կամ օգտագործումը Զրեական օրենսգրքով նախատեսված հանցանք է, որի համար անձը կարող է ենթարկվել պատասխանատվության:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
vii) Ներառում է ոչ-ֆինանսական վերականգնողական միջոցառումների ցուցողական ցանկ, ներառյալ այն միջոցները, որոնք կիրառելի են ազդարարողների նկատմամբ, ովքեր աշխատողներ չեն, ինչպիսիք են՝ • դադարեցված թույլտվության, լիցենզիայի կամ պայմանագրի վերականգնումը • անհատի դեմ դատական հայցը հետ վերցնելը • ցանկացած բացասական գրառման ջնջում, որը կարող էր որպես «դոսյե» օգտագործվել շանտաժի կամ հետագա հաշվեհարդարի համար:		Ոչ: Նման միջոցներ օրենսդրությամբ հստակ սահմանված չեն:
viii) Նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող) պատիժներ ազդարարին չպաշտպանելու և չաջակցելու համար,		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ով:
ix) Նախատեսում է անձնական պաշտպանության միջոցներ այն դեպքերում, երբ ազդարարող անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքը վտանգված է (ներառյալ կյանքի, մարմնի կամ գույքի նկատմամբ փաստացի կամ հավանական վտանգը):		Այո: Կարգավորվում է ՀՀ կառավարության 560-Ն որոշմամբ:

Համապատասխան աղբյուրներ՝

ԹԻ սկզբունքներ 12, 14, 20 և 21: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 24-25, 27-28 և 50-55: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 7-8:

Օրենսդրությունը կարող է համարվել **ՄԻՋԻՆ**, եթե այն...

x) **հիմնականում** համապատասխանում է վերը նշված (i) – (vi) չափանիշներին, **ԲԱՅՑ**

xi) ներառում է հետևյալ սահմանափակումներից մեկը (բայց ոչ ավելին, քան մեկը)՝

- ֆինանսական փոխհատուցումը սահմանափակվում է, **կամ**
- փոխհատուցման իրավունքի հիմքում ընկած բացասական հետևանքների շրջանակը նեղ է սահմանված, **կամ**
- առկա են խոչընդոտներ արդար դատական քննության և/կամ միջանկյալ օգնության համար (օրինակ՝ բարձր իրավաբանական ծախսեր, միջանկյալ օգնության տրամադրման պայմանները դժվար է բավարարել):

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

xii) չի համապատասխանում վերը նշված (i) – (vi) բոլոր չափանիշներին, **կամ**

xii) **Հիմնականում** համապատասխանում է վերը նշված (i) – (vi) բոլոր չափանիշներին, **բայց** նաև ներառում է վերը նշված (xi) չափանիշում նկարագրված 2 կամ ավելի սահմանափակումներ:

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը		
20.	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱԾՎԵՋԱՐԴԱՐԻ ԴԵՄ. ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՈՇ	ՈՐՔԱՆՈ՛Վ Ե ՕՐԵՆՄԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՈՇ ԴՆՈՒՄ ՈՉ ԲԱՐԵԽԻՂԵ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ՎՐԱ		
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)		
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե ազդարարի կողմից կրած վնասի հետ կապված վարույթում		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա)	ենթադրվում է, որ վնասը հասցվել է որպես հաշվեհարդար ազդարարման կամ հրապարակային բացահայտման համար, երբ	21.5		

ազդարարը պարզել է, որ ինքը հայտնել է կամ հրապարակել է այդ տեղեկատվությունը, որի հետևանքով կրել է վնաս,			
բ) վնասակար գործողություն ձեռնարկած անձի վրա է դրված բեռը՝ ապացուցելու, որ այդ գործողությունն «ունի պատշաճ կերպով հիմնավորված հիմքեր» վերը նշված (ա) չափանիշով նկարագրված դեպքերում:	21.5, պարբ. 93	«Պատշաճ կերպով հիմնավորված հիմքերը» ձևակերպումը 93-րդ պարբերությունում, պետք է մեկնաբանվի այնպես, որ դա «որևէ կերպ կապված չէ ազդարարման կամ հանրային բացահայտման հետ»:	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա) ● ● ●			
Օրենսդրությունը կարող է ՌԻՑԵՂ համարվել, եթե ազդարարի կողմից կրած վնասի հետ կապված վարույթում...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) ենթադրվում է, որ վնասը հասցվել է ազդարարման կամ հրապարակային բացահայտման համար հաշվեհարդարի հետևանքով, երբ ազդարարը հաստատել է կապը ազդարարման և իր վնաս կրելու միջև (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Այո: Ըստ Օրենքի հոդված 12-ի մաս 4-ի՝ ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Սա ենթադրում է, որ ազդարարի կողմից դատական պաշտպանության դիմելիս, գործում է ազդարարման հետ կապված վնասակար գործողություն կատարելու կանխավարկածը:	
ii) վնասակար գործողության համար պատասխանատու անձի վրա է դրված բեռը՝ պարզ և համոզիչ կերպով ապացուցել, որ վնասակար միջոցը որևէ կերպ կապված կամ դրդված չի եղել ազդարարման կամ բացահայտման հետ վերը նշված (i) չափանիշով		Այո: Ըստ Օրենքի հոդված 12-ի մաս 4-ի՝ ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:	

Նկարագրված դեպքերում:		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻԺԵՂ համարվել, եթե ազդարարի կողմից կրած վնասի հետ կապված վարույթում...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
iii) Ենթադրվում է, որ ազդարարը բավարարում է պաշտպանություն ստանալու պայմաններին:	Եթե վնասակար միջոցառման համար պատասխանատու անձը վիճարկում է այս ենթադրությունը, այդ անձը պետք է կրի բեռը՝ ապացուցելու, որ ազդարարը չի բավարարում պաշտպանության որակավորման պայմանները (ինչպես նկարագրված է 5-րդ ցուցանիշում):	Այո:Ըստ Օրենքի Հոդված 12-ի՝ 1. Ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: 2. Ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: 3. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 4. Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 8: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 55-56: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 7:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ , եթե այն...		
iv) համապատասխանում է վերը նշված (i) չափանիշին, ԲԱՅՑ		
v) չի համապատասխանում վերը նշված (ii) չափանիշին:		
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ , եթե այն...		
vi) չի համապատասխանում վերը նշված (i) և (ii) չափորոշիչներին:		

N	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշին վերաբերող հարցը
21.	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԳԱՇՎԵՅԱՐԴԱՐԻ ԴԵՄ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՐԱԺԱՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ԶԱՄԱՐ	ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՈՂ
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) սահմանում է, որ ազդարարող անձինք որևէ տեսակի պատասխանատվություն չեն կրում կապված տեղեկատվության բացահայտման (իրավական կամ պայմանագրային) սահմանափակումների հետ ազդարարման կամ հրապարակային բացահայտման համար (Սրա հիմքում ընկած է այն պայմանը, որ նրանք ողջամիտ հիմքեր ունենին կարծելու, որ նման տեղեկատվության հաղորդումը կամ հրապարակայնությունը անհրաժեշտ է խախտումը բացահայտելու համար),	21.2, պարբ. 91	«Որևէ տեսակի պատասխանատվությունը» պետք է ներառի քաղաքացիական, քրեական, վարչական և աշխատանքային պատասխանատվությունը: Ինչ վերաբերում է ներքին և արտաքին ազդարարումներին, ապա վերջին պայմանը (ողջամիտ հիմքեր...) չի համապատասխանում լավագույն փորձին (տե՛ս ստորև՝ F(i) չափանիշը): Ուստի, ազգային օրենսդրության անհամապատասխանությունը Դիրեկտիվին այս առումով պետք չէ ընդգծել:

բ) սահմանում է, որ ազդարարները պատասխանատվություն չեն կրում հաղորդվող կամ հրապարակայնորեն բացահայտված տեղեկատվության ձեռքբերման կամ հասանելիության համար (Սրա հիմքում ընկած է այն պայմանը, որ դա չի հանդիսացել առանձին (ինքնուրույն) քրեական հանցագործություն),	21.3, պարբ. 92	<i>«Առանձին» բառը պետք է ընկալվի այնպես, որ այն «բացարձակապես կապ չունի ազդարարելու կամ բացահայտելու կարողության հետ»:</i> <i>92-րդ պարբերությունը պարզաբանում է, որ պատասխանատվությունից ազատումը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ ազդարարները.</i> <i>• պատճենում են փաստաթղթեր, որոնց ունեն օրինական հասանելիություն, կամ դրանք հեռացնում են իրենց կազմակերպության տարածքից՝ խախտելով պայմանագրային կամ այլ դրույթներ, որոնք սահմանում են, որ համապատասխան փաստաթղթերը կազմակերպության սեփականությունն են,</i>	
---	-----------------------	--	--

		մուտք են գործում աշխատակցի էլեկտրոնային փոստ կամ ֆայլեր, որոնք սովորաբար չեն օգտագործում իրենց աշխատանքի շրջանակներում, լուսանկարում են իրենց կապմակերպության տարածքը կամ մուտք են գործում այն վայրերը, որտեղ նրանք սովորաբար մուտք չունեն:	
գ) սահմանում է, որ ազդարարող անձինք որևէ տեսակի պատասխանատվություն չեն կրում դատական վարույթներում հաղորդումների կամ հրապարակային բացահայտումների արդյունքում (Սա ներառում է զրպարտության, հեղինակային իրավունքի խախտման, գաղտնիության խախտման, տվյալների պաշտպանության կանոնների խախտման, առևտրային գաղտնիքների բացահայտման կամ մասնավոր, հանրային կամ կոլեկտիվ աշխատանքային օրենսդրության վրա հիմնված փոխհատուցման պահանջների իրավական գործընթացները),	21.7	«Որևէ տեսակի պատասխանատվությունը» պետք է ներառի քաղաքացիական, քրեական, վարչական և աշխատանքային պատասխանատվությունը: Ինչ վերաբերում է ներքին և արտաքին ազդարարումներին, ապա վերջին պայմանը (ողջամիտ հիմքեր...) չի համապատասխանում	

		լավագույն փորձին (տե՛ս ստորև՝ F(i) չափանիշը): Ուստիև, ապագային օրենսդրության անհամապատասխանությունը Դիրեկտիվին այս առումով պետք չէ ընդգծել:	
դ) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր, որոնք կիրառելի են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ՝ ազդարարների և պաշտպանության ենթակա երրորդ անձանց դեմ չարամիտ վարույթ (vexatious litigation - իրավական գործողություն է, որը հարուցվում է բացառապես հակառակորդին հալածելու կամ ենթարկելու համար, այն կարող է ունենալ առաջնային անլուրջ հայցադիմումի ձև կամ կարող է լինել անհիմն միջնորդությունների կրկնվող, ծանրաբեռնված և անհիմն ներկայացում այն հարցում, որն այլապես գործի արժանի պատճառ է) հարուցելու համար:	23.1(գ)		
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ե) սահմանել, որ դատական վարույթում վարույթ հարուցող անձը պետք է կրի բեռն՝ ապացուցելու, որ ազդարարը չի բավարարում իրեն	պարբ. 97	Սա լավագույն պրակտիկան է և պետք է խրախուսվի:	

պատասխանատվությունից ազատելու պայմաններին:			
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) սահմանում է, որ ազդարարող անձինք որևէ տեսակի պատասխանատվություն (իրավական կամ պայմանագրային) չեն կրում ազդարարման կամ հրապարակային բացահայտման համար Հրապարակային բացահայտումների դեպքում տեղեկության հրապարակման իրավական սահմանափակումների առկայությամբ պատասխանատվությունից ազատելը կարող է պայմանավորված լինել այն բանով, որ ազդարարը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ նման տեղեկության հրապարակումն անհրաժեշտ է եղել խախտումը բացահայտելու համար (այսինքն, որ բացահայտումը սահմանափակված է եղել օրինախախտումը բացահայտելու համար ողջամտորեն անհրաժեշտ տեղեկության քանակով):	<i>5-րդ ցուցանիշում նկարագրված պաշտպանության պայմանների և շեմերի ապահովումը, բավարար է պատասխանատվությունից ազատելու համար: Որևէ լրացուցիչ պայման չպետք է պահանջվի:</i> <i>Հնարավոր բացառությունը վերաբերում է հակառակին: Այն</i> <i>չի տարածվում ներքին և արտաքին ազդարարումների վրա,</i> <i>կիրառվում է միայն տեղեկության բացահայտման սահմանափակումների մասով,</i> <i>չի տարածվում</i>	Մասնակի: Օրենքի Հոդված 10-ը սահմանում է, որ 3.3. Ազդարարը չի կարող ենթարկվել որևիցե պատասխանատվության ազդարարման համար, բացառությամբ եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ: Յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առ ոչինչ է: Այնուամենայնիվ, հանցակազմ կարող է պարունակել պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության բացահայտման հետևանքով, քանի որ այդ ոլորտը հստակ կարգավորված չէ ազդարարման օրենսդրությամբ:	

	տեղեկության բացահայտման պայմանագրային սահմանափակումների վրա:	
ii) սահմանում է, որ ազդարարները անձեռնմխելի են կարգապահական և իրավական վարույթներից (ներառյալ զրպարտության, հեղինակային իրավունքի և տվյալների պաշտպանության հետ կապված), և որ ազդարարը կարող է հիմնվել հաղորդման կամ հրապարակային բացահայտման վրա գործը կարճելու համար:	Անձեռնմխելիությունից օգտվելու համար բավարար է 5-րդ ցուցանիշում նկարագրված պաշտպանության պայմանների և շեմերի ապահովումը:	Մասնակի: Օրենքի 3-րդ կարգ 10-ի դրույթները նախատեսում են նման պաշտպանություն, սակայն դա չի պաշտպանում հետագայում գործը կարճվելուց հետո զրպարտության հիմքով ազդարարի դեմ հայց ներկայացնելու դեպքում:
Հրապարակային բացահայտումների դեպքում տեղեկատվության հրապարակման իրավական սահմանափակումների առկայությամբ պատասխանատվությունից ազատելը կարող է պայմանավորված լինել այն բանով, որ ազդարարը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ նման տեղեկատվության հրապարակումն անհրաժեշտ է եղել խախտումը բացահայտելու համար (այսինքն, որ բացահայտումը սահմանափակված է եղել օրինախախտումը բացահայտելու համար ողջամտորեն անհրաժեշտ տեղեկության քանակով):	Ոչ մի լրացուցիչ պայման չպետք է պահանջվի: Հնարավոր բացառությունը վերաբերում է հակառակին: Այն • չի տարածվում ներքին և արտաքին ապդարարումների վրա, • տարածվում է միայն կարգապահական և իրավական գործընթացների վրա՝ կապված տեղեկության բացահայտման (իրավական) սահմա- նափակումների հետ:	

iii) սահմանում է, որ դատական վարույթում վարույթ հարուցող անձը պետք է ապացուցի, որ ազդարարող անձը չի համապատասխանում իր պատասխանատվությունից ազատվելու պայմաններին (այսինքն՝ վերոնշյալ (ե) չափանիշը),		Ոչ: Հստակ կարգավորում նախատեսված չէ:
iv) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր այն անձանց և կազմակերպությունների համար, ովքեր անհիմն կարգապահական կամ իրավական վարույթ են հարուցում ազդարարի նկատմամբ:		Մասնակի: Պատասխանատվություն նախատեսող միակ հստակ մեխանիզմը ՀՀ քրեական օրենսգրքի Հոդված 501-ն է: Որպես այդպիսին կարող է համարվել նաև Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի Հոդված 41.5-ը՝ Ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելը, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը, հարուցված վարույթի զաղտնիությունը չապահովելը, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռելը, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունն ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը:

Համապատասխան աղբյուրներ՝
ԹԻ սկզբունքներ 10: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 25-26: ԹԻ քաղաքականության փաստաթուղթ, էջ 6:

Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...

- v) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) չափանիշին, **ԵՎ**
vi) լիովին կամ մեծ մասամբ համապատասխանում է վերը նշված (ii) չափանիշին (այսինքն՝ սահմանում է, որ ազդարարը կարող է հիմնվել խախտումների մասին հաղորդման կամ հրապարակային բացահայտման վրա՝ **որպես պաշտպանություն** իրավական կամ կարգապահական վարույթում, **գործը կարճելու համար**):

Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...

- vii) չի համապատասխանում առնվազն վերը նշված (v) և (vi) չափանիշներին:

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
22. ԱՇԴԱՐԱՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		ՈՐՔԱՆՈ՞Վ Ե ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՇԴԱՐԱՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ, ՈՐԻՆ ԿԵՐԱԳՐՎՈՒՄ Ե ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄԸ)	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...		Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում
ա) ապահովում է, որ ազդարարման սուբյեկտները լիովին օգտվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքից, ինչպես նաև անմեղության կանխավարկածից և պաշտպանության իրավունքներից, ներառյալ լսելու և իրենց գործին ծանոթանալու իրավունքը,		22.1 16.2	Այս չափանիշը պետք է ընթերցվի 16-րդ հոդվածի հետ միասին, քանի որ նրանց թղթապանակ մուտք գործելը կարող է բացահայտել ազդարարի ինքնությունը (ուղղակի կամ անուղղակի տեղեկության

		միջոցով, որից ինքնությունը կարող է պարզվել): Ազդարարի ինքնությունը կարող է բացահայտվել միայն այն դեպքում, երբ դրա համար կա իրավական պարտավորություն, և այդպիսի պարտավորությունը պետք է սահմանափակվի ազգային իրավասու մարմինների կողմից իրականացվող հետաքննությունների կամ դատական գործընթացների համատեքստով և պետք է լինի անհրաժեշտ և համաչափ, այդ թվում՝ նկատի առնելով ազդարարման սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը:	
բ) պահանջում է իրավասու մարմիններից ապահովել, որ ազգային օրենսդրության համաձայն, ազդարարման սուբյեկտների ինքնությունը պաշտպանված լինի այնքան ժամանակ, քանի դեռ հետաքննությունը շարունակվում է,	22.2		

գ) ապահովում է, որ արտաքին ուղիների նախագծմանը, անձնական տվյալների մշակմանը և ազդարարների ինքնության պաշտպանությանը վերաբերող կանոնները կիրառելի լինեն նաև ազդարարման սուբյեկտների ինքնության պաշտպանության համար,	22.3		
դ) նախատեսում է միջոցներ՝ փոխհատուցելու վնասը, որն առաջացել է գիտակցաբար կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ բացահայտ հրապարակելու հետևանքով,	23.2	<i>Ազդարարների պաշտպանության օրենսդրությունն ինքնին նման միջոցներ նախատեսելու կարիք չունի և կարող է պարզապես հղում կատարել գործող ազգային օրենսդրությանը:</i>	
ե) նախատեսում է արդյունավետ, համաչափ և զսպող տույժեր գիտակցաբար կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ բացահայտ հրապարակելու համար:	23.2	<i>Ազդարարների պաշտպանության օրենսդրությունն ինքնին կարիք չունի ներառելու նման դրույթ, քանի որ գիտակցաբար կեղծ հաղորդման կամ բացահայտման դեպքում ազդարարը չի համապատասխանում պաշտպանության պահանջներին և, հետևաբար, պետք է կիրարկվի կեղծ իայտարարություններ</i>	

		անելուն վերաբերող ազգային օրենսդրությունը (օրինակ՝ պրպարտության մասին օրենքը):	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
i) ապահովում է, որ ազդարարման սուբյեկտները անձինք օգտվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքից, ինչպես նաև անմեղության կանխավարկածից և պաշտպանության իրավունքներից, ներառյալ լսելու և իրենց գործին ծանոթանալու իրավունքը՝ հավասարակշռելով ազդարարին հաշվեհարդարից պաշտպանության և վերջինիս ինքնությունը գաղտնի պահելու պարտավորության հետ,		Ազդարարի ինքնությունը կարող է բացահայտվել միայն այն դեպքում, երբ դրա համար կա իրավական պարտավորություն, և այդպիսի պարտավորությունը պետք է սահմանափակվի ազգային մարմինների կողմից հետաքննության կամ դատական գործընթացների համատեքստով և պետք է լինի անհրաժեշտ ու համաչափ , այդ թվում՝ ազդարարման սուբյեկտների պաշտպանության իրավունքները ապահովելու նպատակով (տե՛ս վերը նշված 14-րդ ցուցանիշում):	Այո: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 18-ը սահմանում է անմեղության կանխավարկածը:

ii) պահանջում է իրավասու մարմիններից ապահովել, որ ազգային օրենսդրության համաձայն, ազդարարման սուբյեկտների (այն անձանց, ում մեղադրում են հանրային շահին վնաս պատճառելու մեջ) անձանց ինքնությունը պաշտպանված լինի այնքան ժամանակ, քանի դեռ հետաքննությունը շարունակվում է (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Այո: Գործում են ՀՀ քրեական դատավարության ընդհանուր սկզբունքները:
iii) ապահովում է, որ արտաքին ուղիների նախագծմանը, անձնական տվյալների մշակմանը և ազդարարների ինքնության պաշտպանությանը վերաբերող կանոնները կիրառելի լինեն նաև մեղադրվող անձանց ինքնության պաշտպանության համար (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),		Մասնակի: Ազդարարման օրենսդրությամբ գործում է վարույթի գաղտնիությունը:
iv) նախատեսում է միջոցներ փոխհատուցելու վնասը, որն առաջացել է գիտակցաբար կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ հրապարակելու հետևանքով (այսինքն՝ վերը նշված (դ) չափանիշը),		Այո: Կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 479-ով. Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը և Հոդված 504-ով՝ Սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը, որի դիսպոզիցիան ներառում է քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք տալը: Այնուամենայնիվ, հստակ չէ, թե ազդարարումը որ վարույթով է որակվելու:

v) երաշխավորում է, որ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքում, եթե գիտակցաբար հաղորդել կամ հրապարակել է կեղծ տեղեկություններ,		Այո: Գործում են քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնները, այդ թվում արդար դատաքննության իրավունքը:
vi) ապահովում է, որ գիտակցաբար կեղծ հաղորդում տալու կամ բացահայտելու համար (ազդարարների պաշտպանության օրենսդրության կամ այլ օրենսդրության համաձայն, ինչպիսին է զրպարտության մասին օրենքը) պատիժները լինեն համաչափ և ոչ շատ խիստ, որպեսզի զսպող գործոն չդառնան իրական ազդարարողների համար,		Մասնակի: Քրեադատավարական ու քրեական օրենսգրքերին համապատասխան խիստ են, ավելի նվազ պատասխանատվության միջոց ազդարարների համար նախատեսված չէ:
vii) ապահովում է, որ այն դեպքում, երբ նախատեսվում են պատիժներ գիտակցաբար կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ հրապարակելու համար, դրանք չլինեն ավելի խիստ, քան գործող ազգային օրենսդրությամբ նախատեսված պատիժները՝ կապված կեղծ հայտարարություններ (օրինակ՝ զրպարտության մասին օրենքով) անելու հետ,	<i>Ազդարարների պաշտպանության մասին օրենսդրությունն ինքնին կարիք չունի տույժեր նախատեսելու կեղծ տեղեկություններ գիտակցաբար տեղեկացնելու կամ հրապարակայնորեն բացահայտելու համար, քանի որ նման դեպքում ազդարարը չի որակավորվում պաշտպանության համար և, հետևաբար, կեղծ հայտարարություններ անելու վերաբերյալ գործող ազգային օրենսդրությունն է (օրինակ՝ զրպարտության մասին օրենքը) կիրառվում:</i>	Մասնակի: Ազդարարի կողմից կեղծ տեղեկատվություն հայտնելու համար հատուկ պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն:

viii) սահմանում է, որ գիտակցաբար կեղծ հաղորդում տալու կամ հրապարակելու հետ կապված դեպքերում բեռն ընկնում է այդ պնդումը ներկայացնող անձի վրա՝ ապացուցելու, որ ազդարարող անձը հաղորդման կամ հրապարակային բացահայտման պահին տեղյակ էր, որ տեղեկատվությունը կեղծ է:	Այո: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 18-ի համաձայն՝ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չեն ապացուցել իրենց անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրող կողմը:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 9: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 14-17: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 6-7:	
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻԶԻՆ, եթե այն...	
ix) համապատասխանում է վերը նշված (i) – (v) չափանիշներին,	
x) համապատասխանում է վերը նշված (vi) – (viii) չափանիշներից միայն մեկին:	
Օրենսդրությունը կարող է համարվել ԹՈՒՅԼ, եթե այն...	
xi) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) – (v) չափանիշներին, ԿԱՄ	
xii) համապատասխանում է վերը նշված (i) – (v) չափանիշներին, բայց չի համապատասխանում վերը նշված (vi) – (viii) չափանիշներից ոչ մեկին:	

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
23. ՏՈՒՅԺԵՐ		ՈՐՔԱՆՈ՞Վ Ե ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՀԱԾՎԵՅԱՐԴԱՐԻ, ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼՆԻ ՀԱՄԱՐ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվի պահանջներին, եթե այն...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) Նախատեսում է տույժեր ազդարարմանը խոչընդոտելու կամ այն խոչընդոտելու փորձի համար,	23.1(ա)		
բ) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար,	23.1(բ)		
գ) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց և պաշտպանության ենթակա երրորդ անձանց դեմ չարամիտ (vexatious litigation՝ հայց, որը հարուցվում է բացառապես հակառակորդին հալածելու կամ ենթարկելու համար: Այն կարող է ունենալ առաջնային անլուրջ հայցադիմումի ձև կամ կարող է լինել անհիմն միջնորդությունների կրկնվող, ծանրաբեռնված և անհիմն ներկայացում այն հարցում, որն այլապես գործի արժանի պատճառ է) հարուցելու համար,	23.1(գ)		
դ) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց ինքնության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը խախտելու համար,	23.1(դ)		

ե) ապահովում է վերոհիշյալ տույժերի կիրառումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ,	23.1		
զ) ապահովում է, որ վերոհիշյալ տույժերը լինեն արդյունավետ և համաչափ:	23.1		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԺԵՂ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)	
i) Նախատեսում է տույժեր ազդարարմանը խոչընդոտելու կամ դրան խոչընդոտելու փորձի համար (այսինքն՝ վերը նշված (ա) չափանիշը),		Ոչ: Հստակ պատասխանատվության միջոց ազդարարմանը խոչընդոտելու համար չկա:	
ii) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց և պաշտպանության ենթակա երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար (այսինքն՝ վերը նշված (բ) չափանիշը),		Մասնակի: Նախատեսվում է քրեական պատասխանատվություն Քրեական օրենսգրքի հոդված 501-ով:	
iii) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց և պաշտպանության ենթակա երրորդ անձանց դեմ չարամիտ վարույթ (vexatious litigation) հարուցելու համար (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը),		Ոչ: Նման կարգավորում առկա չէ:	
iv) Նախատեսում է տույժեր ազդարարող անձանց ինքնության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը խախտելու համար (այսինքն՝ վերը նշված (դ) չափանիշը),		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 41.5-ով:	
v) Նախատեսում է տույժեր տվյալ ժամանակահատվածում ներքին ազդարարման մեխանիզմների ներդրման պարտավորությունը չկատարելու համար,	<i>Տույժերը պետք է կիրառվեն նաև օրենքով կամ կանոնակարգով նախատեսված նվազագույն</i>	Մասնակի: Գործում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 41.5-ը՝ ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման	

	չափանիշներին չհամապատասխանելու դեպքում:	կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը չհաշվառելը, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելը, հարուցված վարույթի գաղտնիությունը չապահովելը, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու հնարավորություն չընձեռելը, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ չտրամադրելը, հաղորդման իսկությունն ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով միջոցներ չձեռնարկելը, իսկ ՀՀ կառավարության 1148-Ն որոշումը պարտադրում է միայն պետական կառավարման մարմիններին, իսկ, անկախ և ինքնավար մարմիններին ու ՏԻՄ-երին միայն առաջարկում է ներդնել ազդարարման հարցերով պատասխանատուների ինստիտուտը: Մասնավոր ոլորտում այդ հարցն առհասարակ կարգավորված չէ:
vi) նախատեսում է տույժեր ազդարարումները չհետաքննելու համար,		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ով:
vii) ապահովում է, որ վերոնշյալ տույժերը լինեն արդյունավետ, համաչափ (այսինքն՝ վերը նշված (գ) չափանիշը):		Մասնակի: Պրակտիկա գոյություն չունի:

Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
viii) Նախատեսում է տույժեր ազդարարին չպաշտպանելու համար,		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ով:
ix) Նախատեսում է տույժեր ողջամիտ ժամկետում ազդարարին հետագա գործողությունների վերաբերյալ հետադարձ կապ չտրամադրելու համար,		Այո: Կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 41.5-ով, որի համար նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:
x) Նախատեսում է տույժեր ազդարարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը և հեշտ հասանելիությունը չապահովելու համար:		Ոչ: Նման դրույթ առկա չէ:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 29: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 20, 28-30, 33, 47 և 60-62: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 9-11:		
Օրենսդրությունը կարող է համարվել Միջին, եթե այն...		
xi) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) - (iv) և (vii) չափանիշներին:		
Օրենսդրությունը կարող է համարվել Թուֆ, եթե այն...		
xii) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) - (iv) և (vii) չափանիշներին, անկախ նրանից, թե արդյոք (v) և (vi) չափանիշները բավարարված են:		

IV. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
24. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՆԱՅՈՒՄ		ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) Նախատեսել հետևյալ տվյալների հավաքագրումը ազգային մակարդակում • իրավասու մարմինների կողմից ստացված ազդարարումների քանակը, • նման ազդարարումների արդյունքում հարուցված հետաքննությունների և վարույթների քանակը և դրանց արդյունքը, • եթե առկա է, ենթադրյալ ֆինանսական վնասը և հետաքննություններից և վարույթներից հետո վերականգնված գումարները՝ կապված հաղորդված խախտումների հետ:	27.2	Դիրեկտիվը չի պահանջում, որ անդամ պետությունները հավաքագրեն այս տվյալները: Բայց եթե անդամ պետությունը դա անում է, և տվյալները հասանելի են կենտրոնական մակարդակում, ապա անդամ պետությունը պետք է ամեն տարի դրանք ներկայացնի Եվրոպական հանձնաժողով: Նման տվյալների կենտրոնական հավաքագրումը լավագույն	

		պրակտիկան է և պետք է իրախուսվի:	
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՌԻԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
i) առանձին օրենսդրություն է (որը պարունակում է ազդարարման ազգային իրավական շրջանակը),	Ինքնուրույն օրենսդրությունը և՛ հստակություն, և՛ համահունչ բնույթ կհաղորդի ազդարարներին պաշտպանող իրավական դաշտին:	Ինքնուրույն օրենսդրությունը կարող է յրացվել կանոնակարգերով և վարչական դրույթներով:	Այո: Գոյություն ունի «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք և ՀՀ Կառավարության 1148-Ն որոշումը՝ որպես Օրենքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտ, որը նախատեսում է ազդարարման առանձին տեսակների համար պաշտպանության ընդհանուր միջոցները, վիճակագրության վարման կարգը և այլն:
ii) նախագծվել է՝ առանցքային շահագրգիռ կողմերի (ներառյալ աշխատողների կազմակերպությունները, բիզնես/գործատուների ասոցիացիաները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և գիտակրթական հանրույթը) հետ խորհրդակցելով,			Մասնակի: Օրենքի մշակման գործընթացում ապահովվել է որոշ մակարդակի ներառականություն:
iii) պահանջում է, որ վերը նշված (ա) չափանիշում սահմանված տվյալները հավաքվեն և հրապարակվեն ամեն տարի,			Այո: Նման կարգավորումը նոր է, և դեռևս տվյալների հավաքագրման ու հրապարակման պրակտիկա չկա: Ներկայում հրապարակված են միմիայն անանուն առցանց հարթակի միջոցով ստացվող տվյալները:

iv) պահանջում է ազդարարների պաշտպանության մասին օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների պաշտոնական պարբերական վերանայում (նման վերանայումները պետք է հրապարակվեն),		Ոչ: Հստակ կարգավորում նախատեսված չէ, բայց դա բխում է Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրից:
v) սահմանում է, որ վերանայման գործընթացը պետք է ներգրավի հիմնական շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ աշխատողների կազմակերպություններին, բիզնեսի/գործատուների ասոցիացիաներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և գիտակրթական հանրույթին:		Այո: Ընդհանուր դրույթ առկա է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով հանրային քննարկումների վերաբերյալ:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի Ուժեղ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանում է չափանիշներին (Այո/Ոչ)
vi) լրացուցիչ պահանջում է տվյալների հավաքագրում և տարեկան հրապարակում հետևյալի մասին՝ • պետական և մասնավոր հատվածներում խախտումների գերակշիռ դրսևորումները, • ազդարարման մեխանիզմների վերաբերյալ տեղեկացվածությունն ու դրանց նկատմամբ վստահությունը, • գործերի վարման համար պահանջվող ժամանակը,		Ոչ: Նման վիճակագրությունը վարելու ամբողջական պահանջ չկա:
vii) պահանջում է հանրային հաստատություններում ներքին ազդարարումների վերաբերյալ համանման տվյալների հավաքագրում և տարեկան հրապարակում:		Այո: Նման պահանջը բխում է ՀՀ կառավարության 1148-Ն որոշումից:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 24, 25 և 26: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 61-63 և 66-68: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 11:		
Օրենսդրությունը կարող է համարվել Միջին , եթե այն...		
viii) համապատասխանում է վերը նշված (i) չափանիշին ԵՎ		

ix) համապատասխանում է վերը նշված չորս չափանիշներից երկուսին (ii) –(v):

Օրենսդրությունը կարող է համարվել **ԹՈՒՅԼ**, եթե այն...

x) չի համապատասխանում առնվազն վերը նշված (viii) և (ix) չափանիշներին:

N Ցուցանիշի անվանումը		Ցուցանիշին վերաբերող հարցը	
25. ԱՉԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՄԵԿ ԱՆԿԱՆ ԱՉԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	
Ա. Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Բացի այդ, օրենսդրությունը կարող է (ըստ ցանկության)...	Առնչվող հոդված (ներ)	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ/Մասամբ)
ա) նախատեսել պաշտպանության միջոցների տրամադրում տեղեկատվական կենտրոնի կամ մեկ անկախ վարչական մարմնի միջոցով:	20.3		
Բ. Օրենսդրության գնահատումը լավագույն պրակտիկայի համեմատ		Ցուցանիշի վարկանիշ (Լավագույն պրակտիկա)	
Օրենսդրությունը կարող է ՈՒԺԵՂ համարվել, եթե այն...		Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
i) նախատեսում է մեկ անկախ ազդարարման պատասխանատու ազգային մարմին,			Ոչ: Նման կարգավորում չի օրենսդրության մեջ չկա:
ii) Ապահովում է՝ նման մեկ անկախ ազդարարող ազգային մարմինը տարբերվի և անկախ լինի իրավասու մարմիններից, որոնք ընթացք են տալիս արտաքին ազդարարումներին,			Ոչ: Ազդարարման հարցերով զբաղվող անկախ մարմին ՉՀ-ում գոյություն չունի:
iii) լիազորում է նման մարմինն խորհրդատվություն և աջակցություն տրամադրել ազդարարող անձանց՝ համաձայն վերը նշված 18-րդ ցուցանիշի (v) չափանիշի,			Մասնակի: Խորհրդատվական և իրավաբանական օգնություն տրամադրելու լիազորությունը Օրենքի 3-րդ հոդված 10-ով դրված է ՄԻՊ-ի վրա:

iv) լիազորում է նման իրավասու մարմինն ստանալ և հետաքննել հաշվեհարդարի վերաբերյալ բողոքները,		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
v) լիազորում է նման իրավասու մարմինն ստանալ և հետաքննել իրավասու մարմինների կողմից արտաքին ազդարարումների ոչ պատշաճ հետաքննության վերաբերյալ բողոքները,		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
vi) լիազորում է նման մարմինն ուղեցույց և խորհրդատվություն տրամադրել գործատուներին և իրավասու մարմիններին, թե ինչպես ստեղծել ազդարարման արդյունավետ մեխանիզմներ,		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
vii) լիազորում է նման մարմինն վերահսկելու և վերանայելու ազդարարների պաշտպանության մասին օրենքների և շրջանակների գործունեությունը, ներառյալ տվյալների հավաքագրման և հրապարակման միջոցով՝ ըստ 24-րդ ցուցանիշի,		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
viii) լիազորում է նման մարմինն բարձրացնել հանրային իրազեկվածությունը, որպեսզի խրախուսվի ազդարարների պաշտպանության դրույթների օգտագործումը և ազդարարման մշակութային ընդունելությունը:		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
Բացի այդ, օրենսդրությունը կարող է ավելի ՌԻԺԵՆ համարվել, եթե այն...	Պարզաբանում	Համապատասխանո՞ւմ է չափանիշներին (Այո/Ոչ)
ix) պարտավորեցնում է նման կառույցին պատվիրել պաշտպանական միջոցներ, երբ կա հաշվեհարդար, և կիրառել այդ միջոցները (այդ թվում՝ համապատասխան պատիժների միջոցով):		Ոչ: Նման մարմին ՉՀ-ում չկա:
Համապատասխան աղբյուրներ՝ ԹԻ սկզբունքներ 28: ԹԻ լավագույն պրակտիկայի ուղեցույց, էջ 58-65: ԹԻ դիրքորոշման փաստաթուղթ, էջ 11:		
Օրենսդրությունը կարող է համարվել ՄԻՋԻՆ, եթե այն...		

x) համապատասխանում է առնվազն վերը նշված (i) չափանիշին **ԵՎ**

xi) համապատասխանում է վերը նշված (ii) – (viii) չափանիշներից առնվազն երեքին:

Օրենսդրությունը կարող է համարվել թուֆ, եթե այն...

xii) չի համապատասխանում առնվազն վերը նշված (i) չափանիշին **ԿԱՄ**

xiii) համապատասխանում է վերը նշված (i) չափանիշին, **բայց** բավարարում է վերը նշված (ii) – (viii) չափանիշներից երեքից պակաս:

ՉԱՎԵԼՎԱԾ 2. Ազդարարման համակարգի հաջողված օրինակներ

Սլովակիայի ազդարարների պաշտպանության գրասենյակը

Ազդարարների պաշտպանության գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ) ստեղծվել է Սլովակիայի «Ազդարարների պաշտպանության մասին» թիվ 54/2019 օրենքի⁶⁴ հիման վրա՝ որպես բյուջետային կազմակերպություն, որը հաշվետու է Սլովակիայի Հանրապետության ազգային խորհրդին (խորհրդարանին): Այն անկախ պետական մարմին է համապետական լիազորություններով: Գրասենյակը պաշտոնապես սկսել է գործել 2021 թվականի սեպտեմբերի 2-ին: Նրա գործունեությունը կենտրոնացած է ազդարարների պաշտպանության վրա:

Գրասենյակը ստեղծվում է որպես ազգային իրավասություն ունեցող առանձին պետական կառավարման մարմին, որը պաշտպանում է ազդարարների իրավունքներն ու օրինական շահերը հասարակության գործունեությունը խաթարող գործողությունների մասին զեկուցելիս:

Գրասենյակը բյուջետային կազմակերպություն է: Միայն Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհուրդը (այսուհետ՝ «Ազգային խորհուրդ») կարող է օրացուցային տարվա ընթացքում կրճատել Գրասենյակի հաստատված բյուջեն:

Գրասենյակը որոշում է կայացնում պաշտպանության հարցերի վերաբերյալ, վերահսկում է օրենքի կիրառումը, ծանուցում է իրավասու մարմիններին հասարակության գործունեությունը խաթարող գործունեության հետ կապված հաշվեհարդարի ի հայտ գալու մասին, բարձրացնում է հասարակության և գործատուների իրազեկվածությունը հասարակության հաշվետվությունների և ազդարարների պաշտպանությանը խաթարող գործունեության մասին հարցեր, խորհրդատվական ծառայություններ է մատուցում գործատուներին՝ մշակելով ներքին կանոնակարգ և դրանց օրենսդրությանը համապատասխանության մեխանիզմ, տրամադրում է խորհրդատվական ծառայություններ և խորհրդատվություն՝ կապված հասարակության դեմ գործողությունների մասին հաշվետվությունների հետ. տալիս է փորձագիտական եզրակացություններ և մեթոդական ուղեցույցներ ազդարարների պաշտպանության վերաբերյալ, ապահովում է ազդարարման պատասխանատուների գործնական ուսուցում և վերապատրաստում, համագործակցում է պետական կառավարման մարմինների հետ օրենսդրության նախագծերի մշակման հարցում և խրախուսում է կենտրոնական կառավարման մարմիններին՝ դրանք փոխելու իրենց բացահայտումների և գիտելիքների հիման վրա, համագործակցում է Սլովակիայի Մարդու իրավունքների ազգային կենտրոնի և հասարակական կազմակերպությունների հետ ազդարարների պաշտպանության հարցերում, համագործակցում է Եվրոպական միության և այլ երկրների համապատասխան կառույցների և կազմակերպությունների հետ:

Գրասենյակը պարբերաբար գնահատում և իր կայքում հրապարակում է հասարակության գործունեությունը խաթարող գործողությունների ծանուցման և ազդարարների պաշտպանության կատարման հետ կապված տեղեկատվությունը, հրապարակում է

⁶⁴Whistleblower Protection Act of Slovakia (non-official translation) <https://transparency.sk/wp-content/uploads/2021/03/Slovak-Act-on-Whistleblowing-2019-1.pdf> (դիտված՝ 10.05.2024).

փաստաթղթեր, մասնագիտական հոդվածներ, իրավական և այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք վերաբերում են հասարակության գործունեությունը խաթարող և ազդարարման օրենսդրությամբ պաշտպանություն տրամադրող գործունեության մասին ծանուցմանը:

Գրասենյակն իր խնդիրներն իրականացնելու համար իրավասու է՝

- պահանջել անհրաժեշտ փաստաթղթերի, գրառումների և այլ փաստաթղթերի ներկայացում և ծանոթանալ դրանց բովանդակությանը,
- բացատրություններ պահանջել և վերանայել ազդարարման մշակման եղանակն ու արդյունավետությունը,
- նախագծուղացնել պետական մարմինների գլխավոր ներկայացուցիչներին ազդարարման անբավարար կամ սխալ մշակման մասին և փնտրել միջոցներ,
- նախագծուղացնել գործատուին, որ պլանավորված աշխատանքային ակտը կարող է խախտել օրենքի դրույթները,
- գործատուին խորհուրդ տալ ազդարարման օրենքին համապատասխանությունն ապահովելու միջոցները:

Գրասենյակն իրավունք ունի մասնակցել դատական վարույթի ընդհանուր կանոններին համապատասխան, եթե վեճի կողմերից մեկը ազդարարն է:

Պետական մարմիններն անհրաժեշտ աջակցություն են ցուցաբերում Գրասենյակին իր խնդիրների կատարման համար:

Գրասենյակը տարեկան մինչև մարտի վերջ ՍՀ Ազգային ժողովին է ներկայացնում հաշվետվություն իր գործունեության և նախորդ տարվա ազդարարների պաշտպանության կարգավիճակի մասին: Գրասենյակը հաշվետվությունը հրապարակում է իր կայքում: Մասնավորապես այդ զեկույցը ներառում է Գրասենյակի գործունեության արդյունքները և հայտնաբերված թերությունները վերացնելու առաջարկություններն ու առաջարկությունները:

Գրասենյակը իրեն հասցեագրված ազդարարումն անհապաղ հանձնում է իրավասու մարմին: Եթե ազդարարը պահանջում է պահպանել իր ինքնությունը, ապա Գրասենյակը պետք է տրամադրի այդ ազդարարումը՝ առանց ազդարարի ինքնությունը պարզելու:

Ազդարարի, ազդարարի մերձավոր անձի կամ ազդարարի ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ վրեժխնդիր արարքի դեպքում, որն իրականացվում է պետական լիազորությունների իրականացման համատեքստում, Գրասենյակն իրավասու է խնդրելու նման միջոցներ ընդունած պետական մարմինն որոշակի ժամկետում տալ իր կարծիքը այդ միջոցների հիմնավորվածության վերաբերյալ: Պետական մարմինը պետք է ուսումնասիրի միջոցառումների իրավունակությունն ու հիմնավորվածությունը, անհրաժեշտության դեպքում ձեռնարկի ուղղիչ գործողություններ և ծանուցի Գրասենյակին ձեռնարկված միջոցների մասին: Եթե պետական մարմինը չի կատարում իր պարտավորությունները, ապա Գրասենյակը այդ փաստի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում վերադաս մարմինն Եթե պետական մարմինը չունի վերադաս մարմին, Գրասենյակը նման տեղեկատվությունը ներկայացնում է Սլովակիայի Հանրապետության

կառավարություն, որը իրավասու է կիրառել հատուկ պատժամիջոց՝ կապված գործունեությանը խաթարող գործունեության ծանուցման հետ:

Գանայի ազդարարման համակարգը

Գանան ունի ազդարարների պաշտպանության օրենք, որը համարվում է Աֆրիկայում ամենաուժեղներից մեկը: 2006թվականին ընդունված «Ազդարարների մասին» օրենքը⁶⁵ իրավական պաշտպանություն և պաշտպանության միջոցներ է տրամադրում բոլոր այն անձանց, ովքեր հաղորդում են հանցագործության և չարաշահումների մասին՝ հանուն հանրային շահի: «Ազդարարների մասին» օրենքը համակարգվում է Մարդու իրավունքների և վարչական արդարադատության հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովը նաև ծառայում է որպես Գանայի հակակոռուպցիոն գործակալություն և օմբուդսմենի գրասենյակ: «Ազդարարների մասին» օրենքը իրավական պաշտպանություն է տրամադրում այն անձանց, ովքեր հայտնում են «անպատշաճության մասին»:

Օրենքի համաձայն՝ «անպատշաճությունը» ներառում է տնտեսական հանցագործությունները, օրենքի խախտումները, արդարադատության սխալները, հանրային ռեսուրսների յուրացումը և հանրային առողջության կամ շրջակա միջավայրին ուղղված վտանգները՝ անկախ նրանից, թե դրանք տեղի են ունեցել, թե կարող են տեղի ունենալ:

Ազդարարները օրինականորեն պաշտպանված են աշխատավայրում վրեժխնդրությունից, ներառյալ աշխատանքից ազատելը, կասեցումը, առաջխաղացման մերժումը, հարկադիր տեղափոխումը և ոտնձգությունները:

Պաշտպանության հավակնելու և ստանալու համար բացահայտումները պետք է կատարվեն բարեխղճորեն և այն համոզմունքով, որ տեղեկատվությունը ճշմարիտ է: Եթե ապացուցված չէ, որ ազդարարը գիտակցաբար կեղծ տեղեկատվություն է հրապարակել, ազդարարները պատասխանատվություն չեն կրում քաղաքացիական հայցերի կամ քրեական հետապնդման համար:

Տեղեկությունը կարող է հաղորդվել մարդկանց, հաստատությունների և կազմակերպությունների լայն շրջանակին, ներառյալ գործատուներին, ոստիկանությանը, գլխավոր դատախազին, խորհրդարանի անդամներին, նախարարներին, Հանձնաժողովին, ՉԼՄ-ների ազգային հանձնաժողովին, ղեկավարներին և կրոնական խմբերի ղեկավարներին: Անպատշաճության վերաբերյալ ձեռնարկված հետաքննությունը/վարույթը պետք է ավարտվի 60 օրվա ընթացքում:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ իրենք իրենց ազդարարման համար են զոհ դարձել կամ կարող են զոհ դառնալ, կարող են բողոք ներկայացնել Հանձնաժողովին: Հանձնաժողովը կարող է պահանջել նրանց, ովքեր հետապնդում են ազդարարին, դադարեցնել վնասակար գործողությունները: Հանձնաժողովի հրամաններն ունեն նույն ազդեցությունը, ինչ Բարձր

⁶⁵ Ghana, Whistleblower Act, 2006

[https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT.%20ACT%202006%20\(ACT%20720\).pdf?sequence=1&isAllowed=y](https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT.%20ACT%202006%20(ACT%20720).pdf?sequence=1&isAllowed=y) (դիտված՝ 11.09.2024).

դատարանի վճիռը: Եթե անձը չի ենթարկվում հրամանին, Հանձնաժողովը կարող է պահանջել դատարանի որոշում՝ անձին պարտավորեցնել կատարելու իր հրամանը:

Նրանք, ովքեր կարիք ունեն, կարող են ստանալ իրավաբանական օգնություն՝ դիմելով Հանձնաժողովին, որը գործը կուղարկի Իրավաբանական օգնության խորհուրդ կամ մեկ այլ հաստատություն: Տուժած ազդարարները կարող են փոխհատուցում պահանջել Բարձր դատարանում և, անհրաժեշտության դեպքում, կարող են ստանալ ոստիկանական պաշտպանություն:

Օրենքով ստեղծվել է նաև Ազդարարների պարգևատրման հիմնադրամ: Ազդարարը, ում հաղորդումները հանգեցնում են ձեռքարկության և դատապարտման, կարող է ստանալ վերականգնված գումարի 10 տոկոսը կամ գլխավոր դատախազի և ոստիկանության գլխավոր տեսուչի կողմից սահմանված գումարը: Սակայն 2021 թվականի դրությամբ փոխհատուցման այս մեխանիզմը երբեք չի գործարկվել: 2023 թվականի սեպտեմբերի 5-ին գլխավոր դատախազ Գոդֆրեդ Դեյմը հայտարարեց,⁶⁶ որ օգոստոսին ընդունվել է օրենք, որը փոփոխում է 2006 թվականի «Ազդարարների մասին» օրենքը՝ վերջապես ներառելով ազդարարների համար երկար սպասված պարգևատրման համակարգը: Դրան զուգահեռ, այն անձինք, ովքեր չեն պահպանում ազդարարի գաղտնիությունը, կամ ովքեր թաքցնում են հետաքննության ընթացքում ապացույցները, կարող են տուգանվել և նույնիսկ ազատազրկվել:

Հանձնաժողովի կազմում 2022 թվականին ստեղծվել է կոմիտե ազդարարների պաշտպանության ստանդարտ գործառնական ընթացակարգի մշակման համար՝ անդրադառնալով ազդարարման գործառնականացման ներկայիս համակարգերում առկա մարտահրավերներին և թույլ կողմերին և ապահովելով «Ազդարարների մասին» օրենքի առավել արդյունավետ կիրառումը:

⁶⁶Platform to Protect Whistleblowers in Africa, <https://www.pplaaf.org/country/ghana.html> (դիտված՝ 23.09.2024).

Գրականության ցանկ

Իրավական ակտեր

- ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված՝ 2021 թվականի մայիսի 5-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397>
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195774>
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194077>
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 1998 թվականի մայիսի 5-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193748>
- ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգիրք, ընդունված՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196891>
- ՀՀ սահմանադրական օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172136>
- ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», ընդունված՝ 2018 թվականի մարտի 21-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187324>
- ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192626>
- ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>
- ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», ընդունված՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190391>
- ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-L որոշում «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>
- ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180199>
- ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N 560-Ն որոշում «Քրեական վարույթում և վարույթից դուրս պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=162220>
- ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշում «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444>
- ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշում «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի

N296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=126002>

Հետազոտություններ

- ԹԻՀԿ, «Ազդարարի ուղեցույց», Երևան, 2019 թ.,
<https://transparency.am/files/publications/1550597454-0-784746.pdf>
- ԹԻՀԿ, Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում, Էթիկայի հանձնաժողովներ Բարեվարքության հարցերով կազմակերպիչներ Ազդարարման հարցերով պատասխանատուներ, զեկույց, Երևան, 2021 թ., <https://transparency.am/hy/publication/244>
- ԹԻՀԿ, Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում, հետազոտական զեկույց, Երևան, 2022 թ.,
<https://transparency.am/hy/publication/261>
- Հայ իրավաբանների ասոցիացիա, Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում, փորձագիտական վերլուծություն, Երևան, 2023 թ., <https://armla.am/51427.html>
- Հայ իրավաբանների ասոցիացիա, Ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմների, անանուկության եվ և անվտանգության երաշխիքների կատարելագործում եվ և խրախուսման մեխանիզմների ներդրում, փորձագիտական վերլուծություն, Երևան, 2023 թ., <https://armla.am/51427.html>

Միջազգային պայմանագրեր և զեկույցներ

- Council of Europe, Civil Law Convention on Corruption, Strasbourg, 4.11.1999,
<https://rm.coe.int/168007f3f6>
- Council of Europe, Criminal Law Convention on Corruption, Strasbourg, 27.01.1999,
<https://rm.coe.int/168007f3f5>
- GRECO, Fifth evaluation round, Preventing corruption and promoting integrity in central governments (top executive functions) and law enforcement agencies, Evaluation report,
<https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680af5d35>
- OECD, Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia, The Istanbul Anti-Corruption Action Plan, 2024, https://www.oecd-ilibrary.org/governance/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fb158bf9-en
- United Nations Convention against Corruption (UNCAC), 31.10.2003,
https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026_E.pdf

Միջազգային ուղեցույցներ և օտարերկրյա օրենսդրություն

- A Best Practice Guide for Whistleblowing Legislation, https://transparency.eu/wp-content/uploads/2018/03/2018_GuideForWhistleblowingLegislation_EN.pdf
- Assessing Whistleblowing Legislation, Methodology and guidelines for assessment against the EU Directive and best practice, 2020, https://images.transparencycdn.org/images/2020_Toolkit_AssessingWhistleblowingLegislation_EN.pdf
- Council of Europe, Protection of Whistleblowers, Recommendation CM/Rec(2014)7 and Explanatory Memorandum (2014) , <https://rm.coe.int/16807096c7>
- Council of Europe, Protection of Whistleblowers: A Brief Guide for Implementing a National Framework (2015), <https://rm.coe.int/16806fffbcc>
- EU, Directive 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law (Whistleblower Protection Directive), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32019L1937>
- Ghana, Whistleblower Act, 2006, [https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT,%20ACT%202006%20\(ACT%20720\).pdf?sequence=1&isAllowed=y](https://ir.parliament.gh/bitstream/handle/123456789/2054/WHISTLEBLOWER%20ACT,%20ACT%202006%20(ACT%20720).pdf?sequence=1&isAllowed=y)
- International Principles for Whistleblower Legislation. Best Practices for Laws to Protect Whistleblowers and Support Whistleblowing in the Public Interest, <https://www.transparency.org/en/publications/international-principles-for-whistleblower-legislation>
- Malta, Protection of the Whistleblower Act 2013, www.justiceservices.gov.mt/DownloadDocument.aspx?app=lp&itemid=25151&l=1
- New Zealand, Protected Disclosures (Protection of Whistleblowers) Act 2022, <https://legislation.govt.nz/act/public/2022/0020/latest/whole.html>
- South Korea, Public Interest Whistleblower Protection Act, As amended by Act of 18 April 2017. An English translation of the entire act can be found at https://elaw.klri.re.kr/eng_service/lawView.do?hseq=43327&lang=ENG
- United Nations Office on Drugs and Crime (UNODC), Resource Guide on Good Practice in the Protection of Reporting Persons (2015), https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741_Person_Guide_eBook.pdf
- Whistleblower Protection Act of Slovakia (non-official translation) <https://transparency.sk/wp-content/uploads/2021/03/Slovak-Act-on-Whistleblowing-2019-1.pdf>

Կայքեր

- ՀՀ Ազգային ժողով, www.parliament.am
- ՀՀ կառավարություն, www.gov.am
- ՀՀ արդարադատության նախարարություն, <https://www.moj.am/>
- ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, www.e-draft.am
- ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգ, www.arlis.am

- ՀՀ պաշտոնական հայտարարություններ, www.azdarar.am
- Ազդարարման միասնական հարթակ, www.azdararir.am
- Հայ իրավաբանների ասոցիացիայի կողմից գործարկված ազդարարման առցանց հարթակ, www.haytnir.am
- Այլ գերատեսչական կայքեր